ՊՈՒՇԿԻՆ ԼԵՆ

ԸՆՏՐՈՒԱԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ И ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

16

ВЕРЖИНЭ СВАЗЛЯН

МУСА ЛЕР

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН • 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂ ԱՀՅՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ

ՄՈՒՍԱ ԼԵՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1984

ԳՄԴ 63.5 (2Հ)
Ս 850

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ ճեագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
Բ. Ն. ԱՌԱՔԵԼՑԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՑԱՆ, Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, Ա. Մ. ՆԱՋԻՆՑԱՆ, Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՑԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների
դոկտոր՝ Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածուներ
Ա. Մ. ՆԱՋԻՆՑԱՆԸ և Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՑԱՆԸ

Սվազլյան Վ. Գ.
Ս 850 *Մուսա լեռ/Հատորի պատ. խմբ. Ս. Բ. Հարությունյան.— Եր: ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1984.— 219 էջ. 1 թ. նկ./ Հայ ագգագր. և բանահյուս., նյութեր և ուսումնասիր. (ՀՍՍՀ ԳԱ., Հնագիտ. և ազգագր. ինստ. [Պր., 16])։*

Ժողովածուն ընդգրկում է Սովետական Հայաստանում բնակվող հայրենադարձ մուսալեռցիներից 1955—1978 թթ. գրի առնված ավանդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերի նմուշները։ Բարբառային բնագրերին կցված են արևելահայ գրական լեզվով թարգմանություններ։ Ներածության մեջ տրված է հայրենաբնակ մուսալեռցիների մշակութային կյանքի պատկերը, քննված են գրառված բանահյուսական նյութերի և դիտարկված ժողովրդագիտական երևույթների արդյունքները՝ համաժամանակյա և տարաժամանակյա մոտեցումով։ Ժողովածուն ունի նաև բառարան, ծանոթագրություններ, բանասացների կենսագրականներ, նոտագրություններ և մուսալեռցիների բնակեցումը պատկերող ուղեցույց քարտեզ։

Հասցեագրվում է բանահյուսությամբ, ժողովրդագիտությամբ հետաքրքրվողներին և ընթերցող լայն շրջաններին։

Ս 0508000000
703(02)—84 33—83

ԳՄԴ 63,5 (2Հ)
902.7 (CA 43)

© Հայկական ՍՍՀ. ԳԱ. հրատարակչություն, 1984

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կիլիկիայի հարավում ձգվում է Տավրոսի Ամանոս լեռնաշղթան, որի հարավարևմտյան փեշերին վեր է խոյտնում Մուսա լեռը՝ Դամլայըք եռանկյունաձև գագաթով (1355 մ), Նրա հարավարեելյան և հարավարեմտյան լանջերը զառիթափ իջնում են դեպի Որոնտեսի գաշտավայր ու Միջերկրական ծով։

Մուսա լեռան արեելքից հոսում է Որոնտես գետի վտակ Մեծ Կարաչայը, իսկ հարավում տարածվում է Որոնտեսի ընդարձակ գաշտը։

Մուսա լեռը գտնվում է պատմական Անտիոքից շուրջ 20 կմ դեպի արևմուտք։ Անցյալում այն կոչվել է Սվեդիա[1], Մուսա դաղ[2], Ջերել Մուսա[3], Մուսա լեռ[4]։

Մուսա լեռան հյուսիսային լանջերին, արևելքից արևմուտք սփռված են եղել հայկական վեց գյուղերը՝ Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Յոդուն-Օլուկ, Խըդր-Բեկ, Վակըֆ և Քաբուսիե։

Ազգագրական այս խմբի կազմավորման ու նրա բնակիչների անցյալի մասին մատենադրական հավաստի աղբյուրներ մեզ գրեթե չեն հասել։ Օտար և հայ պատմիչների վկայությունները հիմք են տալիս ենթագրելու, որ դեռևս Տիգրան Մեծի տիրապետության ժամանակ (մ. թ. ա. I գ.) հայերը բնակվել են այդ վայրերում։ Հետագայում, տարբեր տեղերից պարբերաբար կազմակերպված գաղթերի շնորհիվ, նրանք համալրվել ու համախմբվել են Մուսա լեռան շուրջը[5]։ Գյուղախմբի ավելի քան 6 հազար բնակիչներն զբաղվել են երկրագործությամբ, շերամապահությամբ, մեզվաբուծությամբ։ Ունեցել են տարրական դպրոցներ ու եկեղեցիներ[6]։

XIX դարի երկրորդ կեսին բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ոդին բռնկել էր նաև արևմտահայությանը, որը նույնպես հևծում էր սուլթանական բռնապետության լծի ներքո։ Սան-Ատեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների հետ կապված հույսերը չէին արդարացել։ Ձեյթունի ապստամբության ազատագրության ոդին նոր թափ էր ստանում։

Կ. Պոլսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումանիայում և Կիլիկիայում կրթություն ստացած երիտասարդները Մուսա լեռ դալով ոչ միայն գրագիտություն էին տարածում, այլև պատմում էին այդ երկրներում կատարված իրադարձությունների մասին, սովորեցնում հայրենասիրական երգեր, ազատասիրության գաղափարներով լուսավորում մարգկանց մտքերը։ Նրանք իրենց նկատելի հետքերն են թողել մուսալեռցիների 1895 թ. և ապա 1909 թ. ազատագրական շարժումների վրա[7]։

Սուլթանական կառավարությունը 1915 թ. հուլիսի 13-ին հատուկ հրամանով հայերին պարտավորեցնում է յոթ օրվա ընթացքում դաղթել Սիրիայի անապատները։ Մուսալեռցիներն ընդդիմանում են ու չեն ենթարկվում կորատերը այդ հրամանին։ Նրանք անցնում են ինքնապաշտպանության։

Վերապրողները դեռ մինչև օրս հիշում են իրենց երդումը. «Ես հուս ձննուձ իմ, հուս ալէ ըըր միռնէմ. իս չըմուրթօ յասսէր քիմր միռնիլ. թվունգը ծաւիս զըմիռնէմ յաս դիդը, թաքէ մուհաջըր չը՛մըննօ»[8], Բոդոքի և վրեժխնդրության ղդացումը համակում է բոլորին. այր ու կին, մտնուկ ու ծեր թողնելով իրենց ունեցվածքը, բարձրանում են Մուսա լեռան դադաթը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին։

---

1 Այդ վայրերում են գտնվում պատմական Սելևկիա քաղաքի ավերակները. «Սվեդիա» անվանաձևը (ըստ Տիգրան Անդրեասյանի) հնագույն այդ տեղանվան արձագանքն է։

2 Թուրքերեն՝ Մուսա լեռ։

3 Արաբերեն՝ Մուսա լեռ։

4 Մուսա լեռան տեղանվան մասին մի շարք ավանդություններ են գեռեղված սույն ժողովածուի մեջ։

5 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Ա. Գահիրե, 1941, էջ 105—121 և Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 291—351։

6 Տե՛ս Մ. Խուշգելյան, Պատմություն Անտիոքի և շրջակայքի, «Հուշամատյան Մուսա լեռանն», Բեյրութ, 1970, էջ 4—48։

7 Այդ ժամանակաշրջանն տրտաղոլող մի քանի երգեր տեղ են գտել սույն ժողովածուի մեջ։

8 «Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ. ես չեմ պետ սարուկի պես մնռնելու. հրացանը ձեռքիս այստեղ կմեռնեմ, բայց գաղթական չե՛մ դառնա» (թարգմ. կազմողի)։



Մուսա լեռան ճամբարապատկերը

Հիսուներեք օր համառ մարտեր են մղվում։ Այդ ընթացքում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում, սակայն հակառակորդը նոր ուժեր է կենտրոնացնում ըմրոստ հայերին պատժելու համար։ Մուսալեռցիների պարենն ու զինամթերքը սպառվում են, ճարահատյալ նրանք, լեռան ծովահայաց կողմից օդնություն ստանալու հույսով, սպիտակ սավաններն իրար են միացնում՝ վրան կարմիր խաչի փրկության նշանով և պարզում լեռան լանջին։ Միշերկրական ծովով անցնող ֆրանսիական մարտանավերը նկատում են նրանց, փոխադրում Պորտ Սաիդ, որտեղ նրանք պատսպարվում են րրեղենյալ վրանների տակ[9]։

Պորտ Սաիդում անցկացրած չորս ամիսների ընթացքում մուսալեռցիներն իրենց ապրուստը հայթայթում են զանազան արհեստներով (սանրադործություն, զդալադործություն, կոշկակարություն, գորգադործություն, ասեղնադործություն)։

Վերապրողները դեռ հիշում են, թե ինչպես իրենք անապատի հրաշեկ ավազների վրա դրելով են սովորել մեսրոպյան տառերը, մինչև որ մի քանի վրտննների առակ սկսել է դործել Հայկական բարեդործական ընդհանուր միության հիմնած Սիսվան վարժարանը՝ կից որրանոցով ու հիվանդանոցով։

Երիտասարդները զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Սրևելյան լեգեոնը։ «1918 թ. սեպտեմբերի 19-ին, արվեցավ դրոհի հրամանը։ Հայ կորյունները՝ մուսալեռցի, քեսաբցի, սերասացի, խարբերդցի, արարկիրցի, չընգուշցի, հուսենիկցի և Հայաստանի այլ վայրերեն, մեկ-մեկ հրեղեն պեդասներ դարձած, արհամարհելով ամեն վտանդ ու նույնիսկ մահը, հղթանակի և սրրազան վրեժի տեսլականով... պարտության են մատնում դերմանո-թուրքական ղորքերին, Պաղեստինի մոտ նվաճում Սրարայի փայլուն հաղթանակը»[10], Հայ լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական ու անգլիական հրամանատարության դրվատանքին և պատերազմի ավարտից հետո, 1919 թ. հուլիսից մուսալեռցիներին հրնարավորություն է արվում վերադառնալ Մուսա լեռ, որտեղ առն չդտան, այլ կիսակործան ու հրկիզված պատեր։ Հեշտ չէր նաև հաղթահարել սովն ու վարակիչ հիվանդությունները։ Սկսեցին վերականդնել ավերվածը, մշակել խոպանացած այդիները։

Քսան տարվա խաղաղ կյանքից հետո 1939 թ. հուլիսի 23-ին, երբ անդլո-ֆրանսիական դիվանադիտությունը Թուրքիային է շնորհում Ալեքսանդրետի նահանդը (այդ թվում նաև Մուսա լեռը), մուսալեռցիների համար այլևս անհնար է դառնում այդ վայրերում ապրելը. նրանք հարկադրված մեկընդմիշտ թողնում, հեռանում են իրենց հարազատ Մուսա լեռից։

Տուն ու տեդից դրկված հազարավոր մուսալեռցիներն սկզրում փոխադրվում են Պասիսի բացատը (Սիրիայի ծովափին), ապա, մեծ տառապանքով ու կորուստներով, Լիրանանի կիսաանապատը՝ Սյնճար։ Նրանք իրենց աշխատասիրությամբ, տոկունությամբ ու տնրնկճելի կամքով այստեղ ևս կառուցում են դպրոցական շենք, եկեղեցի, մշակում ու մրգաստաններ են վերածում տյդ անշրդի տարտծությունները։

1946—47 թթ. ղանդվածային հայրենադարձության տարիներին մուսալեռցիների ավելի քան

9 Մուսալեռցիների հերոսամարտին է նվիրված Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահռչակ վեպը։ Այդ հերոսամարտի դրվագների, խիզախ մարտիկների և Դամլաջըքում ընկած տասնութ հերոս-նահատակների մասին են սույն ժողովածուի մեջ տեղ գտած մի շարք պատմահայրենասիրական երգերը։

10 Տե՛ս Հ. Թորոսյան, «Հուշամատյան...», էջ 435։



Մուսալեռցիների տեղափոխումը ֆրանսիական նավերի վրա



Մուսալեռցիների պատասխանը վրանաբաղարը

70%-ը, շուրջ 700 ընտանիք Այնճարից և 50 ընտանիք այլ վայրերից (Բեյրութից, Դամասկոսից, Սուրից), ներգաղթում են Սովետական Հայաստան։ Նրանք բնակություն են հաստատում Երևանի շրջակա արվարձաններում, Էջմիածնում, Հոկտեմբերյանում, Աշտարակում, Սրարատում, Լենինականում, Կիրովականում, Նոյեմբերյանում, Դափանում և այլուր։

Սովեսական Հայաստանի կառավարության շնորհիվ և հայրենաբնակ մուսալեռցիների ներկայացուցչական կազմկոմիտեի ջանքերով, Երևանից Էջմիածին տանող ճանապարհին հիմնագրվել է Մուսալեռ ավանը։ Ավտնի բարձունքին կառուցված հուշարձանի շուրջ ամեն սարի սեպտեմբերին, մուսալեռցիները հավաքվում են երգ ու պարով, ավանդական հարիսայով, Հայաստանի ու աշխարհի տարբեր ծայրերից ժամանած բազմաթիվ հյուրերով, նշում հերոսամարտի հաղթանակի օրը, դհոլ-զուռնայի հնչյուններով հասսատում իրենց ինքնությունը նոր Մուսալեռան վրա, հայրենի հողի վրա։

Միջերկրականի բարեխառն ափերից գեպի կլիմայական շեշտակի փոփոխություններ ունեցող հայրենիք. միայն աշխարհագրական տեղաշարժ չէր հայրենադարձների համար։ Այն նախ և առաջ ենթագրում էր հասարակական նոր, սոցիալիստական կյանքի պայմաններ։

Հայրենիքում, հակառակ եապատերազմյա աընտեսական ծանր վիճակին, յուրաքանչյուր ընտանիքին հողամաս հատկացվեց՝ անվերադարձ նյութական վարկերով ու նպաստներով, որպեսզի նրանք բնակարաններ կառուցեն։ Տարիների ընթացքում փոխվել են այս թաղամասերի դիմագծերը։ Մեկ հարկանի տները գարձել են երկու և ավելի հարկեր ունեցող բարեկարգ, գաղտրիկ առանձնատներ՝ օժտված ժամանակակից հարմարություններով։ Մուսալեռցիները, առնչվելով հայրենի տեղաբնիկների ու նախկինում տարբեր վայրերից գաղթած վերաբնակիչների հետ աշխատանքային, հարևանական ու խնամիական կապերով, աստիճանաբար ընտելանում են նոր բարքերին ու ապրելակերպին։

Հայրենադարձ մուսալեռցիների մշակութային արդի կյանքի պատկերը պարզելու համար, այստեղ փորձ է արվում ցույց տալ նրանց կրթական ու մասնագիտական զարգացման հնարավորությունները։ Հանգամանքներ, որոնք սոցիալական ու սեռատարիքային տարբեր խմբերի մոտ տարբեր ձևով են արտահայտվում, նայած թե նրանք ե՞րբ և որտե՞ղ են սկսել իրենց գիտակցական գործունեությունը։

Հայրենադարձության տարիներին մուսալեռցիների կրթական մակարդակն զգալի կերպով ցածր է եղել։

Գաղափար կազմելու համար, ստորև բերում ենք տարիքային մի քանի խմբերի կրթական մակարդակի ցուցանիշները 1946—1947 թթ. հայրենադարձության տարիներին.

Ծննդյան տարեթվեր (Տարիքային խումբ)	Անգրագետ	Տարրական կրթություն	Վեցամյա կրթություն	Միջնակարգ կրթություն	Բարձրագույն կրթություն
1911—1920 (25—35)	42%	40%	6%	12%	
1901—1910 (35—45)	54%	41%	4%	0,8%	0,2%
1890—1900 (45—55)	82%	18%			

Հաշվումներից պարզվում է[11].

1890—1900 թթ. ծնվածների (45—55 տարեկան) 82%-ն անգրագետ էր, իսկ 18%-ն ուներ տարրական կրթություն։

1901—1910 թթ. ծնվածների (35—45 տարեկան) 54%-ն անգրագետ էր, 41%-ը տարրական կրթություն էր ստացել գյուղերում կամ Պորտ Սաիդի վրանաքաղաքի Սիսվան վարժարանում, 4%-ը սովորել էր մինչև վեցերորդ գասարան, 0,8%-ն ուներ միջնակարգ կրթություն, իսկ 0,2%-ը՝ այսինքն միայն մեկը, ինժեների բարձրագույն կրթությունն ոտացել էր Փարիզում։

1911—1920 թթ. ծնվածների (25—35 տարեկան) 42%-ն անգրագետ էր, 40%-ն ուներ տարրական, իսկ 60%-ը՝ վեցամյա կրթություն, 12%-ն Այնճարում կամ այլ քաղաքներում ստացել էր միջնակարգ կրթություն, որից 1,5%-ը հայրենիքում շարունակում է իր միջնակարգ մասնագիտական կրթությունը, իսկ 0,5%-ն՝ ընդունվում բարձրագույն ուսումնական տարբեր հաստատություններ։

11 Ժողովրդագրական ուսումնասիրության հաշվումները կատարել ենք շուրջ 7 հազար հայրենաբնակ մուսալեռցիների վիճակագրական տվյալների (մինչև 1970 թ.) հիման վրա։

Ավելի մանրամասն տե՛ս Վ. Դ. Սվազլյան, Հայրենադարձ մուսալեռցիների սոցիալ-մասնագիտական զարգացումը Սովետական Հայաստանում (դոկտ. 3ու. վ. Հարությունյանի էտնոսոցիոլոգիական մեթոդով), ՀՍՍՀ ԳԱ Փիլիսոփայության և ազդագրության ինստիտուտի 1982 թ. գիտական նստաշրջանի թեզիսներ, Երևան, էջ 30։

ՄՈՒՍԱԼԵՌՅԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ



պատրաստեց՝ Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հետագա տարիներին արգեն նկատվում է վիթխարի բեկում՝ սովորողների ղանգվածային հոսք գեպի ցերեկային ու գիշերային գպրոցները։ Անգրագետների թիվը կտրուկ կերպով նվազում է, որը բացատրվում է մեծահասակ անգրագետների համար կազմակերպված հատուկ խմբակների (լիկբեզների) գործունեությամբ։ Դպրոցականների թիվը հասնում է չաշխատողների (անտիլ տնտեսուհիներ, թոշակառուներ և սովորողներ) ընդհանուր թվի 55%-ին, իսկ միջնակարգ և բարձրագույն մասնագիտական հաստատություններում սովորողներինը՝ ուսումնարաններում՝ 3%, բուհերում՝ 5%-ի։

Մասնագիտությունների բաշխումը ևս կատարվել է ըստ անհատների կարողության։ Աշխատողների ընդհանուր քանակի շուրջ 30%-ը (հողագործներ) ընգգրկվում են գյուղատնտեսության մեջ, իսկ ովքեր տոհմային ավանդույթով հմտացել էին գորգագործությանն ու ջուլհակությանը (աշխատողների 35%-ը) ներգրավվում են Երևանի մետաքսի, Լենինականի ու Կիրովականի տեքստիլ տրիկոտաժի ֆաբրիկաներում։

Եթե անցյալում Մուսա լեռում գրեթե չկար արդյունաբերական բանվոր (բացառությամբ մեկ վարպետի), ապա հայրենիքում մասնագիտական էլարգացման շնորհիվ, արդյունաբերական-գործարանային բանվորների քանակը հասնում է 18%-ի, հասարակական ձեռնարկություններում միջնակարգ կրթությամբ ծառայողներինը՝ 6%-ի։ Հաշվումների մեջ առանձնացվել են հատուկ մասնագիտական կրթություն ունեցողները, որոնցից միջնակարգ մասնագիտությամբ՝ 6%, բարձրագույն մասնագիտական կրթությամբ 5%՝ տեխնիկական ու հասարակական գիտությունների գերակշռությամբ։

Այժմ նրանց շատ ընտանիքներում չորսից մինչ հոգին ունեն բարձրագույն կրթություն։

Ներկայումս մուսալեռցիների մեջ կան տասից ավելի գիտության թեկնածուներ, վաստակավոր ուսուցիչներ, մշակույթի ղործիչներ և այլն, որոնք, հայրենիքում կրթություն ստանալով, իրենց գիտելիքները ներդնում են նրա հետագա առաջընթացին։

Բերված թվերը հստակ պատկերացում են տալիս հայրենադարձ մուսալեռցիների մասսայական ու մասնագիտական ղարգացման օրյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունների մասին, խոսում սոցիալիստական հասարակարգում կրթություն ստանալու կամ կրթական իրավունք ունենալու այն բացառիկ մեծ նշանակության մասին, որից ղուրկ է եղել օտարության մեջ իր գոյությունը պահպանած ավագ սերունդը։

Այսպես, մասնագիտական ղարգացման, գիտատեխնիկական հարաճուն ինֆորմացիայի, հասարակական արտագրական հարաբերությունների բովում, աստիճանաբար ձևավորվում ու առնականանում է հայրենադարձ մուսալեռցիների սոցիալական նոր որակը, հոգեբիտակցական աշխարհն ու մտածելակերպը։ Նրանց մշակութային ղարգացումն ու հասարակականորեն հարմարվելու կարողությունը, ընթանալով մերձեցման ուղղությամբ, ղառնում է հայ ժողովրդի ազգային ինքնահաստատման բաղադրիչ մասը։

* * *

Պատմական-հասարակական նշված հանգամանքների անմիջական աղդեցությամբ պետք է բացատրել անցյալի մշակութային սրժեքների, այդ թվում նաև բանահյուսական ավանդների փոխակերպման և նորի ձևավորման փաստերը։

Տարիների ընթացքում գրառելով Հայաստանից կտրված այս հատվածի հողևոր մշակույթի բեկորները, միաժամանակ փորձել ենք պարղել աղգագրական այս ինքնատիպ խմբի ավանդապահության մակարդակը, կապված ժամանակագրական ու աշխարհագրական տեղաշարժերի, սոցիալ-պատմական պայմանների, բանասացների սեռա-տարիքային հատկանիշների ու հոգեբանական խնդիրների հետ։

Մուսա լեռան բանահյուսության գրառումն ու հետազոտումը մինչև այժմ հատուկ և ամրողջական ուշադրության չի արժանացել[12]։

---

12 Սփյուռքահայ մուսալեռցի մասնավորապես Տիգրան Ավագյանն իր «Սվեդիայի բարբառը» ուսումնասիրության մեջ (1967) հիշատակել է մի շարք ասացվածքներ ու ոճեր։

1970 թ. Բեյրութում հրատարակված «Հուշամատյան Մուսա լեռան» տավարածավալ հատորում որոշ տեղ է հատկացվել նաև ժողովրդական բանահյուսությանը. Մարտիրոս Խուլոզեյանց, Ժողովրդական երգն ու պարը Մուսա լեռան մեջ, էջ 221—227 և Զորա Իսկենդերյան. Մուսա լեռան առածներն ու ասացվածքները, էջ 228—245։

1973 թ. Բեյրութում լույս է տեսել Սոնա Զեյթլյանցի «Մուսա լեռան ժողովրդական հեքիաթները» գիրքը, որտեղ հեղինակը, նկատի ունենալով իր նախնիների հարազատ բարբառի խրթինությունը, հեքիաթները ներկայացրել է արևմտահայ գրական լեզվով ու ենթարկել դեղարվեստական վերամշակման, որը և հեղինակի անհատական դրոշմն է թողել ժողովրդական նյութերի վրա։

Ներկա ժողովածուն տասներորդ փորձն է դիտական ամփոփ տեսքով ներկայացնելու Սովետական Հայաստանում բնակվող մուսալեռցիներից անաղարտորեն գրառված ավանդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերի նմուշները[13]։

Մուսալեռցիների բանահյուսական նյութերի գրառումները հիմնականում կատարվել են ժամանակագրական երկու փուլերում.

Առաջին փուլն ընդգրկում է 1955—60 թթ., երբ մեր անձնական նախաձեռնությամբ գրի ենք առել մուսալեռցիների բանահյուսական նմուշներ։

Երկրորդ փուլը 1972—78 թթ., երբ նյութերը գրի ենք առել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից կազմակերպված անհատական գիտարշավների ընթացքում։ Ընդ որում, յուրաքանչյուր փուլում համաժամանակյա (սինխրոնիկ) կերպով ղրի է տոնվել սեռատարիքային տարբեր խմբերի բանասացներից, բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործություններ։

Հետևաբար ստացվել են երկու տարաժամանակյա շերտեր։ Ակամայից ստեղծված այս ընդմիջումը, անշուշտ, ենթադրում է ժողովրդագիտական նյութերի բավականաչափ կորուստ։ Սակայն, մյուս կողմից, քսան-քսանհինգ տարվա ընթացքում, մենք հնարավորություն ենք ունեցել գրի առնել բանասացների մեկից ավելի սերունդների (նախ՝ ծնողների, ապա՝ որդիների ու թոռների) հաղորդած նյութերը, ուսումնասիրել ժամանակի ու տարածության մեջ, համեմատել միմյանց հետ և դաղափար կազմել աղդագրական այդ խմբի ժողովրդական մշակույթի վերրնթացի՝ դիախրոնիայի մասին[14]։

Ուսումնասիրություններ կատարված է բանասիբության դոկտոր Իսիդոր Լևինի մշակած քանակական վերլուծման հայկական կոդային համակարգով։ Ըստ տյդմ, Մուսա լեռան ժողովրդական բանահյուսության մեր գրի առած յուրաքանչյուր միավոր մշակված, քարտագրված ու կողավորված պահվում է ՀՍՍՀ ԳՍ հնագիտության և աղդագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի FS ֆոնդում (Վերժինե Սվազլյանի ֆոնդ) 0001—3309 կջահամարների տակ։

Բանահյուսական նյութը գրի առնելիս, նախ նկատի է առնվել նյութի ծագման տեղտվյրի հարցը։ Այն հնարավորություն է տվել պարզելու, թե հոգևոր ի՞նչ հարստություն է հասցվել հայրենիք, ի՞նչքանով է այն պահպանվել կամ փոփոխվել, բանահյուսական ժանրերից ո՞րոնք են կենսունակ, ավտնդապահության ի՞նչպիսի մակարդակ ունեն, ո՞րտեղից է սկսվել փոփոխությունը՝ րարբառի՞ց, թե՞ բանահյուսությունից։

Այդ նպատակով, գրառումների ժամանակ օժանդակ հարցերի միջոցով բանասացից տեղեկացել ենք, թե ժողովրդական տվյալ սաեղծագործությունն ինքն ո՞ւմից է լսել ու սովորել, այսինքն՝ ո՞րտեղից և ի՞նչ ճանապարհով է այդ նյութը հասել մինչև մեր օրերը։ Բանասացներից շատերն այդ հարցին պատասխանել են. «Դ'ադը-մ'արէն լսած իմ» (ծնողներից եմ լսել) կամ «Բ'արդՕնց խոսք ի» (պապական խոսք է) և այլն։ Օրինակ՝ ժողովրդական շատ հեքիաթներ, առակները ու ղրույցներ մեղ հաղորդած Գրիգոր Գյողալյանը հաճախ էր վկայակոչում իր հորեղբայր Սերոր ամին կամ ղվարճախոս Ղավլաղլնց պատովին։ Հետևաբար, տվյտլ նյութի ծագման վայրը (Քարուսիև) չի համընկել գրառման վայրին (Երևան), սակայն այդ յուցանիշը մեղ դաղափար է տվել նյութի անցած ճանապարհի ու նրա ավանդապահության մակարդակի մասին։

Առաջին ժամանակահատվածում դրառումները կատարվել են Երևանի արվարձաններում (Շահումյան, Մալաթիա, Նոր Արեշ, Արտաշիր, Նոր Զեյթուն, Սարի Թաղ, Վարդաշեն, Նորագյուղիթ) և էջմիածնի ու Հոկտեմբերյանի շրջաններում։

Երկրորդ ժամանակահատվածր, նախորդ տեղավայրերից բացի, ընդգրկել է նաև նորերը՝ Աշտարակ, Արարատ, Լենինական, Կիրովական, Ղափան։

Եթե առաջին ժամանակահատվածում դրառումները կատարվել են հիմնականում ծագումով Հաջի-Հտրիրլի, Բիթիաս և Քարուսիե գյուղերից վերտրնակված մուսալեռցիներից, ապա երկրորդ ժամանակահատվածում՝ նաև Յողուն-Օլուկ, Խըդըր-Բեկ գյուղերի վերարնակիչներից ու նրանց հաջորդող սերունդներից։ Թեպետ երկրորդ, առավել երկարատև ժամանակահատվածում, ավելի շատ տեղավայրեր են ընդգրկվել, սակայն դրառումների արդյունքը և՛ քանակով, և՛ որակով եղել է ավելի նվաղ, քան առաջին ժամանակահատվածում։

Երևույթի պատճառն ուսումնասիրելու համար դիմենք փաստերի։ Կցված առաջին աղյուսակում ներկայացված է նյութերի ընդհանուր պատկերը, ըստ ժամանակահատվածների։ Ձախից՝ առաջին սյունյակում (F) նշված է կոդային արտահայտությունը, որը պայմանականորեն համապատասխանում է ժողովրդագիտական նյութի տեսակին։

---

13 Տե՛ս Վ. Գ. Սվազլյան, *Մուսա լեռան հայ ժողովրդական բանահյուսությունը*, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 1։

14 См. *В. Г. Сваэлян.* О диахронии и синхронии в мусалерском фольклоре. Тезисы докладов. В кн.: Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований 1976—1977 гг., Ереван, 1978, стр. 225—226.

Աղյուսակ 1

Բանահյուսական նյութերի քանակը րստ կրտսման ժամանակատարվածների

Նյութի տեսակը ըստ կոդիֆիկատորի	Նյութի անվանումը	I փուլ 1958-67թթ.	II փուլ 1972-78թթ.	Ընդամենը
F 7. 0. 1	Գիտական ինֆորմացիա լեզվի մասին	23	32	55
F 7. 0. 2	Բառային կազմ	545	167	712
F 7. 0. 3	Տոպոնիմիկա	22	4	26
F 7. 1. 3	Օրհնանք, մաղթանք, երդում	57	6	63
F 7. 1. 5	Հմնեծք	62	9	71
F 7. 2. 1	Առած-ասացվածք	502	176	678
F 7. 2. 5	Շուտասելուկ	3	1	4
F 7. 2. 8	Դարձված	248	52	300
F 7. 3. 0	Հանելուկ	33	6	39
F 8. 1	Հուշապատում	29	18	47
F 8. 2	Ավանդություն	3	8	11
F 8. 3	Առակ	8	4	12
F 8. 4	Հեքիաթ	18	14	32
F 9. 1	Վիպական երգ	1	5	6
F 9. 5	Ծաղիկ	69	16	85
F 9. 6	Երգ	18	4	22
F 9. 6. 9	Մանկական և օրորոցային երգեր	5	1	6
	Ընդամենը	1646	523	2169

Աղյուսակ 2

Նյութերի և բանասացների սեռի փոխհարաբերությունը

Նյութի տեսակը ըստ կոդիֆիկատորի	Ընդամենը	բանասացը սեռը			
		f		m	
		Նյութի քանակը	Նյութի տոկոսը	Նյութի քանակը	Նյութի տոկոսը
F 7. 0. 1	55	5	10 %	50	90 %
F 7. 0. 2	712	212	30 %	500	70 %
F 7. 0. 3	26	6	23 %	20	77 %
F 7. 1. 3	63	50	80 %	13	20 %
F 7. 1. 5	71	50	70 %	21	30 %
F 7. 2. 1	678	178	26 %	500	74 %
F 7. 2. 5	4	4	100 %	—	—
F 7. 2. 8	300	50	17 %	250	83 %
F 7. 3. 0	39	19	49 %	20	51 %
F 8. 1.	47	17	36 %	30	64 %
F 8. 2.	11	5	45 %	6	55 %
F 8. 3.	12	3	25 %	9	75 %
F 8. 4.	32	9	28 %	23	72 %
F 9. 1.	6	—	—	6	100 %
F 9. 5.	85	70	83 %	15	17 %
F 9. 6.	22	20	90 %	2	10 %
F 9. 6. 9	6	6	100 %	—	—
Ընդամենը	2169	704	33 %	1465	67 %

Հաջորդ սյունակում նշված են բանահյուսական այն բոլոր նյութերը, որոնք ընտրությամբ զետեղված են ժողովածուի մեջ, ինչպես նաև բանասացների հաղորդած տարբեր բնույթի պատմաշխարհագրական, լեզվաբարբառային և այլ բնույթի տեղեկությունները, որոնք այս կամ այն չափով նպաստել են մեր ուսումնասիրություններ։

Նյութերի բազմազանությունը պայմանավորված է եղել մեր հատուկ նպատակադրումով՝ գրի առնել այն ամենը, ինչ հնարավոր է եղել փրկել կորստից։

Աղյուսակում արտահայտված երկու փուլերից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է համաժամանակյա (սինխրոնիկ) գրառումների մի առանձին ժամանակահատված, որը բնութագրվում է այդ ընթացքում գրառված տարբեր նյութերի ընդհանուր քանակով։

Գրառված նյութերը կազմում են՝

Առաջին փուլում *(1955—60 թթ.)* 1646 միավոր

Երկրորդ փուլում *(1972—78 թթ.)* 523 միավոր

Երկու փուլերի տարաժամանակյա (դիախրոնիկ) համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ ժամանակի հետ զուգընթաց (20—25 տարում) ժողովրդագիտական նյութի քանակը գգալի չափով նվազել է (գրեթե 68%-ով)։

Նախորդի տրամաբանական շարունակությունն է երկրորդ աղյուսակը։ Այստեղ բանահյուսական յուրաքանչյուր ժանրի նյութերի կենցաղավարման և բանասացների սեռերի տոկոսային հարաբերություններից պարզվում է, որ բանահյուսական նյութերը հաղորդել են երկու սեռի ներկայացուցիչներ (կին՝ I, աղամարդ՝ III), ընդ որում, նյութի 33%-ը բաժին է ընկել կին, իսկ 67% տղամարդ բանասացներին։

Այս հանդամանքն ավելի ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրության ենք ենթարկում ոչ միայն բանահյուսական նյութը, այլև նրան առնչվող բանասացների մասին գրառված կենսագրական տվյալները։ Պարզվում է, որ բանասացները եղել են սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ հողի աշխատավորներ, բանվոր ծառայողներ, նաև հասուկենտ մտավորականներ։ Խորամուխ լինելով նրանց սեռային առանձնահատկությունների մեջ՝ պարզվում է, որ ծավալուն հեքիաթների, զրույցների, սոցիալական սուր հագեցվածություն ունեցող առակների և մանավանդ պատմահայրենասիրական, կենքի կոչող խրոխտ երգերի կրողները հիմնականում եղել են տղամարդիկ։ Կանայք, կապված լինելով առօրյա կենցաղին ու հոգսերին, նրանց հոգուն ավելի հարազատ է հնչել կենցաղային ու ընտանեկան բնույթի փոքր ղրույցները, անեծք-օրհնանքները, օրորոցային, մանկական ու ծիսական, ինչպես նաև մեր միջնադարյան հայրենիներն ու լալյաց երգերը հիշեցնող, տարադրության ու աքսորի ճամփաներին ստեղծված ժողովրդական երգերը։

Երրորդ աղյուսակը գաղափար է տալիս երկու ժամանակահատվածներում գրառված նյութի քանակի և բանասացների սեռատարիքային առանձնահատկությունների փոխհարաբերության մասին։ Երկու փուլերի նյութերի քանակական ցուցանիշները համեմատության մեջ են արված բանասացների ղույգ սեռերի տարիքային խմբերի հետ։ Եթե առաջին փուլում ունեցել ենք 54 բանասաց (33 կին, 21 աղամարդ), ապա երկրորդ փուլում ընդամենը 26 բանասաց (16 կին, 10 աղամարդ)։ Քսանքսանհինգ տարվա ընթացքում նվազել է ոչ միայն բանահյուսական նյութերի քանակը, այլև բանասացների թիվը՝ մոտ 40%-ով։

Ինչպես երևում է աղյուսակից, առաջին փուլում բանահյուսական նյութի կրողներն ընդգրկել են տարիքային գրեթե բոլոր խմբերը (II—VII, այսինքն՝ 17—69 տարեկան)։ Եվ իրոք, եթե մեր գրառումների սկզբնական շրջանում, թեպետ ոչ

Աղյուսակ 3

Նյութի և բանասացների սեռատարիքային փոխհարաբերությունները

Փուլերը	Գրառման տարիները	Նյութերի քանակը	Սեռերի հարաբերությունը	Սեռերը	Տարիքային խումբը									Ընդամենը	Տվյալների հավաստիությունը	Ընդամենը
					8—16	17—19	20—29	30—39	40—49	50—59	60—69	70—79	80—ից վերև			
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX			
I փուլ	1955—1960 թթ.	1646	f		—	1	3	4	6	9	10	—	—	33	61 %	54
			m				1	3	4	6	7	—	—	21	39 %	
II փուլ	1972—1978 թթ.	523	f						1	3	5	6	1	16	62 %	26
			m							2	2	4	2	10	38 %	
	Ընդամենը	2169														80

դյուրությամբ, բայց, այնուամենայնիվ, մեզ հաջողվում էր բանահյուսական նյութեր գրի առնել Մուսա լեռում ծնված ու ապրած ավագ, միջին և մասամբ նույնիսկ կրտսեր սերնդի ներկայացուցիչներից, որոնք տակավին հիշում ու խոսում էին իրենց բավական խրթին բարբառով, ապա մեր գրառումների երկրորդ ժամանակահատվածում վիճակն այլ էր. բանահյուսական նյութի կրողները ուղյուսակում արտահայտվում են VI խմբից (այսինքն՝ 50 տարեկանից սկսած), բացառություն էր կազմում միայն մեկը՝ Ալմաստ Վալիյանը (V խումբ), որն իր ստացած լեզվապրական բարձրակարգ կրթության շնորհիվ, լավ էր տարբերում բարբառի առանձնահատկությունները, և մեր նպատակը հասկանալով, հատուկ իրենց բարբառով էր վերարտադրում մորից ու հորից լսած բանահյուսական նյութերը։

Երկրորդ փուլում, արդեն մեծ դժվարությամբ ու երկար փնտրտուքներից հետո միայն մեզ հաջողվել է դտնել հատուկենտ տարեց մարդկանց, որոնք, ընդհակառակը, մուսալեռցի լինելով, բանահյուսական նյութերը հիշում էին ու պահպանում իրենց բարբառը, սակայն այն էլ զգալի աղճատումներով (այլ բարբառների, գրական լեզվի և ռուսերենի նորամուծումներով)։

Երկրորդ փուլում հներից շատերն արդեն չկային, ոմանք ծերացել էին՝ մթագնված հիշողությամբ։ Հետևաբար, շատ հաճախ օժանդակ հարցերի շնորհիվ, հաղիվ է հնարավոր եղել նրանցից դուրս կորզել բանահյուսական որևէ պատառիկ։

Եթե առաջին փուլում գրի է առնվել առավելապես երկար, հրաշապատում հեքիաթներ, այնպիսի շնորհալի ու օժտված բանասացներից, ինչպիսիք էին կույր Հովհաննես Խուդակլյանը, Սերոբ Գյուղալյանը, Սարգիս Խաբիկյանը և ուրիշներ, ապա երկրորդ փուլում այդ այլևս անհնար էր։ Նախորդ վարպետ հեքիաթասացներից մնացել էր միայն մեկը։ Այդ 95-ամյա ծերունուն խնդրեցինք գերծրշել անցյալում իր պատմած հեքիաթներից որևէ մեկը։ Նա փորձեց հիշել, սկսեց պատմել, սակայն նոր պատումն ստացվեց խիստ կցկտուր ու մնաց անավարտ։ Բանասացն այլևս չկարողացավ հիշատակել անցյալում իր պատմած հրաշապատում հեքիաթներին հատուկ ավանդական սկիզբը. «Ըզգինու, ըզգինու»[15], չօգտագործեց պատմողական նախկին բանաձևերը. «Ուզն էր բիրդէն, ծուկը էր Քիվէն չըր դարիր յասդիզը ուկիլ, տօն չո՞ւց իգիր»[16] կամ՝ «աշկէյնը յարիվէն դուասիր՝ տօն մի՝ ձիթի. իս ըլը ձիթիմ»[17]։ Ջկային նաև ժողովրդական բանավոր խոսքը համեմող պատկերավոր ու թևավոր արտահայտությունները, փոխաբերություններն ու համեմատությունները։ Դևտքելն ու դեմքերը հաճախ իրար էին խառնվում և ոչնչանում՝ անհասկանալի դարձնելով բովանդակության տրամաբանական ու հաջորդական ընթացքը։

Այսպիսով, երկրորդ փուլում գրեթե անհնար դարձավ գրի առնել ընդարձակ, ամբողջական ու գեղարվեստորեն կատարյալ հրաշապատում հեքիաթներ, փոխարենը մեզ հադորդում էին առավելապես կենցաղային, հակիրճ զրույցներ, անեկդոտներ, երգերի պատառիկներ, բանաձևային քարացած ձևեր՝ առած-ասացվածքներ ու դարձվածքներ։

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ նաև բանահյուսական նյութի կենցաղավարման պայմաններին։ Եթե դարասկզբին, Մուսա լեռում մարդիկ ավանդական ձևով հավաքվել են օջախի շուրջը կամ բաց երկնքի տակ՝ թխաստաններում, երկար, հրաշապատում հեքիաթներ ասել ու լսել, իսկ 1930-ական թվականներին, մեր դրառումների ժամանակ դեռևս մարդիկ հավաքվում էին, լսելու Հ. Խուդակլյանի պատմածները, ապա քսան տարի անց պատկերը բոլորովին այլ էր։ Նախկին մուսալեռցիները նոր ձևով էին կազմակերպում իրենց ժամանցը։ Կինոն, ռադիոն և մանավանդ տեռուստացույցը նոր որակ էին հադորդել նրանց երբեմնի ավանդական բարքերին։ Զարդացել էր սարդանց ճաշակը, փոխվել մշակութային պահանջների մակարդակը։

Տարբեր ժամանակահատվածների նյութի և բանասացների խրոնոսոցիոլոգիական համեմատությունը վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեց մարդկանց հետ միասին նվաղում է նաև ակտիվ ավանդապահության մակարդակը։

Ժամանակի և տարածության մեջ ուսումնասիրելով մեր դրառած նյութերը՝ նկատում ենք, որ փոփոխություններ են կատարվել ոչ միայն բանահյուսական նյութերի ու բանասացների քանակական ցուցանիշների մեջ, այլև ժանրերի ներսում և ժանրերի միջև ղդացվում են քայքայման, տարրալուծման ու փոխակերպման որոշ երևույթներ։

1958 թ. Սերոբ Գյուղալյանից գրի էինք առել մի շարք բարոյախոսական առակներ։ Քսան տարի անց հասդիպելով նրա եղբորորդուն՝ Գրիդոր Գյուղալյանին, խնդրեցինք վերհիշել իր հորեղբոր պատմած առակները։ Նա վերարտադրեց գրեթե նույն նմուշները, բայց արդեն խիստ սեղմ՝ երկխոսական առածների ձևով։ Դժվար է ասել, թե արդ-

---

15 Վինում է, չի լինում։

16 Օձն իր պորտով, ձագն իր թևով չէր կարող այստեղ գալ, դու ինչպե՞ս եկար։

17 Աղջիկն արևին ասում է՝ դու մի՛ ծաքիր. ես պիտի ծաքեմ։

յոք իր նախորդն իմացե՞լ է այդ երկխոսական առածները ևս, բայց փաստն այն է, որ հաջորդ սերունդն այլևս չէր պահպանում նախորդի պատմածը ժանրային նույն ձևով[18]։

1959 թ. Սիմա Դուդակլյանը հաղորդել էր հետեյալ շուտասելուկը.

Ծծլը՝ ձուվը,
Ջափը՝ գըռագէն,
Ղափաղիցէն խա՛ւիը.
Թըղ չառնի գբո՛ւգը,
Դըքըր ուկօ վա՛ղը,
Պ՛ուրը ուկօ ուդո՛ւղը[19]։

Քստն տարի անց նրա դուստրը՝ Դշխուհին, իր մոր հանգավոր տսելուկից վերհիշեց միայն սկղբի երկտողը, աննկատորեն կատարելով ոչ միայն բովանդակության կրճատում, այլև՝ ժանրային փոփոխություն՝ շուտասելուկը վերածելով առածի։

Փոխակերպումներ նկատելի են նաև բանահյուսական նյութի բուն բովանդակության մեջ։ Օրինակ աստվածաշնչային Մովսես մարգարեի ավանդությունը, որն ակերսվում է «Մուսա լեռ» տեղանվան ծագումնաբանության հետ, մեր գրառած հետագա տարբերակներից մեկում դեղարվեստորեն արտացոլված են արդեն նոր ժամանակների Մուսա լեռան հերոսամարտի 1915 թ. դեպքերն ու հասարակական-քաղաքական պայմանները։

Այլ կարգի երևույթներ են կատարվել նաև երգերի մեջ.

Յասրձա խնթրիցա՛,
Այարում ծիօն հիձնիլա՛,
Ջէրէլ Մուսա ուրթիլա՛,
Թղինէն թո՛ղ քաղիլա՛,
Ունո՛ւայգինէն ունո՛ւայդ քաղիլա՛[20]։

Եթե այս երգը պորասահդյան կյանքի (1915—1919 թթ.) արձագանքն է, երբ երաղ էր Մուսա լեռ վերադառնալը, ապա ավելի ուշ՝ 1940-ական թվականներին, Այնճարում ապրող մուսալեռցին նույն երգի հենքի վրա, նոր ժամանակների նոր երաղներ է փայփայել.

Յասրձա խնթրիցա՛.
Այարում ծիօն հիձնիլա՛,
Հայաստան ուրթիլա՛,
Մըկտար ուրթիլա՛,
Թիլք ու շնո՛ւրք սուրվիլա,
Միր վաանր շինըընիլա՛[21]։

Նախկին երգը, պատմական նոր շերտավորումներ սաանալով, դարձել է նոր տարբերակ։

Փոփոխություններ նկատվում են նաև աշխարհագրական տեղավայրերի, բուսական ու կենդանական աշխարհի տնվանումների ասպտրեգում։

Մուսալեռցիների բանահյուսության մեջ մըշաուկես առկա է եղել Մուսա լեռան ընաշխարհի ընդգրկումը (հիշատակվել է Մուսա լեռն իր հայարնակ դյուղերով, Միջերկրական ծովը, Կարաչոյ դետը, Շըրըլղէյն տղրյուրը, Թեկղեի քարանձավը, Հովհան Ոսկերերանի մենարանը և այլն)։ Հասարակական-պատմական իրադարձությունները, մուսալեռցիների երկրեերկիր թափառումները ևս իրենց դեղարվեստական անդրադարձն են դտել նրանց բանավոր ավանդության մեջ (Կիլիկիա, Փայաս, Ադանա, Դամլաջըք, Դեր-Զոր, Պաստիա, Այնճար), իսկ վերջին շրջանում դրառված բանահյուսական նմուշներում դործողությունները կատարվում են Հայաստանում՝ Փարաքարում, Զվարթնոցում և այլուր։ Եթե անցյալի բանահյուսական նյութերի մեջ հիշատակվում էին Մուսա լեռան ընաշխարհի մերձարևադարձային բույսերն ու պտուղները (դուդուս, սումախ, ձիթապտուղ, արմավ, նարինջ), ապա հետագայում արդեն՝ ծիրան, դեղձ, խաղող։

Կյանքի նոր պայմաններն աղդել են նաև բանահյուսական կերպարների ու իրողությունների վրա։ Եթե առաջին փուլի նյութերի մեջ հիշատակվում էին արարներ, դերվիշներ, մոլլաներ, ապա հետադայում հանդես են դալիս հարևանը, ուսուցիչը, ընկերը, որոնք զործ ունեն ոչ թե ուղաերի քարավաններ կամ դրաստների սայլի, այլ՝ մեքենայի, տրակտորի ու ինքնաթիռի հետ։

Այդպես, ավանդական բանահյուսության քանակական նվազումն իր հետ բերել է որոշակի որակական փոփոխություններ։ Աշխարհադրական միջավայրի, սոցիալ-անտսական պայմանների և ժամանակի փոփոխությունները ուղղակի կամ անուղղակի կերպով աղդել են աղդադրական այս

18 Այդ կարգի նյութերը ժողովածուի մեջ դետեղված են առածների բաժնում։

19 Ջուկը՝ ծովը,
Տապակը՝ կրակին,
Փակեցին խուփը,
Թող չառնի պաղը,
Մինչև գա վաղը,
Բարով գա ուտողը։

20 Ասաուց խնգրեցի,
Թամրած ծի հեծնել,
Դնալ Մուսա լեռ
Թղենուց թուզ քաղել,
Ընկուղենուց ընկույզ քաղել։

21 Աստծուց խնդրեցի.
Թամրած ծի հեծնել,
Հայաստան մեկնել,
Դպրոց հաճախել,
Նելք ու շնորհք սովորել,
Մեր հայրենիքը շենցնել։

ինքնատիպ խմբի բարքերի ու սովորույթների, բարբառի ու բանահյուսության ավանդապահության մակարդակի վրա։ Նրանց խրթին բարբառն աստիճանաբար քայքայվելով դարձել է ավելի մատչելի ու դրականախառն։

Ուշադրավ է տարբեր ժամանակահատվածներում, հասարակական-պատմական տարբեր պայմաններում, տարբեր սերունդների ավանդապահության և ընկալունակության չափանիշներն իրենց բանավոր խոսքի՝ հարազատ բարբառի նկատմամբ։

Մուսալեռցիները պատմական իրադարձությունների բերումով դարեր շարունակ ապրել են Թուրքերի, ալավի-թաթերի, արաբների ու ազդային այլ խմբերի հարևանությամբ և, բնականաբար, նրանց բանավոր խոսքը կրել է որոշ ազդեցություններ ու փոխազդեցություններ[22]։ Դարասկզբին ծայր առած նրանց տստանդական կյանքի պայմանները՝ դաղթերը, տեղահանություններն ու ասպարդությունն ավելի են արագացրել այդ երևույթի ընթացքը, սակայն բուն բարբառն իր քերականական կառուցվածքով մնացել է կայուն, քանի որ օտարության մեջ մայրենի բարբառը եղել է նրանց ինքնության, հայապահպանման միակ միջոցը։ Սկի անցյալում որոշիչ դերծոնը ժամանակն էր, իսկ օտար շրջապատի ներգործությունը՝ երկրորդական պայման, ապա Հայաստան տեղափոխված բարբառի համար նոր միջավայրի ազդեցությունն է դարձել որոշիչ, իսկ ժամանակը՝ երկրորդական պայման։

Հայրենիքում, ինչպես արդեն տեսանք բերված թվերից, համատարած գրագիտության ու մասնագիտական զարգացման, դրական, համազգային պետական լեզվի հեղինակավոր ու անդիմադրելի ներգործության շնորհիվ (համոզիչ, ուպիոյի, հեռուստատեսության անմիջական ազդեցություն), պատմականորեն կարճ ժամանակամիջոցում, ընդամենը երեք տասնամյակի ընթացքում, նրանց խրթին բարբառն աստիճանաբար տեղի է տվել տրդի դրական հայերենին (կամ ավելի տեղավայրի բարբառին)։

Ներկայումս մուսալեռցի ընտանիքներում նկատելի է բանավոր խոսքի բազմաշերտայնություն. մեծահասակները դեռևս միմյանց հետ շարունակում են խոսել իրենց բարբառով, միջին տարիքի մարդիկ՝ դրականախառն, իսկ Հայաստանում ծնված, ուսում ստացած նոր սերնդին դրեթե անհասկանալի է մեծերի, ընդիկ մուսալեռցիների բարբառը։ Նա տիրապետում է արդի գրական հայերենին, ռուսերենին և օտար լեզուներին։ Բանահյուսական անցյալի ավանդներից ևս գրեթե ոչինչ չի պահպանում, բայց փոխարենը հարստանում է աղգային ու համաշխարհային մշակույթի արժեքներով։

Անկախ բարբառի այս կորստից, մեր հավաքած բանահյուսական նյութերը, որոնք գրառվել են հիմնականում բարբառախոս ավագ սերնդի ներկայացուցիչներից, պատկանում են Մուսա լեռան բարբառի երեք ճյուղավորումներին[23]։

Բարբառային այս տարբերությունները թեպետ ղգալիորեն բարդացրել են մեր գրառած նյութերի լեզուն, խախտել ուղղագրական միօրինակությունը, ստկայն այդուհանդերձ, տշխատել ենք հավատարիմ մնալ հնչյունային ու բարբառային հիշյալ յուրահատկություններին և ընդունված դիտական տառադարձությամբ, ըստ հնարավորին, անաղարտորեն վերարտադրել բանասացների հազորդած ժողովրդական խոսվածքը։

Մուսա լեռան բարբառի առանձնահատկությունները բավական ինքնատիպ են ու բազմազան, սակայն մենք մեր մասնագիտական նպատակից դուրս ենք համարում բարբառագիտական հարցերի մեջ խորամուխ լինել[24]։

---

22 Մուսալեռցիների ստեղծած թեկուզ թուրքերեն ժողովրդական ստեղծագործությունները, որոնք մեզ պատահել են, չեն վրիպել մեր ուշադրությունից և ենթարկվել են գրառման։

23 Մուսա լեռան (Սվեդիայի) բարբառն ունեցել է իր ներքին առանձնահատկությունները՝

ա. Հաջի-Հարիրլի և Բիթիաս գյուղերն ունեցել են բարբառային ընդհանրություններ,

բ. Յողուն-Օլուկը, Խզոր-Բևկն ու Վակըֆը՝ իրենց առանձնահատկություններով,

գ. Թարեսևեն՝ իրենը։

Հնչյունային ու քերականական այս յուրահատկությունները անհասկանալիորեն դժվարացրել են ժողովածուի բանահյուսական նյութերի գրառումը, մանավանդ որ գրառողն ազգագրական ավյալ խմբին չի պատկանել։

24 Մուսա լեռան բարբառին առաջին անգամ անդրադարձել է Հր. Աճառյանն իր «Հայ բարբառագիտություն» գրքում, էմինյան ազգագրական ժողովածու, հ. 8, Մոսկվա— Նախիջևան, 1911։

Այնուհետև մուսալեռցի Ի. Ա. Մարտիրյանը «Էջմիածին» ամսագրում տպագրել է «Հնչերևք Մուսայի բարբառը» հոդվածաշարը (1952, № 3, 1953, № 2, 6, 7, 8)։

Սր. Վարիրյանն այդ բարբառի մասին գրել է «Հայ բարբառագիտություն» ձեռնարկում (1953), ապա՝ «Հայերենի նորագյուտ բարբառների մի նոր խումբ» գրքում (1958)։

Մուսա լեռան բարբառի ամրողջական ուսումնասիրության էր ձեռնարկել ՀՍՍՀ ԴԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, մուսալեռցի Ս.լ. Փաշայանը (տե՛ս նրա «Սվեդիայի բարբառի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, «Սվեդիայի բարբառի ձևարանությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 9), սակայն վաղահաս մահվան պատճառով այն մնացել է թերավարտ։

Լեզվի ինստիտուտը 1967 թ. լույս է ընծայել սփյուռքահայ մուսալեռցի մասնավորական Տ. Անդրեասյանի «Սվեդիայի բարբառ կամ Քիտինզի լեզուն» աշխատությունը։

1970 թ. Բևյրութում լույս տեսած «Հուշամատյան Մուսա լեռան» տպավարձատվել հատորում տեղ է գտել Հ. Թորոսյանի «Ակնարկ մը Մուսա լեռան (Սվեդիո) գավառարարրառին վրա» հոդվածը։

Մուսա լեռան երեք ենթարարրառները գիտական բազմահատկանիշ ուսումնասիրության են ենթարկված Գ. Բ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) գրքում։

* * *

Ներկա ժողովածուի մեջ բանահյուսական նյութերը խմբավորված ու համակարգված են հետևյալ երեք մեծ բաժիններով.

I. Վիպական բանահյուսություն (հեքիաթներ, առակներ, անեկդոտներ, ավանդություններ, անուշավատական ղրույցներ);

II. Քնարական բանահյուսություն (խաղիկներ, ծիսակենցաղային, հայրենասիրական, զինվորի և տարագրության երգեր);

III. Բանածներ (առած-ասացվածքներ, հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ, երգումներ, դարձվածներ);

Հաշվի առնելով Մուսա լեռան բարբառի խրթինությունը, նպատակահարմար գտանք բարբառային ընագրերին կցել նաև գրական արեելահայերենով ղուգահեռ թարգմանությունները;

Ժողովածուն ունի բառարան, ուր տրված են ընագրերում եզած գժվար հասկանալի բարբառային և օտարամուա բառերի բացատրությունները՝ մեծ մասամբ մեկնարանված ու ճշտված աարրեր բանասացների կոդմից;

Ծանոթագրությունների մեջ տեղեկությունները հաղորդված են ըստ ժողովածուի երեք հիմնական բաժինների, յուրաքանչյուր բաժնի ներսում առանձին ու շարունակական համարակալումներով; Ծանոթագրությունների մեջ Մուսա լեռան հեքիաթների մոտիվները ղուգորդված են ինչպես հայկական այլ աղգագրական շրջանների, այնպես և մերձավոր ու հեռավոր ժողովուրդների հեքիաթների համանման մոտիվների, ըստ Անտի Աարնեի համակարգի համարակալման; Ծանոթագրությունների աղյուսակում տրված են նաև բանահյուսական նյութի ծագման, գրառման վայրը, տարեթիվը և բանասացի անուն-ազգանունը;

Ժողովածուին կցված են նաև վարպետ բանասացների կենսագրական տվյալներն իրենց լուսանկարներով, ձայնագրությունների հիման վրա կատարված ասար երգերի նոտագրություններ, ռուսերեն ու անգլերեն ամփոփումներ, ինչպես նաև Մուսա լեռան և Սովետական Հայաստանում մուսալեռցիների ընակեցումը պատկերող ուղեցույց սխեմատիկ քարտեղ;



Մռասա լեռան ճերռասմարտին նվիրված հուշարձանը Էջմիածնի շրջանի Սուսալեռ ավանում
Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան Քանդակագործ՝ Պ. Պողոսյանի

2—941

I

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ,

Ա. ՀԵՔԻԱԹՆԵՐ

1 (1). ԿՏՐԷՋ ԴՊՈՑ

Գիգինօ, չիգինուր քայր մը իլան ախպար մը, Անունք մամնուն չէրին իրինց ծմրին, ուզիցէն նուր պան մը հասզընիլ յաչխարէն, ոտէն գիրինց բիշտրը, հիճան ծխանդէն, իլան կացէն։

Շուդ կացէն, քէչ կացէն, հասան թարլէ մը միչ։ Ալիվը միրից, իշիցէն չուրս տէս. դիսան դօն մը դօ։ Ախպարը ասաց.— Գրե՛գ. ուրթունք իդօ դօնը բառդէնք իրգօնը։

— Աղվո՛ր,— ասաց քայրը,— տրթունք բառպէնք։

Իլան կացէն, մդան դօնը, իշիցէն դավ մը նըստած ի։ Դպոցն քիչից դթօրը, դավէն վլօլը գդրից։

Դավը ասաց — Մի մալէ գիւէ։

— Էմ մարը գէս գաթ մը պիրուած է,— ասաց ախպարը։

Դավը սադգիցուվ։ Գայրը իլան տխպարը պատվիցուն դալաք ուդինէն, իշիցէն չորըր գօ յախշուր ուդէլա— խմիլա պանիր, ալտը յուղ դունը միչը գօ։

Ախպարը ասաց.— Գրե՛գ, հուս աբրէնք,— տղվո՛ր է։

— Աբրէնք,— ասաց քայրը։

—Դավը լո՞ բըր թանդինք,— ասաց տխպարը,— տուրացի թը գութանդինք զէ, ճօր գըտիրա՝ յիդ գըսաղնօ։

Գայրը իլան ախպարը դլուշինմիշ էլուն, դավը թադիցէն տարդագոդէ մը միչ, քէ ճօր չըտիրէր է։

Ամըն ուր ախպարը ավճըլըխ գուրթիր, չէլրանանա գըսբանէր։ Գունկիր իդօն, գուդէրին, գուխմէրէն, վոխտ գուանցնէրին։

Ուր մ՛ալէ քայրը ըլվսւսք բըր ինէ, բըր ըլվացվա. էնքընքը դուչումըշ իդուվ. «Ցօ՞ ըլվուսք ինիմ, ըլվացվէմ, էս՞ ախպարը գուկօ, գըդիսնօ գէս՝ ալըբէ»։

Կնոց լան ուդան, քէ դավը թանդած էրին, ըլվուսք իրօց, ըլվացվիցուվ, ճօրը ֆիտից, կիդէնը թրճիցուվ իւնդը, դավը ոտդցուվ, ջտհիլ ոտրծուվ. ասուց.— Հէյ, աշնէ՛ն, հօրը քէ ախպարը գէս սբանից, թը կիդիր, իս չըբըր սաղնէր է։ Զէս բըր առնիս, թը չը՝ բըր սբանիմ գքէ։

1(1). ԿՏՐԻՃ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում մի քույր ու եղբայր։ Նրանք դո՞ չէին իրենց կյանքից, ուղեցին մի նոր բան հասկանալ աշխարհից, վերցրին իրենց պաշարը, հեծան ձիերը, ելան դնացին։

Շատ գնացին, քիչ դնացին, հասան մի արտի։ Արևը մայր մտավ, նայեցին չորս կողմ, տեսան մի տուն կա։ Եղբայրն ասաց.—Քույրի՛կ, գնանք այդ տանը դիշերենք։

— Լա՛վ,— ասաց քույրը,— գնանք պատկենք։

Ելան գնացին, մտան տունը, տեսան մի դև է նստած։ Տղան քաշեց թուրը, դևի գլուխը կըտրեց։

Դևն ասաց.— Մի հատ էլ ղարկ։

— Իմ մայրն ինձ մի անդամ է (աշխարհ) բերել,— ասաց եղբայրը։

Դեը սատկեց։ Քույրն ու եղբայրը ման եկան րոլոր սենյակները, տեսան աշխարհում ինչքան ուտելու—իմելու բան կար, րոլորն այդ տանը կար։

Եղբայրն ասաց.— Քույրի՛կ, այստեղ ապրենք լավ է։

— Ապրե՛նք,— ասաց քույրը։

— Դևին ո՞ւր պիտի թաղենք,— ասաց եղբայրը,— եթե գրսում թաղենք, ջուր կդիպչի՝ կկենդանանա։

Քույրն ու եղրայրը մտածեցին, դևին թաղեցին դատարկ սենյակի մեջ, որ ջուր չդիպչի։

Ամեն օր եղբայրը գնում էր որսի, եղնիկներ սպանում։ Գալիս տուն, ուտում, խմում, ժամանակ էին անցկացնում։

Մի օր էլ քույրը լվացք պիտի աներ, պիտի լողանար. ինքն իրեն մտածեց. «Ո՞ւր լվացք անեմ, լողանամ, եղբայրս կգա կտեսնի՝ ամոթ է»։

Գնաց այն սենյակը, որտեղ դևին էին թաղել, լվացք արեց, լողացավ, ջուրը թափվեց, դետինը թրջվեց, դևը կենդանացավ, ջահելացավ, ասաց.— Հէ՛յ, աղջի՛կ, երբ որ եղբայրն ինձ սպաննեց, կարծում էր, թե ես չպիտի կենդանանամ։ Ինձ պիտի առնես, թե չէ՝ քեզ կսպանեմ։

Աչկէնը ասաց.— Ամէն, գառնէմ գքէ։

Առէն գմէ գմիգալը։ Շատ վախըտ անցաւ, քէչ վախըտ անցաւ, ախպարը խաբուր չէր քայլը չա շինած իր. կաղդոզ գտաբրէլին աչկէնը իլան դավը լսախպարը իրմինը։

Աչկընէն դգա մը իղաւ, ասաց. «Զա բըր շինիմ համօ։ Առաւ գադ չուճախը վարմիկ ղանդախը ասաց. «Ես ախպարը ցավուիրդ է, գարմամ մխնալը էմ ախպարը ուգած չամփուքը ղրանէմ ղէ, ես ախպարը գառնէ ղըպիրի պէս։ Չուճախը իտէր չամփուքը։ Մխնալը ախպարը դիտաւ ղէ, առաւ իպիր ղէ իղօն, բոլոր ղէ էր քարը։

Ախպարը շատ միամէղ իր, ասաց.— Վրօ՛դ, չուճախ մը ղրդո չամփուքը. արէ աղախինք աստղեա, քէ ղէթ թըզ ըլնաս, չուճախը գըբիհիմ։

Ըրգօքը բարաբար աղախիցէն ասգեա. աչկընէն ղէթ իղավ։ Մայրը ասաց.— Հհը, ղէթ իղավ ընդէ, ախպար, չուճախը գըբիհիմ։

Շատ վախըտ անցաւ, քէչ վախըտ անցաւ չուճախը գամաց-գամաց մինձաւ։

Դավը ուր մը ասաց աալ գնալը.— Տըղատ կագդոզ նալու բըր աբրէնք մինք։

Գնալը ասաց.— Զա շինինք։

Դավը ասաց.— Ըէ ախպարը գըսբանինք, սարբաստ գարրէնք։

Դավը իլան աչկէնը դախտաւէրին, չուճախը յադ դիզը խաղիր իր, չարը գօսէրին, գատագնիր ղէ։

Դավը ասաց.— Ուց մը գընամ, տրուցէ աբռունը յտխաբան գընիմ, քէ ախպարը գոկօ, գըխաձիմ ղէ, գըմիռնաւ։

Չուճախը գադ ալալը լսից, կնաց քրոէն ղարշա՝ յան վախըտը քրոէն գուկիր։ Ջէչ մը հիլ։ ցուավ, քուէն իգիք, ասաց տալ չուճախը. — Հատ չա՞ գուշինիս։

Չուճախը ասաց.— Գոա, չալգի գէս։

Գոէն չալգից չուճախը, իտէր լուսէն, տղուցէ տունին անցուն, ուցը դիտաւ ղչուճախը, լիդ քիշվիցուվ առնէն, անցան իղօն, նստուն։

Ղէր ուր ա՞լէ դավը ասաց.— Աս տրգաս չիղուվ։

Աչկէնը ասաց.— Զա շինինք։

Դավը ասաց.— Տօն հիվընտցէ, ասաւ քէ ախպարը՝ հիվանտ իմ, քէ ախպարը գաբի՝ չա գուգիս։ Ասաւ՝ ֆլան ղէղ թարլէն միչը գօն մը գօ, գունը պօլը հավըդ գօ, չուրս տէն թաղըր-թաղըր ձաղգընա գօ։ Գաբիս քէ ախպարը՝ յադ ձաղգընին իլան ճօր գըպիրիս ընձէ, գըճուղնուս։ Ըէ ախպարը հոն բաղդը ուրթօ, ձաղգընէն հանգը գըհիդգօ՝ խիլքը գըմաղէ։ Ես յադ վախըտը գընաւ մինձ ձոռկ մը, քէ ախպարը յիրգէնքը գըհանիմ, գիսկիմ կիդէնը, գըմիռնաւ։ Ագաբ թը քէ

Աղչիկն ասաց. —Ամա՛ն, կառնեմ քեղ։

Աւտն իրար։ Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ։ Եղբոյրը սեղյակ չէր, որ քույրն ինչ է արել. եղբորից գաղտնի էին ասլրում աղջիկն ու դևը։

Աղջկան մի տղա ծնվեց, ասաց. «Ա՞խ պիտի անեմ չիմաց։ Վերցրեց երեխային փաթաթեց լարուրի մեջ, ասաց. «Իմ եղբայրը սրտացավ է, կկնամ իր նկած ճամփին կդնեմ սրան, եղբայրս կվերցնի, կբերի»։ Երեխային դրեց ճամփի վրա։ Մխանը եղբայրը անսավ այն, վերցրեց բևրեց տուն, տանձնեց քրոջը։

Եղբայրը շատ միամիտ էր, ասաց.— Քույրի՛կ, մի կլեխա դուս ճանապարհին, արի աղոթենք աստծուն, որ քեղ կաթ լինի, երեխային պահես։

Սրկուսը միասին աղոթեցին աստծուն. աղջկան կաթ եգավ։

Քույրն ասաց.— Ըհ՛ը, ինձ կաթ եղավ, եղրա՛յր, երեխային կպահեմ։

Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ, երեխան կամաց-կամաց մեծացավ։

Դևը մի օր կնոջն ասաց.— Մինչև ե՞րբ այսպես թաքուն պիտի ապրենք։

Կինն ասաց.— Ա՞խ անենք։

Դևն ասաց.— Եգրորդ կսպանենք, աղաա կապրենք։

Դեն ու աղջիկը որ խոսում էին, երեխան այդտեղ ներկա էր, ինչ որ ասում էին, հասկանում էր։

Դեն ասաց.— Օձ կդառնամ, դրսի դռան վեբևը կթաքնվեմ, երբ եղբայրդ դա, կխայթեմ, կմեռնի։

Երեխան այդ բոլորը լսեց, քեռու դալու ժամանակ նրան ընդառաջ դնաց։ Մի քիչ սպասեց, քեռին եկավ, երեխային ասաց.— Այստեղ ի՞նչ ես անում։

Երեխան ասաց.— Քե՛ռի, շալակիր ինձ։

Քեռին շալակեց երեխային, դրեց ուսին, դրսի դռնից անցան, օձը տեսավ երեխային, դռնից ետ քաշվեց, անցան տուն, նստեցին։

Մյուս օրը դեն ասաց.— Այսպես չեգավ։

Աղջիկն ասաց.— Ա՞խ անենք։

Դևն ասաց.— Դու հիվանդացիր, ասա եղբորդ՝ հիվանդ եմ, քո եղբայրը կասի՝ ի՞նչ ես ուզում։ Ասա՝ այսինչ տեղ արտի միջին մի ուռն կա, ուռն բակում ավազան կա, չորս կոդմը տեսակ-ասակ ծաղիկներ։ Կասես եղբորդ՝ այդ ծաղիկներից և ջրից կբերես, կլավանամ։ Երբ եղբայրդ այնտեղ դնա, ծաղիկների բույրն առնի՝ կուշաթափվի։ Ես այդ ժամանակ մի մեծ թռչուն կդառնամ, եղբորդ կբարձրացնեմ երկինք, կդցեմ

ախպարը թը չըմիոնէր, դէս թը գըսբանէ, դա-
սիս էր՝ դէմ կլօխը իլան ձակէն թըղ պիրէ քէ,
կլխէն իղը գըհանիս, քէ ուդիլէն միչը գըտնիս.
իս գըսաղնամ, հէնը քիմը գըննամ։ Ակէն իղը քէ
ախպարը գուգիրցնիս, քէ ախպարը գուդի գէ՝
մէսը միգ ուէն, ասգիրը միդալ ուէն գըննու։

Չուճախը դալաք ասուձնէն լսից. մէդքը բիհից։

Չուճախը հիվընացուվ։ Ռոէն իգիք իդօն, դի-
սուվ չուճախը հիվունտ ի, ասուց.— Դաս, չվա՞
հիվունտ իս, չա դունու քէ։

Չուճախը ասուց.— Ռոա, լավը մուրթօ։

— Չըմ ուրթօ, դղաս,— ասուց քոէն,— իս
քուվըդ բըր ցնօմ ղըկըր ճուլնուս։

Չուճախը ուգից քոէն լըրմինը սուրվիլ, չուց
գունիդին։ Ռոէն սուրվըցնց չուճախը նիդիլ։ Ուր
մալէ չուճախը ասուց.— Ռոա, ագվըրցօ, ճուղցօ։

Ցագ վախըսը չուճուխէն մարը ոօդ հիվունտ
իղուվ, ասուց ախպուրը.— Կնաւ, ընծէ ձաղաձ
իլան ճօր պէր ֆլուն հավըղին։

Ախպարը գնաց։ Չուճախը առուվ ղթվունգը,
քոէն լիդիտուհը կաղդօգ կնաց։

Ախպարը հասուվ հավըղը, ճօր խմից, ձաղգը-
նէն հաւդ քիշից, խիլքը մադից ինգուվ։ Չուճախը
համան քոէն աբէն վըրքը մդուվ։ Իգիք ծաւկը
քոէն բըր վիրցընիր, չուճախը նիդից, ղծաւկը սագ-
գիցուվ։ Իլուվ չուճախը գքոէն իմցօց քոէն իմ-
ցուվ, ասուց.— Աս չա պուն իւ։

Չուճախը ասուց.— Մինձ ծաւկ մը նիդիցա՝
հալդէ, քիլէ ուրթունք իդօն։

Աւէն ձաղաձ ճօր, կացէն։ Սադգուձ ծօկը հաւդ
ցնաց։ Հասուն իդօն, ճօր իլան ձաղաձը ախպարը
իղօր քուրը։

Համան չուճախը նըքցէ մդուվ, ասուց.— Ցա-
մա, մինձ ծաւկ մը նիդիցա։

Մարը ասուց.— Ցօ՞ դօ։

Չուճախը ասուց.— Ձաղաձը պիբանք լան դի-
ղը գօ։

Մարը ասուց.— Ուշէդ-ուշէդ կլօխը իլան ակէն
ընծէ ղըպիրիս։

Չուճախը կնաց, ծակօն գլօխը իլան ակէն գըդ-
րից, իղօր էր մուրը։ Նադուվ դղան մուրը քուվը,
իշից մարը չա գուշինէ։ Մարը հանից կլխէն իղը,
իուէր լէբ ուդիլան միչը, ակէն իղը հանից, իուէր
լախպուրը ուդիլան միչը։ Չուճախը դիսուվ գա-
լալը, ասուն չանուց։

Իկիք քոէն, նադուն ուդիլա՞ բըր ուդին, չու-
ճախը ասուց.— Ռոա, մուդի, մամալը ընծի ծի-
թըրդծղ թըղ պիրէ։

Մարը ասուց.— Ըսկօ ուդիլա՞ն, գէ՞ր։

դեսին, կմեռնի։ Եթե ևղբայրդ չմեռնի, ինձ ապա-
նի, նրան կասես՝ գլուխս և պոչս թող բերի
Գլխի յուղը կհանես, քո ճաշի մեջ կդնես. ես կկեն-
դանանամ, առաջվա պես կլինեմ։ Պոչի յուղը եղ-
բորդ կկերցնես, եղբայրդ այն կուտի՝ միսը մի
կողմ, ոսկորը մի կողմ կդնա։

Երեխան այս բոլոր ասածները լսեց, միտքը
պահեց։

Երեխան հիվանդացավ։ Քեռին տուն եկավ,
տեսավ երեխան հիվանդ է, ասաց.— Տղա՜ս,
ի՞նչու ես հիվանդ, ի՞նչ ունես։

Երեխան ասաց.— Քե՛ռի, որսի մի՛ դնա։

— Չե՛մ դնա,— ասաց քեռին,— ես քո մոտ
կմնամ մինչև առողջանաս։

Երեխան ուղեց քեռուց սովորել, թե ինչպես
են կրակում։ Քեռին նրան կրակել սովորեցրեց։
Մի օր էլ երեխան ասաց.— Քեռի՛, լավացա, ա-
ռողջացա։

Այդ ժամանակ երեխայի մայրը սուտ հիվանդ
ձևացավ, եղբորն ասաց. —Գնա՛, ինձ ծաղիկ և
ջուր բեր այսինչ ավազանից։

Եղբայրը գնաց։ Երեխան վերցրեց հրացանը,
դաղտնի գնաց քեռու հետևից։

Եղբայրը հասավ ավազանին, ջուր խմեց, ծա-
ղիկների հոտն առավ, ուշքը գնաց, ընկավ։ Երե-
խան իսկույն քեռու վերարկուի տակ մտավ։
Թռչունն եկավ, որ քեռուն վերցնի, երեխան կը-
րակեց, թռչունը սատկեց։ Երեխան վեր կացավ,
քեռուն ուշքի բերեց, քեռին աբթնացավ, ասաց.—
Սա ի՞նչ բան է։

Երեխան ասաց.— Սի մեծ թռչուն խփեցի,
դե՛, արի գնանք տուն։

Վերցրին ծաղիկն ու ջուրը, գնացին։ Սաակած
թռչունը մնաց այնտեղ։ Հասան տուն, ջուրն ու
ծաղիկը եղբայրը տվեց քրոջը։

Երեխան իսկույն մտավ ներս, ասաց.— Մայ-
րի՛կ, մի մեծ թռչուն խփեցի։

Մայրն ասաց.— Որտե՞ղ է։

Երեխան ասաց.— Մեր բերած ծաղկի տե-
ղումն է։

Մայրն ասաց.— Շուտ գլուխն ու պոչը ինձ
կբերես։

Երեխան գնաց, թռչունի գլուխն ու պոչը կրտ-
րեց, տվեց մորը։ Տղան նստեց մոր մոտ, նայեց
մայրը ինչ է անում։ Մայրը հանեց գլխի յուղը,
դրեց իր կերակրի մեջ, պոչի յուղը հանեց, դրեց
եղբոր կերակրի մեջ։ Երեխան այդ բոլորը տե-
սավ, բան չասաց։

Քեռին եկավ, նստեցին ճաշի, երեխան ա-
սաց.— Քեռի՛, մի՛ ուտի, մայրիկն ինձ ձիթա-
պտուղ թող բերի։

Մայրն ասաց.— Ահա ճաշը, կե՛ր։

Թաքաքնէրը գիսուվ զէ, ասուց տալ դղան.— Աբրէս դգաս, իքինչը շարթը խաքիսիցուվ։ Ուչունչը շարթը րըր գադարիս։

«Սա ի՞նչ բան է,— ասաց,— սատանայի պիտի տամ աղջկաս»։

Աչբը բացից, տղայ՛ն ասաց.— Երեք պայման ունեմ։ Առաջինը՝ դու իմ աղջկանից ավելի գեղեցիկ պիտի գտնաս։ Երկրորդ պայմանը՝ քառասուն պարկ ցորենի, գարու և որոմի խառնուրդը երեք օրվա մեջ պետք է ընտրես, առանձ՛ին տոպրակների մեջ լցնես։ Երրորդ պայմանը՝ աղջիկս իր մատունին ծովը կգցի, պիտի բերնես այն, ցորը օր քեզ ժամանակ։

Տղան եկավ, մորն ասաց թագավորի ասածները։

— Ի՞նչ ես, մտածում, տղա՛ս,— ասաց մայրը։

— Ամեն ինչ կլինի, մի՛ վախեցիր,— ասաց տղան։

Հանեց մեղվի թևը, շփեց։

Մեղուների մեծը հասավ, ասաց տղայ՛ին.— Ի՞նչ ես ուզում։

— Իմ տգեղությունը պիտի գեղեցկացնես,— ասաց տղան։

Մեղուների մեծն ասաց.— Շա՛տ լավ, հեշտ է, ա՛ռ քեզ երեք տեսակ ծաղիկ, գնա ղիր մի պղինձ ջրի մեջ, տաքացրու, այդ ջրով լվացվի, երբ կվերջացնես, ծաղկի բուրմունքից կարբենաս ու կպառկես. ես կգամ, այդ ժամանակ աշխարհի գեղեցկությունը քո վրա կթափեմ։ Թագավորը քեզ աղջիկը պիտի տա, չխարվես. երեք աղջիկ պիտի բերի իր աղջկա հետ, երեսներին շղարշ դցած, կասի՛ քեզ. «Ա՛ռ աղջկան, գնա»։ Ես ում գլխին նստեմ, նրան կուղես։

Ինչ որ մեղուների մեծն ասաց, աղան կատարեց։ Թագավորի աղջկանից ավելի գեղեցիկ դարձավ, գնաց թագավորի մոտ։ Թագավորը տղային տեսավ, զարմացավ, աղջկան բերեց տղայի մոտ, տեսավ իր աղջկանից գեղեցիկ է։

— Առաջին պայմանն ավարտվեց,— ասաց թագավորը։

Դրանից հետո աղան շփեց մրջյունի ոտքը։ Մրջյունների թագավորն եկավ, ասաց տղային.— Ի՞նչ ես ուզում անեմ։

Տղան ասաց.— Քառասուն տոպրակ ցորեն, գարի, որոմ իրար են խառնված, երեք օրից պիտի լմնաես, ամեն տեսակն առանձին իր տոպրակի մեջ պիտի լցնես։

Մրջյուններին թագավորը հրամայեց մրջյուններին՝ քառասուն տոպրակ խառնուրդը դասեցին իրարից, լցրեցին տոպրակները։

Թագավորը տեսավ, ասաց տղային.— Ապրե՛ս տղա, երկրորդ պայմանն էլ ավարտվեց։ Երրորդ պայմանն էլ պիտի կատարես։

Աշկէնը քարից դաշդնէն ձվան միչը, ծօլ մը բոլից զէ։ Դղան իլվուծ ուրը կնուց ձվօն իզիրը, փուլը հանից, քարից ճըրէն միչը, ծօլր իզիկ, ասաց.— Օ՛ո, դթաքավիւրէն աշկընէն մադնէն.— իսկից զէ ձվօն չիզիրը։

Դղան ասուվ զմադնէն, կնուց թաքավիւրէն քուվը. իղօլ դմադնէն թաքավուրէն։

Թաքավուրը ասաց.— Ադվիրէ, արրէս դղաս, աշկէնը պիրիմ, օո։

Թաքավուրը իպիր ըրք աշկէն, ասաց.— Օ՛ո, քէ ուզուձր։

Դղան շաշմըր իղուվ, կլմօ ըրր առնէ։ Համան մէղօն իզիք նադուվ լոն աշկընէն կլիւէն. քէ դղան գուգի ղէ։ Դղան քիչից դաշկընէն ծառը, առուվ կնուց իղօն։

Ծօթը ուր, լութը իրղօն քէֆ ու խնդօմ իրէն, Ջըրքըն դղան հասուվ լէր մուրաղէն, մինք ալ հառնէնք մեր մուրաղէն։

Աղչիկը մատանին ծովը դցեց, մի ձուկ այն կուլ սվեց։ Տղան հաջորդ օրը դնաց ծովեղր, թեփուկը հանեց, դցեց ջրի մեջ, ձուկը նկավ, ասաց.— Ա՛ո, թաղավորի աղչկա մատանին,— այն դցեց ափ։

Տղան վերցրեց մատանին, դնաց թագավորի մոտ, տվեց նրան։

Թագավորն ասաց.—Լավ, ապրե՛ս տղաս, ազջկան բերեմ, ա՛ո։

Թագավորը բերեց երեք աղչիկ, ասաց.— Ա՛ո, ուզածդ։

Տղան շվարեց, որ մեկին ընտրի։ Մեղուն իսկույն նկավ, նստեց այն աղչկա դլխին, որին տղան ուզում էր։ Տղան քաշեց աղչկա ձեռքից, առավ, գնաց տուն։

Յոթ օր, յոթ գիշեր քեֆ ու խնդում արեցին։ Տղեղ տղան հասավ իր մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

4 (4). ԱՎԶԻ ԴՂԱՆ

Գըգինօ, չըղինուլ ավչը մուրթ մը։ Ադ մուրթը պըղդգծ սուրմած իր ավչըլըխը, շնդ վարրիդ ավչա իր։ Ան լէր օմրին մանեսոն չիր, անտր համուր քէ, ցիրինէն ամբուրը դայմա տարդօլ իր։ Գըկիդիր սրգագ ըլլիւը, գինա վազ չըր ուկիր ավչըլըխէն։ Ան ղէր օմրը անցնց ավչըլըխում, հաւլըվրից։ Ուր մը ալէ հիվընացավ, կիդացավ բըր միռնա, գինչից ղէր դղան ասուց էր. «Ավչըլըխ մինէ»։

Ավչէն միուվ Շնդ վախըտ անցավ, քէչ վաիըտ անցավ, ավչէն դղէն ինգըրդաքը իգէն, ացէն էր.— Ֆիլի, ուրթունք յավը։

Դղան ասուց.— Ես չըմ ուրթու։

Ինգըրնէն ացէն էր.— Ալըր ի քէ, քու դուդը ավչա իր, ասն ավչըլըխի չըր կիդէս։ Ցաստէն-յանտէն ինգըրդաքը խապըդիցէն գէ։ Իլուն կացէն լավը, հասուն լիռը։

Ավչը դղան շնդ գաշէմ իր, լէռօնքը կացած չիր։ Նադուն լախպըրէ մը լաշք, ուդիլա գիրուն, իլուն կացէն լէռօնքը իլվիլ։ Ինգըրդաքը ավչը դղան լիռը թօղէն, իլուն կացէն իղօն։ Ուրը մթնիլա իր։ Ավչը դղան վախցուվ, գինչից ինգըրդացը, ինգըրդաքը ծան չըդվէն։ Յադ վախըտը կիդացուվ ղէնք թօղած ին լիռը, իլուձ կացած ին։ Ճամպընէն չըր կիդիր, դիղ չըր կիդիր։ Ասուց. «Ուրթում լան ախպըրէն լաշքը, ընհիմ սուսէն ձարքը, բառգէմ»։

Մնթը կիդէնը ինգուվ։ Դղան վախըտունը էնքզէնք գարից սուսէն ձարքը, քի չիլնա իվար։ Ան

4(1). ՈՐՍՈՐԴԻ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում, մի որսորդ մարդ է լինում։ Այդ մարդը փոքրուց սովոր էր որսորդության, շատ վարպետ որսորդ էր։ Նա իր կյանքից գոհ չէր, քանի որ ցորենի ամբարը միշտ դատարկ էր։ Այդ դիտեր, բայց նորից որսորդությունից ձեռ չէր քաշում։ Նա իր կյանքը որսորդությամբ անցկացրեց, ծերացավ։ Մի օր էլ հիվանդացավ, ղազ, որ պիտի մեռնի, կոչեց տղային, ասաց. «Որսորդություն մի՛ տնի»։

Որսորդը մեռավ։ Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ, տղայի ընկերները եկան, ասացին նրան.— Արի՛, գնանք որսի։

Տղան ասաց.— Ես չե՛մ գնում։

Ընկերները նրան ասացին.—Ա՛մոթ է քեզ, հայրդ որսորդ էր, դու որսորդություն չդիտես։ Դես—դեն, ընկերները խարեցին նրան։ Ելան գնացին որսի, հասան լեռը։

Որսորդի տղան շատ տնփորձ էր, լեռներում չէր եղել։ Նստեցին աղբյուրի ակի մոտ, հաց կերան, գնացին լեռները մտն դալու։ Ընկերները որսորդի տղային թողեցին այնտեղ, գնացին տուն։ Օրը մթնեց։ Որսորդի տղան վտխեցավ, կանչեց ընկերներին, ընկերները ձայն չտվեցին։ Այդ ժամանակ հասկացավ, որ իրեն թողել են լեռը, գնացել։ Ճանապարհ չգիտեր, տեղ չդիտեր։ Ասաց. «Գնամ այդ աղբյուրի ակը, բարձրանամ սոտու կատարին, քնեմ»։

Մութը գետին ընկավ։ Տղան վախից ինքն իրեն կտպեց սոսու կատարից, որ վայր չընկնի։

ցուվ էփէլը վախըտ մը, գամուց-գամուց ջանավուրնէն ծանը գումուդընիր. սալ ախպայրը գակէրին ճծր խմիլա համուր։ Գըուրն լէոսնը միչը յադ դիղը բաս ճօր գար։ Դղան վախըտունը հիչ չըգարցուվ բառգիր։ Ղաթ մ՝ալէ իգէն ըրք-չուրս ջանավուր։ Ադմինք քանդան աղվուր էրին. ադմինց պօրուը լալս դուդիր։

Դղան ծասուց. «Նիդիմ յասուցմէ մէլը»։ Իլլից գթվունգը, վիրունց իվար դումպըցօց։ Ջանավուրնէն մէլը սադդիցուվ։

Աւրախդան իղուվ, արիվը ձիթից, դղան իճուվ իվար, քիրթից ջանավուրէն գիչէն, առուվ կնուց։ Ցասաէն-յանաէն ինգուվ, դուռուվ հանուվ իդօն, մուրը ծասուց.— Ցամա, ըսկօ՞ աղվուր գիշէ մը պիրա։

Մարը բաշլից լուցը, ծասուց.— Զվան ածն ավջըլըխ կացիր։

— Ընգըրդաքս խապըդիցէն,— ծասուց դղան,— գաթ մ՝ալէ ավջըլըխ չըմուրթօ։

— Ջաս գիշէն չա ըրը շինինք,— մարը ծասուց։

— Աս գիշէն շուդ սօղ գընօ, ձախի ղէ, գուդօն քէ հէնկ հարէր իսկա, ուգօ հագուր իսկա։

Աւրախդան դղան մուրը ուրթիլէցն չհիլիցուվ, առուվ զգիշէն, կնուց։

Զարշէն գալվիր, ճըհօդ մը գիսուվ գէ, ծասուց սալ դգան.— Ջաս գիչէն գուձախի՞ս։

— Հա, գուձախիմ ղէ.— ծասուց դղան։

Ճըհօդն իդօր էր հագուր իսկա։ Ճըհօդը գուկիդիր ադ գիշէն գիժիր ըրք հաղուր պատուս իսկա։

Ավչէն դգան իգիք իդօն, իտօր գփարէն մուրը գիրուն, խմիցէն, վախըտ անցըցէն։

Ադ վախըտէն թաքսվուրը գինչից ղդգան։ Դղան պանէ խաբուր չիր։

— Թաքսվուրը չա գիրաք բըր գինչէ,— ծասուց դգան էր մուրը,— Ուրթում, յամա։

Մարը ծասուց.— Կնու, մըվախնու, իշէ թաքսվուրը չա գուանէ։

Ավչէն դգան կնուց թաքսվուրէն քուվը, գիսուվ՝ թաքսվուրը նսդուձ է, ան աղվուր գիշէն ալ բագէն էրվան գախուձ է։

Ասուց թաքսվուրը.— Ըսօ գիշէն տօն պիրուձ ըս։

Դգան ծասուց.— Իս գիշէ մը պիրուձ իմ, չըմկիդէ ըսօ՞ է, թէ՞ ընօ է։

Թաքսվուրը ծասուց սալ ավչէն դգան.— Ցաս գիշին գասը միգ գուղիմ։

Դղան ծասուց.— Ուրթում էմ մուրը ծախմ, քէ չուղուբ գուդօմ։

Դգան իլուվ կնուց իդօն։

Իավական ժամանակ անցավ, կամաց-կամաց գազանների ձայնը մոտենում էր. գալիս էին ադրյուր ջուր խմելու։ Ամրողջ լեռան վրա այդտեղ միայն ջուր կար։ Տղան վախից չկարողացավ քնել։ Մեկ էլ երեք-չորս գազան եկան։ Ընրանք այնքան լսվն էին, որ նրանց բուրդը (մորթին) լուսս էր ասլիս։

Տղան ասաց. «Վրասնգնգ մեկին սպասնեմ»։ Շուտ տվեց հրացանը վերեից ներքև, կրակեց։ Գազաններից մեկը սատկեց։

Լուսը բացվեց, արեը ծագեց, տղան ցած իջավ, գազանի մորթին քերթեց առավ, գնաց։ Դես ու դեն ընկավ, դժվարությամբ տուն հասավ, մորն ասաց.— Մայրի՛կ, ահա տես, ի՛նչ լավ մորթի եմ բերել։

Մայրն սկսեց լաց լինել, ասաց.— Ինչո՞ւ որսի գնացիր։

— Ընկերներս իաբեցին,— ասաց տղան,— էլ չեմ գնա։

— Այս մորթին ի՞նչ ենք անելու,— ասաց մայրը։

— Այս մորթին շատ թանկ պիտի լինի, ծախիր, եթե հինգ հարյուր ոսկի տան, գու հազար ոսկի ուզիր։

Առավոտյան տղան չսպասեց մորը, վերցրեց, գնաց։

Շուկայում ման էր գալիս, մի հրեա տեսավ նրան, ասաց.— Այս մորթին ծախո՞ւմ ես։

— Այո՛, ծախում եմ,— ասաց տղան։

Հրեան նրան հազար ոսկի տվեց։ Հրեան գիտեր, որ այգ մորթին երեք հազար կտոր ոսկի արժեր։

Որսորգի տղան եկավ տուն, փողը տվեց մորը, կերան, խմեցին, ժամանակ անցկացրին։

Այգ ժամանակ թագավորը կանչեց տղային։ Տղան բանից տեղյակ չէր։

—Թագավորն ի՞նչի համար պիտի կանչի,— ասաց տղան մորը,— գնա՞մ, մայրի՛կ։

— Գնա՛, մի՛ վախեցիր,— ասաց մայրը,— տե՛ս, թագավորն ի՞նչ է ասում։

Որսորգի տղան գնաց թագավորի մոտ, տեսավ՝ թագավորը նստած է, այն լավ մորթին էլ պատից կախված։

— Այս մորթին դու՞ ես բերել,— հարցրեց թագավորը տղային։

— Ես եմ բերել,— ասաց տղան,— այ՞ս է, թե՞ այն է, չգիտեմ։

Թագավորն ասաց որսորգի տղային.— Այս մորթուց տասը հատ ուզում եմ։

— Գնամ մորս ասեմ, քեզ պատասխան կտամ,— ասաց տղան։

Տղան ելավ գնաց տուն։

Մարը ասուց.— Թաքավոր չա՞ ասուց քէ։

Դղէն ճահրան մօթ իր։

— Դուսը գիշա զուգէ,— ասուց դղան,— Թաքավորը յիրմինիս, իս չա բըր շինիմ։

Մարը ասուց.— Մըվախնու, դղաս, ադ ղըղդանչը վէգըրէն պանն է. Վաղըրը դիսուվ ղգիշէն Թաքավորէն քուվը, էնք ալէ գուգէ ունունօ յադ գիշէն։ Ադոր համար ղադ իրօց, ամմա, մըվախնու, կնօ ասօ Թաքավորէն՝ քառասուն ըղդը պիտ կինա գուգիմ, քառասն ըրղաթ, քառասն ուր մուդաթ գուգօս՝ գիշխադունքը դըպիրիմ։

Թաքավորը լսից դղէն դասաձնէն, իդօր ղալալը։ Դգան իլուվ կնուց ի դօն, ասուց տալ մարը.— Ցամա, համօ չա բըր շինիմ։

Մարը ասուց.— Օղլում, կնօ լան ախպըրէն լաշքը, պուց չուղօր մը, լէց գկինէն միչը, ախպըրէն ճօրը ձաձգէ, Թըղ չըրվընու, իլ սուսէն ձարքը։ Կիշիրում գուկուն ջանավուրնէն, գըխմին գկինէն, շուդ անօշ գուկօ իրինց։ Հա կըխմին, Թէ կըխըմին, դըքըր փիրիրը ուդիցէ, դըհարփինուն, չըրգարնուն քիլին։ Դիշնիս, գըպռնիս գիրինք, կիշիսդունքը գըքիրթիս, գառնուս գուկուս։

Ջարը ասուց մարը, դղան ուրօց գէ, պուռնը յառանչ կնուց։ Ջանավարնէն պռնից, գիշխադունքը առուվ իգիք, կնուց իդօր զէ Թաքավուրէն։ Թաքավուրը հանից իդօր դղէն ըրգը գուլուկ իսկա։ Վազէրը գաղ լսից, գիշխադունքը գիսուվ, ասուց. «Ի՛շի, յադ դղէն կլօխը չա բըր պիրիմ, ընօի հիչ պուն չասուց»։

Դղան կնուց իդօն, հիչ պանէ իսրուր չէր։ Վաքէրն ալէ կնուց Թաքավուրէն քուվը, դիսուվ զգիշխադունքը. ասուց.— Օ՛խ, նադուր աղվուր ին գիշխադունքը. լայս գաղօն դունը միչը։ Թաքավո՛ր արրէ, տօն հալվուր իս. Թը գըԹագալամըշ ընօս, նադո՞ւր աղվուր գըննօ։

Թաքավուրը ասուց աալ վազիրը.— Ջարան չա ի՛։

Վազէրը ասուց.— Շուդ հիշդ է։ Փլուն Թաքավուրէն աշկէնը Թը գառնիս, դանէնկ դարէ կըաառնուս։

— Ո՞վ բըր պիրի զէ,— ասուց Թաքավուրը։

Վաղէրը ասուց.— Գիշէն պիրուդ ավչէն դղան գըպիրի ղէ։

Թաքավուրը ամըր ուրօց.— Թըղ ավչէն դղան ուրԹու գան Թաքավուրէն աշկէնը պիրէ։

Դղան ասուց.— Ի՛ս չըմ գառնու պիրի ղէ ըրքըր իմ մուրը չասիմ։

Դղան ասուց տալ մարը.— Թաքավուրը փլուն Թաքավուրէն աշկէնը գուգէ, իս չա բըր շինիմ։

Մարը ասուց.— Մըվախնու, դղաս, Թաքավուրէն լիրմինը չուրս գուլուկ իսկա ուղէ, Թը դուգօ Թաքավուրը դիսկէն, իս դասիմ քէ չա բըր շինիս։

Մայրն ասաց.— Թագավորն ի՞նչ ասաց քեզ։

Տղան ախուր էր։

— Տասր մորթի է ուզում ինձանից,— ասաց տղան,— ես ո՞ւր պիտի առնեմ։

Մայրն ասաց.— Մի՛ վախենա, տղաս, դա նախանձ վեզիրի գործն է։ Նա մորթին տեսել է թագավորի մոտ, ինքն էլ է ուզում ունենալ։ Դրա համար էլ այդպես է արել, բայց մի՛ վախենա, գնա՛, թագավորին ասա՝ քառասուն ուղտի բեռ գինի եմ ուզում, քառասուն բանվոր և քառասուն օր ժամանակ տուր, որ մորթիները բերեմ։

Թագավորը լսեց աղայի ասածները, ամեն ինչ տվեց։ Տղան էլավ գնաց տուն, մորն ասաց.— Մայրի՛կ, հիմա ո՞ւր պիտի առնեմ։

Մայրն ասաց.— Գնա՛, աղաս, այն աղբյուրի ակը, մի փոս փորի, գինին լից մեջը, աղբյուրի ջուրը ծածկիր, որ չերեա, րարձրացիր տոսու կառաըը։ Գիշերով գազանները կգան, կխմեն գինին, նրանց ջաա քաղցր կթվա։ Հա՛ կխմեն ու կխմեն, մինչև փորերը ուռչի, կհարբեն, չեն կարողանա քայլել։ Կիջնես, կրոնես նրանց, կքերթես, մորթիները կվերցնես ու կգառնաս։

Մայրն ինչպես ասաց, տղան այդպես էլ արեց, բանը հաջողվեց։ Գազաններին րոնեց, մորթիներն առավ եկավ, տարսով տվեց թագավորին։ Թագավորը նրան երկու փութ ոսկի ավեց։ Վեզիրը լսեց, մորթիները տեսավ, ասաց. «Տե՛ս, այդ աղայի գլուխը ի՛նչ պիտի բերեմ, ինձ ոչինչ չասաց»։

Տղան գնաց տուն, րանից անտեղյակ։ Վեզիրն էլ գնաց թագավորի մոտ, տեսավ մորթիները, ասաց.— Օ՛խ, ինչքան լավն են մորթիները. լույս են աալիս աան մեջ։ Թագավո՛րն ապրի, գու ծերացել ես, եթե երիտասարգանաս, ինչքա՜ն լավ կլինի։

Թագավորն ասաց վեզիրին.— Ի՞նչ հնար կա։

Վեզիրն ասաց.— Շատ հեշտ է, եթե այսինչ թագավորի աղջկան առնես, ատանհինգ տարեկան կգառնաս։

— Ո՞վ պիտի բերի նրան,— հարցրեց թագավորը։

Վեզիրն ասաց.— Մորթիներ բերող որսորդի աղան կբերի նրան։

Թագավորը հրամայեց.— Թող որսորգի աղան գնա այդ թագավորի աղջկան բերի։

Տղան ասաց.— Ես չեմ կարող նրան բերել մինչև մորս չասեմ։

Տղան ասաց մորը.— Թագավորն այսինչ թագավորի աղջկան է ուզում, ի՞նչ պիտի անեմ։

Մայրն ասաց.— Մի՛ վախենա, տղաս,— թագավորից չորս փութ ոսկի ուղի, եթե թագավորը ոսկին տվեց, ես կասեմ, թե ինչ պիտի անես։

Դղան կնոջ թանջուրէն քուվը, չուրս գալուկ իսկա ուղից։ Թանջուրը լսից գգրէցը, չուրս գալուկ իսկա իզօր դղէն։

Դղան առուվ իսկէն, կնոց իզօն, ասուց,— Յամա, ըսես իսկէն։

Մարը ասուց.— Դղաս, պունը շատ ազվուր է, մը վախնու, օս դաս իսկէն հիդիտ, կնօ տալ ան Ջանջուլէն մամլաքաթը։ Իշալլա, պունիս աղվոր գրննօ։

Դղան պարէմընից դմարը, առուվ գիսկէն, կընոց։ Շատ կնոց, քէչ կնոց, էրգան ճամպուք կնոց, հասուվ դիդ մը, իշից դավ մը նադուձ ի ճամպուն իզերը։ Ադ դավը լոթը սալդուկ բդէնծ տրուձ իր ճամպօն իզերը։ Դավը դիսուվ զգգան.— Օ՜ֆ, ըսկօ ավ մը իզիկ,— ասուց, կինչից սալ դղան,— ասն ուվ իս, լօ գուրթուս։

Դղան ասուց տալ դավը.— Իս ավջէն դղան իմ։

Դավը ասուց.— Տօն էմ էխպապչէն դղան իս, արէ, մը վանինու։

Դղան կնոց դավէն քուվը. դավը ասուց ասլ դղան.— Ջա՜ գունէս, ուդիմ շատ քազգուձ իմ։

Դղան ասուց.—Ուրթում մանկաք պիրիմ, դուդ՞ս։

Դավը ասուց.— Հա՛։

Դղոն կնոց սորէ մը մանկաք իպիր։

Դավը բուլամադա-բուլամադա կծշդ գիրուվ, ասուց.— Է՜հ, դղօ, լօ գուրթուս համօ տօնս։

Դղան ասուց.— Թանջուրէն աշկէչնը ըրր պիրիմ։

Դավը ասուց.— Ադ շատ ուժուր է, լաս ճամպուքը ըրգը ախպար գունէմ, ծանկ չըր անցընին ճամպին։ Մէլը շատ գդրէջ ի, միգալը՝ գըրթանը գընծէ։

Դղան ասուց.— Ջա՜ շինիմ։

Դավը ասուց.— Օ՜ռ, ուդամ քէ մրգընուցիս ըրգը թիլ մուգ, լիփըր նիդը գիլնէս, չանի ղէ. լան վուխտը իս քէ գըհանէմ։ Ընծը չուցըր աղվըրթէն իրիր, էմ ախպըրդօցն ալ իրօր։

Դղան ասուց,— Ջա՜ գըսիրին քէ ախպըրդաքը,

Դավը ասուց.— Իքինջը սիպարը ճդտ գըսիրէ. ուչինջը ախտարը գիմիշնա գըսիրէ։ Օ՜ռ, կնօ իրինց, ալ մը վանինու։

Ավջէն դղան չարըր դավը ասուձ իր, արուվ գէ։ Շատ կնոց, քէչ կնոց. հասուվ իքինջը դավէն քուվը։ Իշից, դավը քարէլն հիդը գուխաղօ, քարիր գուկուլօրէ։ Դավը գինչից ղդղէն, ասուց.— Տօն ուվն իս, լօ գուրթուս։

Դղան ասուց.— Իս ավջէն դղան իմ։

Դավը ասուց.— Ջա՜ պիրուձ իս, ընծէ, քու դուդը էմ էխբաբն իր։

Դղան ասուց.— Ըղդիր պիրուձ իմ քէ։

Դավը շատ խնդուց, ասուց տալ դղան.— Ցօ՜ գուրթուս։

Տղան գնաց թագավորի մոտ, չորս փութ ոսկի ուղեց։ Թագավորը լսեց խոսքը, չորս փութ ոսկի ավեց աղային։

Տղան վերցրեց ոսկին, գնաց առն, մորն ասաց.— Մայրի՛կ, ահա ոսկին։

Մայրն ասաց.— Տղա՛ս, գործը շատ լավ է, մի՛ վախենա, առ այս ոսկին հետդ, գնա այն թագավորի երկիրը։ Գործդ լավ կլինի։

Տղան մնաս բարով ասաց մորը, տոավ ոսկին, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, երկար ճամփա գնաց, հասավ մի տեղ, տեսավ մի գև նրստած է ճամփեզրին։ Այդ գեը յոթը գատարկ պղինձ էր դրել ճամփեզրին։ Գեը տեսավ տղային.— Օ՜ֆ, ահա եկավ որսր,— ասաց, կանչեց աղային,— գու ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

Տղան ասաց գեին.— Ես որսորդի աղան եմ։

Գեն ասաց.— Դու իմ բարեկամի տղան ես, արի՛, մի՛ վախենա։

Տղան գնաց գևի մոտ, գեն ասաց աղային.— Ի՞նչ ուզես ուտելու, շատ քաղցած եմ։

Տղան ասաց.— Գնամ ոչխարներ բերեմ, կուաե՞ս։

Գեն ասաց.— Այո՛։

Տղան գնաց մի հոտ ոչխար բերեց։

Գեը շատ-շատ կուշա կերավ, ասաց.— Է՛, տղա՛, դու հիմա ո՞ւր ես գնում։

Տղան ասաց.—Թագավորի աղջկան պիտի բերեմ։

Գեն ասաց.— Դա շատ դժվար է, այս ճամփի վրա երկու եղբայր ունեմ, թոչուն չեն թողնում սնցնի ճամփով։ Մեկը շատ կարճ է, մուսը՝ փոթորիկ է հնձում։

Տղան ասաց.— Ո՜ւֆ, անեմ։

Գեն ասաց.— Ա՛ռ, բեղերիցս երկու թել մաղ առ քեզ, երբ նեղն ընկնես, մաղերն իրար քսի. այն ժամանակ ես քեզ կհատնեմ։ Ինչպես որ ինձ լավություն արեցիր, եղբայրներիս էլ արա։

Տղան ասաց.— Եղբայրներդ ի՞նչ են սիրում։

Գեն ասաց.— Երկրորդ եղբայրս ուղտ է սիրում, երրորդ եղբայրս գոմեշ է սիրում։ Ա՛ռ, առ իրենց, էլ մի՛ վախենա։

Որսորդե տղան արեց այն, ինչպես գեն էր ասել։ Շատ գնաց, քե քիչ գնաց, հասավ երկրորդ գևի մոտ։ Տեսավ, գեը քարերի հետ է խաղում, քարեր է գլորում։ Գեը կանչեց աղային, ասաց.— Դու ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

Տղան ասաց.— Ես որսորդի աղան եմ։

Գեն ասաց.— Ի՞նչ ես բերել ինձ, հայրդ իմ բարեկամն էր։

Տղան ասաց.— Ուղտեր եմ բերել քեզ։

Գևը շատ ուրախացավ, աղային ասաց.—Ո՞ւր ես գնում։

Դդան ասաց. Թաքավորէն աշկէնը բըր պիրիմ։

Դավը ասաց.— Օ՛ռ ըրգը թիլ ա՞ուլ, հնրըր նիղը ինուս, չաղի գէ, իս քէ գըհնանիմ։

Դդան անցավ կնաց ետևնջը դավէն քավը։ Ջուցըր առչը դավէն իրօց, ետևնջը դավէն դան իրօց։

Ուչինջը դավը ըրմսուղէն վիրիվին գօսնէր-դուսառնէր ֆրթանս քիմը։ Էր հադինէն իդօր դավէն, դավը մըրգընացը ըոգը թիլ մուղ իդօր դղէն, անցավ կնաց։

Շուդ կնաց, քէչ կնաց, հասավ յան թաքավորէն մամլաքութը, քէ յաշկէնը բըր առնէ։ Դդան իշից թաքավորէն աշկընէն համուր մհարըրա գօ։ Կնաց խունը նադավ, գիրավ, խմից, պնավիցավ։ Ուր մնէլ ասաց. «Հիրա՛ք է, պնավիգօ, ուրթում թաքավորէն աշկէնը ուզիմ»։ Կնաց թաքավորէն քավը, մդավ ընքցէ, փշից թաքավորը նըսդած ի. պարիվ իդօր, նադավ։

Թաքավորը ասաց.— Պարա ընանօ, չա՝ գուգիս։

Դդան ասաց.— Ասդրձը ամրում, քէ աղվոր աշկէնը ընձէ գուզիմ։

Թաքավորը ասաց.— Շուդ աղվոր է, ամմա ըրք շարթ գունէմ, թը զընիս պէ, դաշկէնը գուզամ քէ, թը չիրիր գէ՝ կլօիտ զըզդրիմ։

Դդան ասաց.— Գինիմ պէ։

Թաքավորը ասաց.— Ըրք փէհլվան գունէմ, էմ փէհլվանէն դարշը փէհլվան զըպիրիս. գէմ փէհլվանէն ըսկիցէն, դաշկէնը դավ, թը չէ՝ քէ կլօխը գըզդրիմ։ Ցութը ուր քէ մնդաս։

Դդան ասաց.— Շուդ աբրէս, թաքավո՛ր։

Իլավ կնաց խունը։ Զարս-հէնկ ար անցավ, դղէն մէդքը ինգան դաւիրը, ասաց. «Աս շուդ աղվոր իդավ, դավիրը ընձէ զրհասնէնա»։

Ցութը ուր իդավ թաքավորը իլան իրօց. «Օթընջը ուրը փէհլվանէն բըր խագան»։ Դդան չաղից մուզը, իգիք առչը դավը, ասաց.— Զա՞ գունէ։

Դդան ասաց.— Թաքավորը շարթեր գունէ, վոնղը բըր ինինք պէ։

Դավը ասաց.— Հիչ մը վախնօ, քաղցած իմ, պիր ուդիլա, ուդիմ։

Դդան իպիր ուդիլէն, դավը գիրավ, գիշդացավ։

Դդան ասաց.— Թաքավորէն ատչը շարթը՝ յոթը բղէնճ ուդիլա բըր ուդիս, յամըն բղնօը միչ մանկէ մը գօ, գաւնո՞ւս ուդիս գէ։

Դավը ասաց.— Հիչ մը վախնօ, նադըը ասիս, քանդան գուդիմ։

Դդան ասաց.— Վնդը մէդդունը բըր ընինք, չարըր էհալի գօ, բըր ուկօ։

Տղան ասաց.— Թագավորի աղջկան պիտի բերիմ։

Դևն ասաց.— Ա՛ռ երկու թել մաղ, երբ նեղն ընկնես, քսի իրար, ես քեզ կհասնեմ։

Տղան թողեց գնաց երրորդ դևի մոտ։ Ինչ որ առաջին դևի հետ էր արել, նույնն էլ արեց երրորդ դեի հետ։

Երրորդ դեը գետի վրա փոթորկի պես անցուդարձ էր անում։ Տղան նվերները տվեց դևին, դևը բեղից երկու թել մաղ տվեց, տղան թողեց գնաց։

Շատ դնաց, քիչ դնաց, հասավ այն թագավորի երկիրը, որի աղջկան պիտի բերեր։ Տղան տեսավ՝ թագավորի աղջկա համար կոիվ է գնում։ Գնաց իշևանատանը նստեց, կերավ, խմեց, մանեկավ։ Մի օր էլ ասաց. «Հերի՛ք է ման դամ, գնամ թագավորի աղջկան ուղեմ»։ Գնաց թագավորի մոտ, մտավ ներս, տեսավ թագավորը նըստած, բարև տվեց, նստեց։

Թագավորն ասաց.— Բարի լինի, ի՞նչ ես ուղում։

Տղան ասաց.— Աստծու հրամանով քո սիրուն աղջիկն եմ ուզում։

Թագավորն ասաց.— Շատ լավ, բայց երեք պայման ունեմ, թե կատարես, կտամ աղջիկս, թե չկատարես՝ գլուխդ կկտրեմ։

Տղան ասաց.— Կկատարեմ։

Թագավորն ասաց.— Երեք փահլևան ունեմ, իմ փահլևաններիդեմ ուրիշ փահլևաններ կբերես, թե նրանք իմ փահլևաններին հաղթեցին, աղջիկս կտամ, թե չէ՝ գլուխդ կկտրեմ։ Յոթ օր քեզ ժամանակ։

Տղան ասաց.— Շա՜տ ապրես, թագավո՛ր։

Ելավ գնաց իշևանատուն։ Չորս-հինգ օր անցավ, աղան հիշեց գևերին, ասաց. «Այս շատ լավ եղավ, գևերն ինձ կօգնեն»։

Յոթ օրը լրացավ, թագավորը հայտարարեց. «Ութերորդ օրը փահլևանները պիտի խաղան»։ Տղտն երկու մագն իրար քսեց, ևկավ առաջին գևը, ասաց.— Ի՞նչ կա։

Տղան ասաց.— Թագավորը պայմաններ է դրել, վաղը պետք է կատարենք։

Դևն ասաց.— Բնավ մի՛ վախենա, քաղցած եմ, ուտելիք բեր, ուտեմ։

Տղտն ուտելիք բերեց, դևը կերավ, կշտացավ։

Տղան ասաց.— Թագավորի առաջին պայմանն է՝ յոթը պղինձ կերակուր պիտի ուտես, ամեն պղնձի մեջ մի ոչխար կա, կարո՞ղ ես ուտել։

Դևն ասաց.— Բնավ մի՛ վախենա, ինչքան ասես՝ կուտեմ։

Տղան ասաց.— Վաղը պիտի ասպարեզ իջնենք, ինչքան ժողովուրդ կա, պիտի դա։

Դավը ասուց տալ դղան.— Թաքավիւրէն ասօ, էր փէհլվանը յաոտնչ թըղ ուդէ։ բաղդան ուլին չըհանին մէ։

Օ՛թընչի ուրը իղուվ, մէլդուն իճուն, մխրէմ քիմը էհալի գար։ Ամըն փէհլվանա լութը բղենծ ուդիլա՛ ղար, լամրն բղընծը միչ մակէ մը գար։

Թաքավիւրը ասուց տալ դղան.— Ջէ փէհլվանը թըղ ուդէ։

Դղան ասուց.— Շիւդ արրէ՛ս, թաքավիւր, քէ փէհլվանը յաոտնչ թըղ ուդէ։

Թաքավիւրէն փէհլվանը գիրուվ, գիրուվ, չարս րըղենծ գիրուվ, ըրք մէլը ճիուց՝ չգարցուվ ուդիր։ Դղէն փէհլվանը ձալից ղծաուվէն, ասուց.— Ցա՛, պի մըսմըլլա,— բաշլից ուդիլը։ Հա՛ գիրուվ, թէ՛ գիրուվ լութը բղենծը գիրուվ, թաքավիւրէն փէհլվանէն ղըրք բղենծն ալէ գիրուվ, ասուց.— Հալա զո՞ ղերը։

Ացէն.— Ըզգո՛, շարթը իալխսիցուվ։ Էհալին ալալը ձափկից. «Դղան ղաչամըշ իղուվ» ասուց։

Իքինչը ուրը, իքինչը փէհլվանը բըր իաղօ։ Թաքավիւրը լէր փէհլվանէն ծառը մաքուռ իղծր, դղան ալէ փէհլվանէն ծուռը մաքուռ իղծր, ուվըր յաոտնչ խաբուր գըպիրէ ֆլուն թաքավիւրէն լիրմինը, ան գու ղաչամըշ ըննօ։ Դղան չաղից դմուգը, ֆըրթանը ընծուղ դավը իգիք, ասուց.— Ծէր ընօ, չա՞ գօ։

Դղան իղօր դավէն ադիլա։ Դավը գիրուվ, իճուվ մէլդունը, աուուվ վմաքուռը, ասուց դղէն.— Մըվախնու, թաքավիւրէն փէհլվանը թըղ ուրթօ յաոտնչ։

Նողուն գադիգէ մը ծարք, դավը ասուց.— Ծըմինք թուրթօն, համճինք։

Դղան ասուց.— Վախըտ կանցնա։ Թաքավիւրէն փէհլվանը Ղարաչէն* անցուվ։

Դղէն փէհլվանը «հոպ» ասուց, ղաթ մալէ չէրվընցուվ։ Թաքավիւրէն փէհլվանէն կլխէն կիխից անցուվ, կնիւց մաքաուրէն չուղծը ուշէդ իպիր։ Իհալէն ձափկիլը բաշլից։ Իքինչը շարթն ալէ խալխսիցուվ։

Ուչընչը շարթը՝ թաքավիւրէն գըրէչ փէհլվանը իլան դղէն փէհլվանը իճուն մէլդունը, բըր թարվէն։ Դղան չաղից դմուգը, իգիք դավը, ասուց.— Ծէր ընօ, չա՞ գօ։

Դղան իգծր դավէն ուդիլա։ Դավը գիրուվ, իլըմից, իճուվ մէլդունը, ասուց,— Հը՛ը մըվախնօ։

Դղէն փէհլվանը թաքավիւրէն փէհլվանը պըրանից, իհալէն միչին արուցէ քարից, թաքավիւրէն փէհլվանը սադգիցուվ։ Իհալին չանգան խնդուց.

Դևն ասաց.— Թագավորին ասա, թող նախ իր փահլևանն ուտի, որ մեր դլխին խագ չխաղան։

Ութերորդ օրն եղավ, ասպարեզ իջան, մըրջյունի չափ ժողովուրդ կար։ Ամեն փտհլևանի համար յոթ պղինձ կերակուր էին դրել, ամեն պղնձի մեջ՝ մի ոչխար։

Թագավորը տղային ասաց.— Ջո փահլևանը թող ուտի։

Տղան ասաց.— Թագավոր, շա՛տ ապրևս, թող քո՛ փահլևանն առաջ ուտի։

Թագավորի փահլևանը կևըա՛վ, կե՛րավ, չորս պղինձ կերավ, երկուսը մնաց՝ չկարողացավ ուտել։ Տղայի փահլևանը թևևրը քշտեց, ասաց.— Հանո՛ւն աստծո,— սկսեց ուտել։ Հա՛ կերավ, թե՛ կերավ, յոթը պղինձ (կևրակուրը) կերավ, թագավորի փահլևանի երեք պղինձն էլ կերավ, ասաց.— Դեռ կա՞։

Ասացին.— Չկա՛, պայմանը կատարվևց։ Ժողովուրդը ծափահարեց. «Տղան շահեց» ասաց։

Երկրորդ օրը, երկրորդ փահլևանը պիտի խաղար։ Թագավորն իր փահլևանին մի նամակ տըվևց, տղան էլ իր փահլևանին նամակ ավեց, ով որ առաչինը պատասխանը բերի այսինչ թագավորից, նա հաղթող կճանաչվի։ Տղան երկու մազն իրար քսեց, քամի հնձող դևն եկավ, ասաց.— Բա՛րի լինի, ի՞նչ կա։

Տղան ուտևլիք տվեց դևին։ Դևը կերավ, իչավ հրտպարակ, վերցրեց նամակը, աղային ասաց.— Մի՛ վախնա, թող թագավորի փահլեւտնն առաջ գնա։

Նստեցին մի բլրի գագաթին, դևն ասաց.— Մխախոտ ծխենք, հտնգստանանք։

Տղան ասաց.— Ժամանակն անցնում է։ Թագավորի փահլևանը կարաչայն* անցավ։

Տղայի փահլևանը «հոպ» ասաց, անհետացավ։ Թագավորի փահլևանի գլուխը տրորելով անցավ գնաց, նամակի պատասխանը շաապ բերեց։ Ժողովուրդն սկսեց ծափահարել։ Երկրորդ պայմանն էլ կատարվեց։

Երրորդ պայմանը՝ թագավորի կտրիճ փահլեվանն ու տղայի փահլևանն իչան ասպարեզ, որ կոխ բռնեն։ Տղան քսեց մազերն իրար, դևը եկավ, ասաց.—Բարի՛ լինի, ի՞նչ կա։

Տղան դևին ուտելիք տվեց։ Դևը կերավ, խմեց, իչավ ասպարեզ, ասաց. —Մի՛ վախենա։

Տգան դևին ուտելիք տվեց։ Դևը կևրավ, խմեց, րոնեց, ժողովրդի միչից դուրս շպրտեց, թագավորի փահլևտնը մեռավ։ Ժողովուրդն այնքան

* Մուսա Լեռան արևելքում հոսող Որոնտես գետի վտակ։

ձափկէն ծանը չըգդրիցուվ. «Դղան ղաղամըշ իդուվ» գինչից։

Թաքավորը շուդ խնդուց, ասուց.— Զաշկէնը դվա, կնա՛ց։ Տիլէ, ուրթանք ի դօն։

Կացէն թագավորէն դօնը։ Թագավորը ասուց.— Ցօթը ուր լաս դիղը բըր ուդիս, բըր խմիս, քեֆ բըր ինիս, լաքար սօնղա գնաշկէնիս գառնիս, գուրթուս։

Ցօթը ուրը խանլիսիցուվ. թագավորը քառասօն պիո ղումաշ իդըր ածկընէն, ճամպուք իուէր գիրինք։

Շուդ կացէն, քէչ կացէն, հասուն դավիրէն քուվը։ Դղան դավիրէն հադիան առուծ իր, իղուդ-իղուդ իդօր դավիրէն ղհադիան, անցուվ կնա՛ց։ Հասուվ լէր թագավորէն թաղըմը։ Ադ ուրը լադ դիղը բառգիցուն իանէն միչը։

Դգան ասուց տալ իանջէն.— Ընծի ըրք ուզո դօր, մէլը ղումաշէն համուր, էրգօքն ալէ բառգիլա համուր։

Թագավորէն աշկէնը ղադ լսից. մդքէն միչը ցըհըղ տուվ։ Իրգոն իղուվ. մօլը կըղէն ինլուվ, դղան ասուց տալ թագավորէն աշկէնը.— Իս բըր բառգէմ։

Դղան ուդից իղուդ բառգիլ։ Թագավորէն աշկէնը հասգըցուվ դղէն մէդքը, ասուց,— Տօն ղէս օ՞մ գադանէս։

Դգան լադ դիղը շաշմըշ իղուվ. չա՞ բըր ասէ։ Ագար ունղուրմը մը չսիր, ացվուր չէ։ Դղան ասուց.— Իս գքէ միր թագավորէն գուդանէմ։

Աշկէնը ասուց.— Զվէ՛յն համուր։

Դղան ասուց.— Միր թագավորը ցըոնհէնկ դարա տառնիլա համուր։

Աշկէնը ասուց.— Շուդ աղվուր է, ադո՞ր համուր ղէս գուդանէս։

Դղան ասուց.— Հա՛։

Աշկէնը ասուց.— Իրգոնը իս ու տօն գըրտագէնք, իս քէնն իմ, աօն՝ էնն իս։ Հօրը թագավորէն քուվը ղըհանէնք, իս ղըսնհէնկ դարա թագավորը գըտարծնիմ։ Ադ էմ պունն իւ

Ադ իրգօնը անօշ բառգիցուն։ Սաբախգան իգուվ, աշկէնը ասուց տալ դղան.— Զէս գուդօս թագավորէն, տօն աշկընը ըրուվս գըհաքնէս, իզար գըտնէս կլխէս, գըգալնէս թագավորէն դոնը սրուցէ տօոը։ Իս նըգցէ բաղղը ասնէմ, ամըր կուդօմ, գնսիմ թագավորէն քէ համուր. «Ահոք գէ նգցէ՝ ընցէ համուր խըղմաւջա։ Ցադ վախըտը տօն լէմ քուվը գըգինուս, իս գըկիդիմ չա րըր շինիմ լադաքար սօնղա։

Աշկէնը չարըր ասուց, դղան իրօց գէ։ Դղան, աշկէնը հասուն թագավորէն քուվը։ Դղան աշուրախացավ, որ ծափահարութեան ձայնը չկտրեց կանչեց. «Տղան հաղթանակեց»։

Թագավորը շատ ուրախացավ, ասաց.— Աղջիկը տվի՛, գնաց։ Արի՛, դնանք տուն։

Գնացին թագավորի առնը։ Թագավորն ասաց.— Ցոթը օր այսաեղ պիտի ուտես, իմես, քեֆ անես, աղջիկս կտոնես, կդնաս։

Ցոթ օրը լրացավ, թագավորը քառասուն բեռ օժիտ տվեց աղջկան, ճանապարհ դրեց նրանց։

Շատ դնացին, քիչ դնացին, հասան դևերի մոտ։ Տղան դևերի համար նվերներ էր վերցրել, նրանց առանձին-առանձին նվերներ ավեց, անցավ դնաց։ Հասավ իր թագավորի սահմանը։ Այդ օրը այդտեղ իշևանատունը քնեցին։

Տղան իշեանաւիրոջն ասաց.— Ինձ երեք սենյակ առ, մեկն օժիտի համար, մյուս երկուսն էլ՝ քնելու։

Թագավորի աղջիկն այդ լսեց, մաքում խոովից։ Իրիկունը մութը դետին ընկավ, աղան թագավորի աղջկտն ասաց. —Ես պիտի քնեմ։

Տղան ուղեց առանձին քնել։ Թագավորի աղջիկը հասկացավ տղայի միտքը, ասաց.—Դու ինձ ո՞ւմ համար ես առնում։

Տղան այդտեղ շվարեց, ի՞նչ ասեր։ Եթե ճիշտը չասեր, լավ չէր լինի։ Ասաց.— Ես քեզ մեր թագավորի համար եմ տանում։

Աղջիկն ասաց.— Ի՞նչի համար։

— Որպեսզի մեր թագավորը առանհինդ առեկան դառնա։

Աղջիկն ասաց.— Շատ լավ, ի՞ր համար ես ինձ տանում։

Տղան ասաց.— Այո՛։

Աղջիկն ասաց.— Իրիկունը ես ու դու միասին կբնենք, ես բոնն եմ, դու՝ իմը։ Երբ թագավորի մոտ կհասնենք, ես նրան տասնհինդ առեկան կդարձնեմ։ Դա իմ գործն է։

Այդ իրիկուն անուշ քնեցին։ Առավոտյան աղջիկն ասաց աղային. — Ինձ կտաս թագավորին, դու աղօկա շորեր կհագնես, երեսիդ քող կքաշես, կկանգնես թագավորի պալատի դրսի դռտնը։ Երբ ես ներս մտնեմ, կհրամայեմ, կասեմ թագավորին քեզ համար. «Սրան ներս առեք՝ ինձ համար աղախին»։ Այդ ժամանակ դու ինձ մոտ կմնաս, հեռո ես դիտեմ, թե ինչ պիտի անեմ։

Ինչ որ աղջիկն ասաց, աղան այդպես արեց։ Տղան, աղջիկը հասան թագավորի մոտ։

կէյնը իր֊ր թաքավուրէն, կնուց հաքուվ աշկրնը ըրաւ, իգիք գալնիցուվ թաքավուրէն դուռը, տրուցէ տօսը։ Աշկէյնը առուվ գէ նըքցէ։

Թաքավուրը հարէր դարա ղընիր, իփըր դիստավ ղաշկէյնը շուդ գանջ իր, շուդ ալ ձղվուր իր, շուդ խնդուց, ձսուց.— Փիլէ, ուրթունք չէմ ուդան, բառղէնք։

Աշկէյնը ձսուց.— Շո՞դ աբրէս, թաքավուր, դըքըր դըսնհէնկ դարա չըտարծնիմ ղքէ, ադ պունը չընիս։ Տօն լութը ուրիս սօնգս դըսնհէնկ դարա բըր տառնուս։

Աշկէյնը կնուց լէր ուդան՝ դղէն քուվլ։ Դիլուն, խմիցէն, բառղիցուն։ Օյթը ուրը իւալիսիցավ, աշկէյնը ձսուց տալ դգուն.— կնո՛, սինձ ղղէնծ մը պիրիցօր։ իւթց դըքըր ըլսլը գէյթ, վառը զգրաղը, տէրղէ դրադէյն չիրվան, ադվուր մը թլղ քըփըրթօ։ կնու պիր, թաքավուրը հաս։

Աշկէյնը, դգան ղթաքավուրը միղըցըցէն։ Ըլա թաքավուրը խարուր չիր կլօխը չա բըր ուկօ։ Դգան, աշկէյնը պանիցէն միլը վըդացը, միլը՝ ծառուցը, դարէն քիլ թուձ դաթնէյն բղնծէն միչը արէն։ Թաքավուրը դըսնհէնկ դարա ասրծուվ... բղնծէն գավուղը արէն, թաքավուրէն խասարը ուդարթիցէն։

Աշկէյնը համան դղէն ծառը պանից, անցուն թաքավուրէն ուդան։ Աշկէյնը իպիր թաքավուրէն թաջը, իսկում վաղուցը, ըրախնէն հաքցօց դղէն, նսդըցօց դէ թաքավուրէն քուրէն։

Աշկէյնը տրգուն բիչիմ մը գվուձ իր դղէն, հիչ մուրթ չըր գառնիր կիդանիր դէ, աս ուրն է։ Աշկէյնը ամըր իրօց իհալէն.— Ուվլըր արդու դունա թըզ սւկօ, թաքավուրը դիսնօ՝ դըսնհէնկ դարէ դարծուձ է։

Թաքավուրէն մրնձրդաքըր իդէն շինըֆըրիցէն թաքավուրէն նուր ծմրը, շուդ իննդացէն, իլուն կացէն, պուն չըկիտացուն։

Զվանդիրն ալէ գաբիցէն չընըրը ճիրէյն իդիուուէյն, սիբիցէյն։

Աշկէյնն իլան դգան հասուն իրինց մարադղէն, ալաք գանջիրը թըզ հասնէն իրինց նրադադէն։

Տղան աղչկան տվեց թագավորին, գնաց հագավ աղչկա շորը, եկավ կանգնեց դրսի դռանը։ Աղջիկը նըման ներս առավ։

Թագավորը հարյուր տարեկան կլիներ, երբ տեսավ աղջիկը չատ ջահել է, շատ էլ գեղեցիկ, շատ ուրախացավ, ասաց.—Արի՛, գնանք իմ սենյակը, քննենք։

Աղջիկն ասաց.— Շա՜տ ապրես, թագավոր, մինչե քեզ աստնհինգ տարեկան չգարձնեմ, այդ բանը չի լինի։ Դու յոթ օր հետո աստնհինգ տարեկան պիտի գառնաս։

Աղջիկը գնաց իր սենյակը՝ տղայի մոտ։ Կերան, խմեցին, քնեցին։ Յոթ օրը լրացավ, աղջիկը տղային ասաց.— Գնա՛, մի մեծ պղինձ բերել տուր, բերներերան կաթ լցրու, կրակը վառի, դիր կրակի վրա, թող լավ եռա։ Գնա, թագավորին բեր այստեղ։

Աղջիկը, աղան թագավորին մերկացրին։ Դեռ թագավորը տեղյակ չէր, թե գլխին ինչ է գալու։ Տղան, աղջիկը բռնեցին մեկը ոտից, մյուսը՝ գլխից, տարան եռացող կաթի պղնձի մեջ գցեցին։ Թագավորը աստնհինգ տարեկան գարձավ... պղնձի կափարիչը փակեցին, թագավորի հաշիվը մոռացեցին։

Աղջիկն իսկույն տղայի ձեռքը բռնեց, մտան թագավորի սենյակը։ Աղջիկը բերեց թագավորի թագը, ոսկե դավաղանը, շորերը հագցրեց աղային, նստեցրեց թագավորի գահին։

Աղջիկը աղային այնպիսի մի կերսլարանք էր տվել, որ ոչ ոք նրան չէր կարող ճանաչել, թե գա ով է։ Աղջիկը հրամայեց ժողովրդին.— Թագավորը տասնհինգ տարեկան է դարձել, ով ցանկանում է, թող դա տեսնի։

Թագավորի մեծամեծները եկան շնորհավորեցին թագավորի նոր կյանքը, շատ ուրախացան, ելան դնացին, բան չհասկացան։

Վեզիրին էլ կապեցին կաստաղած ջորու պոչից, բաց թողեցին։

Աղջիկն ու աղան հասան իրենց մուրազին, բոլոր ջահելներն էլ թող հասնեն իրենց նպատակին։

5 (5). ԳԱԼ ԴՂԷՆ ՄՈՒՐԱՋԸ

Դլղինս, չլղինաւր բառուվ մը իլան դդա մը, Ա.դ դդան քալ է։ Մարը մանուձ գումանէ հէրքէ-աէն լիրմինը զօրնիղը, ադ ումուղում զադ դղան դուրիհի։ Ջաֆալդա, դդան շուդ չգովիր իր։ Ուր մը կրդդուվ մուրը մանուձը, դարուվ ձախից, մարը ասուց.—Ջվո՞, օղլո՛ւմ, հարթնուտաէն գունիս։

Դղան ասուց.— Ադվի՞ր գունիմ,— նէղացուվ, ղանին իլուվ կնուց։

Վախրըս անգուշ, դղան փուշմընից, իղիք իզօն, մուրը ասուց.— Թաքավուրէն աշկէնը գուդիս ընծի։

Մարը ասուց.— Օղլո՛ւմ, չընննաւր։

Դղան ասուց մուրը.— Դըսբանիմ զքէ, թը չըրուրթուս աղիս զէ ընծի։

Մարը վախուրթունը կրնուց թաքավուրէն քուվը։ Հասուվ թաքավուրէն փալթախթը, բակճէն ղիսուվ կբառուվը, ասուց.— Ջա՞ գուղիս։

Բառուվը ասուց.— Թաքավուրէն քուվը բըր անէմ, կապդօք զըլէց գունիմ։

Բակճէն ասուց.— Հը՛է. համօ իս գուկում։

Բակճէն ուշէդ կրնուց թաքավուրէն քուվը, ասուց.— Բառուվ մը գքէ գուղէ դըանիլ։

Թաքավուրը ասուց.— Թող ուկու։

Բառուվը կրնուց թաքավուրէն քուվը, թաքավուրը ասուց, — Նանա՛, չա՞ գուղիս։

Բառուվը ասուց.— Թաքավուրը արրուձ, գասուլըղըստ գուղիմ։

— Նանա՛, ուդամ քէ վարա, կնու։

Ասուց բառուվը.— Իս վարա չուղիմ, քէ գաշկէնը զուգիմ էմ Ռալ դղէն։

Թաքավուրը շաշմըշ իղուվ.— Ա՛ռ չո՞ պան ի, — ասուց,— Նանա՛, գաշկէնը գուդում, ըմը ըրգը շարթ գունէմ, թը գինի գը՝ աշկէնը գուդում, թը չինիր զը՝ կլօխը դըդդրիմ։

Բառուվը ասուց.— Թաքավուրը արրուձ, շարթիրըս չա՞լ ի։

— Առջը շարթը՝ սինկն միչը իսկում գուրդ մը չուրստէն իսկում ծակիր բըր չըխըրդուն, ծան բըր հանին։ Իքինջը շարթը՝ տըրդ էմ սարալէն սարալա մը ըրք ուրին բըր չինէ։

Բառուվը իզօն կրնուց, վախուրթունը ամպուրը մդուվ։

Ռալ դղան իկիք, լասուէն-լանուէն իշից, մարը պատվիցուվ, դիսուվ ղը ամպուրէն միչը, ասուց.— Ջա՞ խանբուր պրրիր ընծի թաքավուրէն լիրմինը։

— Ըրգը շարթ պիրա թաքավուրէն լիրմինը,— ասուց մարը,— մէլը գուրդ մը սինէն սիչը. իսկում ծակիր բըր չըխրդուն, ծան բըր հանին։ Իքինջը շարթը՝ սարալէ մը գուգի տըրդ էր ասրալէն՝ ըրք ուրէն միչը։

5 (5). ՔԱՋԱԼ ՏՂԻ ՄՈՒՐԱՋԸ

Լինում է, չի լինում մի պառավ ու իր տղան։ Տղան քաչալ է լինում։ Մայրն ուրիշի համար թել էր մանում, դրա հույսով տղային պահում։ Ինչ օպուտ, որ տղան շատ վատն էր։ Մի օր գողացավ մոր մանածը, տարավ ծախեց, մայրն ասաց նրան.— Տղա՛ս, ինչու՞ ես գողությունն անում։

Տղան ասաց.— Լա՛վ եմ անում,— գայրացավ ու թողեց տնից հեռացավ։

Ժամանակ անցավ, տղան զղջաց, նկավ տուն, մորն ասաց.— Թագավորի աղջկան կուղես ինձ։

Մայրն տսաց.— Տղա՛ս, չի լինի։

Տղան ասաց.— Կսպանեմ քեզ, եթե չգնաս նրան ինձ չուղես։

Մայրը վախից գնաց թագավորի մոտ։ Հասավ թագավորի պալատը, պահակը տեսավ պատռվին, ասաց.— Ի՞նչ ես ուզում։

Պառավն ասաց.— Թագավորի մոտ պիտի գնամ, գաղտնի խոսելիք ունեմ։

Պահակն ասաց.— Սպասի՛ր, հիմա ես կգամ։

Պահակն իսկույն գնաց թագավորի մոտ, ասաց.— Մի պառավ ուզում է քեզ տեսնել։

Թագավորն ասաց.— Թող գա՛։

Պառավը գնաց թագավորի մոտ, թագավորն ասաց.— Նանի՛, ի՞նչ ես ուզում։

Պառավն ասաց.— Թագավորն ապրա՛ծ, ողջությունդ եմ ուզում։

— Նանի՛, քեզ փող ասամ, գնա՛։

Պառավն ասաց.— Ես փող չեմ ուզում, քո աղջիկն եմ ուզում իմ քաչալ տղային։

Թագավորը զարմացավ.— Սա ի՞նչ բան է, Նանի՛, աղջկաս կտամ, բայց երկու պայման ունեմ, թե կատարի՝ տղջկաս կտամ, թե չկատարի՝ դլուխը կկտրեմ։

Պառավն ասաց.— Թագավորն ապրա՛ծ, պայմաններդ ի՞նչ են։

— Առաջին պայմանը՝ մի սկուտեղի մեջ ոսկե թուխսը չորս կողմը ոսկե ձագերով պետք է ձվվլան։ Երկրորդ պայմանը՝ երեք օրում իմ պալատի նման մի պալատ պիտի կառուցի։

Պառավը տուն գնաց, վախից ամբարը մաավ։

Քաչալ տղան եկավ, դես ու դեն նայեց, մորը փնտրեց, տեսավ՝ ամբարի մեջ, ասաց.— Ի՞նչ լուր բերեցիր թագավորից։

— Երկու պայման բերեցի թագավորից,— ասաց մայրը,— մեկը՝ մի թուխս սկուտեղի մեջ. ձվվլացող ոսկե ձագերով։ Երկրորդ պայմանը՝ երեք օրվա մեջ իր պալատի պես մի պալատ պիտի կառուցես։

Ֆալ դղան զադ լսէց, համաձն փախաւ։ Ինգաւ ջամպուք, շուդ կընձուց, քէչ կնձուց, հասաւ մձա մը, աատրիցաւ, նուդաւ մինձ շրէ մը դձուգ։

— Օ՜ֆ, օ՜ֆ,— ձսաւց.— Իս չա՞ շինիցա։

Ղաթ մալէ, իսբըդձուգ մուրվըքվձր հալվձր մը իլաւ ոիմը, ձսաւց.— Զա զաղիս, իս Օֆ-օֆն իմ, ոօն յօ՞ գաւրթաս։

— Կլօխս աաւձ զարթաւ,— ձսաւց Ֆալ դղան։

— Արի էմ քաւվը, իս զքէ աղվձր գըրիհիմ,— ձսաւց հալիվձրը։

— Գաւկաւմ,— ձսաւց Ֆալ գղան,— իլաւվ կնձց հիդը։

Անցաւն շրէն յանաէն, հալվձրը գալնիցաւվ, մդքաւմ խաւսիլը բաշլից։ Շրին ձօո մը պացվիցաւվ, մդաւն նըքցէ, ձօոը էնքըթէնք վաձգվիցաւվ։ Հալվձրը իպիը էր ուդիլա, գիրաւն. դղան շուդ քաղցաձ իր, գիշղացաւվ։ Հալվձրը իլօր էր քաձսօն պաձլէնք. լադ շրէն միչը քաձոօն ուդօ գաձր։ Հալվձրը ձսաւց.— Ջաձլանք ուդինէն գըպաձնաւս, գըսօ ուդղն՝ չըրաձնաւ։ Օ՛ո քէ թօխթ մաձլէ, շաձպաւխը ղաթ մը քէ դալաս բըր ուդօմ։ Աս ուդինին չարըր գօ, քէնն է։

Հալվձրը դարս իդօր էր, իլաւվ կնձց։ Ֆալ դղան զալա ուդինէն պաձավիցաւվ, լախշար չաւրըր գօ, լադ ուդինէն միչը գօ։ Դղան քէֆլա իր։ Օթ աւրը դաթ մը հալվձրը գաւկէր, դարս գաւդէր։

Ղաթ մալէ դղղն կլիւէ ինգաւվ. ձսաւց. —Զվա՞ գալաք ձավէն բըր պաձնաւ, գըսօ ձօոը չըբըր պաձնաւ։

կնձց, զադ ձօոը իպաւց, նըքցէ մդաւվ, իշից միլղաձկ, կլօին իվար կախվաւձ է ձշկէն մը, վըրքը ճօր գաւքվփըրթաւ։ Ձշկէնը դիսաւվ ղդղան.— Ա՜խ, ա՜խ,— ձսաւց,— աօ՜ն ալ ինգաւր լաս գալիմէն ծաւը, քաձգէ զէս, իճէցօր, ձսիմ քէ։

Դղան զձշկէնը քաձգից, ձշկէնը ձսաւց.— Ֆաձղցաձ իմ, ընծը ուգիլա պիր։

Դղան գնձց աղվձր-աղվձր ուդիլա իպիր էր, գիրաւվ, գիշղացաւվ ձշկէնը, ձսաւց.— Է՛յ, ախպա՛ր, միր հիկկէն չո՞ւց բըր փլցընինք։

— Զո՞ւց բըր փլցընինք, քըլօ՛գ,— ձսաւց դղան։

Ձշկէնը գինէ ասյ դղան.— Զաւդ թօխթը հալվձրը քէ դվաձ է՝ չլգաւրթաւս խալխսէս գը։

Դղան գինէ.— Զվա՞,

Ձշկէնը ձսաւց.— Զաւդ թօխթ, բաՙղը խալխսէս, ըրգօքիս ձլէ մաճ իդաւձ ինք, Համօ գուկօ հալվձրը, գաձսէ քէ՝ դաւրսիտ ասւրվիցաձր, ասօ՝ չէ։ Բաՙղը դաւրսիտ ասւրվէս, խալխսէս թօխթը, զէս գըսբաձնէ, զքէ գըգաձխէ լէմ դիղը։ Հալվձրը քաչալ տղան այգ որ լսէց, թողէց փախաւ։ Ճամփա ընկաւվ, շատ գնաց, քիչ գնաց, հասաւվ մի անտառ, հոգնէց նստէց մի մեծ ժայռի առակ։

— Օ՜ֆ, օ՜ֆ,— ասաց,— ես ի՞նչ արեցի։

Մեկ էլ ձերմակ մորուքով մի ծերունի դիմն ելավ, ասաց.— Ի՞նչ ես ուզում, ես Օֆ-օֆն եմ, դու ո՞ր ես գնում։

— Գլուխս առած գնում եմ,— ասաց Քաչալ տղան։

— Արի մոտս, ես քեզ լավ կպահեմ,— ասաց ալևորը։

— Կգա՜մ,— ասաց Քաչալ տղան,— վեր կացավ հետը դնաց։

Անցան ժայռի մյուս կողմը, ալևորը կանգ առավ, մտքում խոսել սկսեց։ Ժայռից մի դուռ բացվեց, ներս մտան, դուռը ինքնիրեն փակվեց։ Ալևորն ուտելիք բերեց, կերան. աղան շատ քաղցած էր, կշտացավ։ Ալևորը նրան տվեց քառասուն բանալի. այդ ժայռի մեջ քառասուն սենյակ կար։ Ալևորն ասաց.— Բոլոր սենյակները կրացես, այս մեկը՝ չբացես։ Մ՛ո քեզ մի գիրք, շաբաթը մեկ քեզ դաս եմ տալու։ Այս սենյակներում ինչ որ կա, քոնն է։

Ալևորը նրան դաս տվեց, ելավ գնաց։ Քաչալը բոլոր սենյակները ման եկավ, աշխարհում ինչ որ կար, այդ սենյակներում կար։ Տղան ուրախացավ։ Յոթ օրը մեկ ալևորը գալիս, դաս էր տալիս։

Մի անգամ էլ աղան գլխի ընկավ, ասաց.— Ինչո՞ւ բոլոր դռները պիտի բացվեն, այս մեկ դուռը պիտի չբացվի։

Գնաց, այդ դուռը բացեց, ներս մտավ, տեսավ մի մերկ աղջիկ գլուխն ի վայր կախված, ատկր չուր է ետում։ Աղջիկը տեսավ աղային ասաց.— Ա՜խ, ա՜խ, դո՞ւ էլ ընկար այս անխղճի ձեռքը, քանգի՜, իչեցրո՜ւ ինձ, ասեմ քեզ։

Տղան աղջկա կապերը քանդեց, աղջիկն ասաց.— Քաղցած եմ, ինձ ուտելիք բեր։

Տղան գնաց լավ-լավ ուտելիքներ բերեց, աղջիկը կերավ, կշտացավ, ասաց.— Ա՜յ եղբայր, մեր հոգին ինչպե՞ս պիտի աղատենք։

— Ինչպե՞ս պիտի աղատենք, քույրի՜կ,— ասաց աղան։

Աղջիկն ասաց տղային.— Այդ գիրքը, որ ծերունին տվել է քեզ՝ չկարդաս վերջացնես։

Տղան ասաց.— Ինչո՞ւ։

Աղջիկն ասաց.— Այդ գիրքը, եթե կարդաս, վերջացնես, երկուսս էլ կկորչենք։ Հիմա ալևորը կգա, կտսի քեզ՝ գասդ սովորե՞լ ես, ասա՝ ոչ։ Եթե դասդ սովորես, գիրքը վերջացնես, ինձ կուզա-

դուխս քառասուն վարշից գըպիրէ, ղքէ գըգիխէ, գըպիխէ, հա գըգիխէ, ղլկըը վարիցնէն ալ՝ալը գըգըդրա։ Շատ գընիգանօ աւըիյէ գլհանի ղքէ, քէ խիլքըտ գառնա, բազգը իմնաւ՝ գէս չմառնաւս։ Հաւմօ ղէս լիդ գաւթէ դիդըս, տօն կնօ նէյադ դիդիտ։

Դդան պռնից աշկընէն խոսքիրը տըրգադ։ Ցիւի խաւխոլցով հալվո րէն. իլուվ պռից լէր մաւրը խաչէր։ Մարը դիսաւլ դդդան, ասաց.— Յօ՞ գէր, օղլիւմ։

Գալ դդան ալէլքը գու հալալմէ.— Միր սունը ազվուր րըը ըննօ, լամա, իս վանը ազվուր բախրի մը գըընամ, գըդանէս գէս լոգուրը, գըձախխս, ամա բախօրսքը չըրուգօս, ան գըդանէս իդօն։ Ես լիդ գուկում, մը վախնու։ Ամըն տր տըրգադ, գըհարսդնունք։

Էր մարը ամըն ուր տըրգադ գոձախէ։ Ուր մը դդան ասուց աալ մարը.— Յաւմա, իս ազվուր ծէն մը բըր ընննում, բազուրը ըր գոլթուս, բախօրսքը չուդօս։

Մարը առուվ գծէնը կնուց բազուրը։ Իկնք հալվուրը.— Է՜հ, է՜հ, նանանա՛, չո՜ւց ազվուր ծէն գունէս, գըձախխս գէ։

— Ն՛ա՛,— ասուց նանանան։

— Կէնը նադուր է,— ասուց հալվուրը։

Գալ դդէն մարը գէնէ.— Հարէր լէրա է ծիօս կէնը։

Հալվուրը իդօր հարէր լէրա, ուզից բախօրսքը։

— Բախօրսքը չըմուդօ,— ասուց բառուվը։

Զվա՞,— ասուց հալվուրը։

Ադ խէր ի։

— Օ՛ո, քէ խէրը փարա, դօր բախօրսքը։

Բառուվը էնքզէնք մառցալ, հալվուրը ծիօն հիդը բարաբուր բախօրսքը առուվ կնուց։ Հալվուրը հիձուվ ծիօն իրվան, ուցածցուվ փըսիրսուց ծիօն յազանճը։

— Ձուց լ՛ս, Գալ դդօ,— քիշից ղըրրաջը գիվուլց, ինդուվ ճամփուք։ Ծկնը քունդան գոշուվդէ, գոզէ գհալվուրը ըսրանի։

Հալվուրը ձա՛վիցուվ, հասուն սիպա՛ր մը, հալվուրը ցածցուվ, ճօր րըրիրըմէ, ծառուցը ինդուվ բախօրսքը։ Ծէնը տարծուվ ձիձէոնալ մը, հալվուրը սարծուվ շահան մը, ինդուն միզ-միզ իդիդտա, հասուն ձուլօն իրվան, ձիձեոնալը վախցուվ շահանէն լիրմինը, ձալը մդուվ, շահանն ալէ մդուվ, ըրդօքըն ալէ ծօկ տարծուն։ Ձիձեոնալը գինա վախցուվ, խըուուվ ձուվին, ազվրնա մը տարծուվ, շահանըն ալ իդիդտէն։ Ազվրնալը կընուց թաքալվուրէն ծօնը մդուվ, շահանն ալէ մդուվ, ազվրնալը թաքալվուրէն ծառը նօտ մը տարծուվ, Շահանը իդուվ դարվէշ մը՝ ծառը թամբառօ գարւ

Թագալվուրը ասաց.— Զա՞ գուգիս։

նի, քնղ կկախի իմ տնդը, Ալևորը կգա, քառասուն ճիպոտ կրերի, քեղ կխփի, կխփի, կխփի, մինչև բոլոր ճիզոտները ջարդվեն։ Շատ կղայրանա, քեղ գուրս կհանի, կուշաթափվես, երբ ուշքի գաս՝ լնձ չմոռանաս։ Հիմա ինձ նորից տիղս կախի, գու գնա նստի տեզդ։

Տղան նույնությամբ կատարեց ազջկա ասացածները։ Երբ աղաղվեց ալևորից, նլավ դնաց մոր մոտ։ Մայրը տեսավ տղային, հարցրեց.— Ո՞ւր էիր, աղա՛ս։

Քաչալ տղան ամեն ինչ պատմեց.— Մեր վերջը լավ պիտի լինի, մայրի՛կ, ես վաղը մի լավ եղ կդատնամ, կտանես ինձ շուկա, կծախես, բայց ոչախուրցս չտաս, այն կատանես տուն։ Ես ես կդամ, մի վախենա։ Ամեն օր այդպես կհարսատանանք։

Ամեն օր մայրն այդպես (աղալին) ծախում էր։ Մի օր էլ տղան ասաց մորը.— Մայրի՛կ, ես մի լավ ձի պիտի գտնամ, շուկա որ գնաս, պախուրցը չտաս։

Մայրն առավ ձին, գնաց շուկա։ Եկավ ալեվորը.— Է՜հ, է՜հ, նոսնի՛, ի՞նչ լավ ձի ունես, ծախո՞ւմ ես։

— Հա՛,— ասաց նանը։

— Գինն ի՞նչ է,— ասաց ալևորը։

Քաչալ տղայի մայրն ասաց.— Հարյուր լիրա է ձիուս գինը։

Ալևորը ավևց հարյուր լիրան, ուզեց պախուրցը։

— Պախուրցը չեմ տա,— ասաց պառավը։

— Ի՞նչու,— հարցրեց ալևորը։

— Դա րախտ է։

— Ա՛ռ բախտիդ փոզը, պախուրցը տո՛ւր։

Պառավն ինքն իրեն մոռացավ, ալևորը ձիու հետ պախուրցն էլ վերցրեց ու գնաց։ Ալևորը հեծավ ձին, կոտցավ փսփսաց ձիու ականջին։

— Ո՞նց ես, Քաչալ տղա,— քաշեց մտրակը խփեց, ճանապարհ ընկավ։ Ձին այնպես էր վազում, ուղում էր ալևորին սպանել։

Ալևորը ծարավեց, հասան մի աղբյուրի, ալեվորը կոտցավ ջուր խմելու, պախուրցը ձևորից ընկավ։ Ձին դարձավ ծիծեռնակ, ալևորը դարձավ բազե, ընկան իրար հետևից, հասան ծովի վրա, ծիծեռնակը վախեցավ բազեից, ծովը մտավ, բազեն էլ մտավ, երկուսն էլ ձուկ դարձան։ Ծիծեռնակը նորից վախեցավ, թռավ ծովից դուրս, աղավնի դարձավ, բազեն էլ հետևից։ Աղավնին գնաց թագավորի պալատը մտավ, բազեն էլ մտավ, աղավնին թագավորի ձեռքին նստե դարձավ։ Բազեն դարձավ գևրվիշ՝ ձեռքին սաղ։

Թագավորն ասաց.— Ի՞նչ ես ուղում։

Դարվէշը ասուց.— Ծառուցիտ նօրը դճր։

Թաքավորը ասուց.— Զըմուդօղը։

Դարվէշը ասուց.— Զըմուրմու։

Թաքավորը վախցուվ յադդիվր. նօսը դվիլը վախըսը, ինգուվ ծառօցը, ղըդրիցուվ, նըռան հադիրը չարղվիցուն։ Դարվէշը հուվ տարծուվ, բըլիշիցուվ նըռուն հադիրը գըդգըդիլը. ամա Քալ դղէն թաքավորէն ձնգէն վըրքը գար, հուվը կիդացուվ դղէն թաքավորէն վըրքը գօ, ուղիցուվ ուդիլ ղադ նըռուն հուդը։ Թաքավորը վըդը վիրցօց, յադ վախտը նըռուն հուդը դըլքէ մը տարծուվ, պունից ղհուվը աղվիր մը գիրուվ։ Դըլքէն Քալ դղա ատրծուվ, նոդուվ քուրսէն թաքավորէն սիմը։ Թաքավորէն խիլքը կնաց, ինգուվ Քալ դղան գինչից.— Է՛յ, թաքավոր, չվա՞ քանղադ պատգամիս։ Չէս գուկիդանո՞ւս, իս ան Քալ դղան իմ, քէ գաշկէնիտ գուղէր է։ Ը՞ր ավիր աշկէնը գուղիմ։

— Շարթիրըս գադարէ, գաշկէնիս գուդօմ։

Քալ դղան ասաց.— Աարախուդան շարթիրիտ գըգադարիմ։

Թաքավորը յասաէն իշից, լանուէն իշից, ղէր սիրուձ ղընալը կինչից։ Գընալը իգիք. ասուց.— Արրէս թաքավոր, չա՞ գուղիս։

— Աշկէնը միր ծառուցը կնաց,— ասուց թաքավորը։

— Արրէ՞ս թաքավոր, ատ չա՞ պուն ի,— ասուց գընալը։

— Սարախուդան գըդիանօս, գըհատգնուս չա պուն ի։

Թաքավորը, տատրուձ իր, ասուց տալ գընալը.— Ուրթուն՛ք, րատգէն՛ք։

Թաքավորը սարախուդան աուլըգօն իցուվ, իլուվ տուրիցէ, իշից գաբրէն տունց արիվը ձիթուձ է, վախցուվ, նըքցէ մըդուվ.— Ո՛ֆ, օ՛ֆ,— ասուց,— աս Քալ դղէն պունն ի, էմ ագվիր աշկէնը ծառուցիս կնաց։

Սարախուդան իղուվ, Քալ դղէն մարը իգիք թաքավորէն քուվը, հակուձ գաբուձ, ան փըլըկուձ բառուվը գըսնհէնկ դարի տարծուձ իր։

— Արրէ՞ս թաքավոր, իս Քալ դղէն մարն իմ, քէ ագվիր աշկէնը իմ Քալ դղէն գուգո՞ս։ Շարթէն մէլը քէ ռարայէն տիմը գօ։

Թաքավորը ասուց.— Արրէս, միգալ շարթն ալէ պիր։

— Արրէ՞ս թաքավոր,— ասաց բառուվը.— գըպիրիմ։

Բառուվը կնից իգօն, ասուց Քալ դղէն.— Թաքավորը իսկում գուրը գուղէ։

— Ագվո՛ր է, յամա, իրգօնը իսկում գուրը գըդանէս։

Դերվիշն ասաց.— Ձեռքիգ նուռը աուր։

Թագավորն ասաց.— Ձե՛մ աու։

Դերվիշն ասաց.— Ձե՛մ գնա։

Թագավորը այդտեղ վախեցավ, նուռը տալու ժամանակ, նուռն ընկավ ձեռքից փշրվեց, նռան հատիկները ցրվեցին։ Դերվիշը հավ գարձավ, սկսեց նռան հատիկները կացահարել, բայց Քաչալ աղան թագավորի ծնկի տակ էր, հավը կարծեց, թե ապան թագավորի ոտի տակ է, ուղեց ուտել այդ նռան հատիկը։ Թագավորը ոտքը բարձրացրեց, այդ ժամանակ նռան հատիկը աղվես դարձավ, րոնեց հավին ու մի լավ կերավ։ Աղվեսը Քաչալ տղա դարձավ, նստեց թագավորի դեմի աթոռին։ Թագավորի ուշքը գնաց, ընկավ։

Քաչալ աղան ձայն ավեց.— Է՛յ, թագավոր, ինչու՞ ես այգքան քնում։ Ինձ ճանաչեցի՞ր, ես այն Քաչալ աղան եմ, որ աղջկագ էր ուղում։ Քո սիրուն ագջիկն եմ ուղում։

— Պայմաններս կատարի, աղջկաս կտամ։

Քաչալ աղան ասաց.— Առավոտյան պայմաններդ կկատարեմ։

Թագավորը դես նայեց, գեն նայեց, իր սիրած կնոջը կանչեց։

Կինը եկավ, ասաց.— Թագավորն ապրի՛, ի՞նչ ես ուզում։

— Աղջիկը մեր ձեռքից գնաց,— ասաց թագավորը։

— Թագավորն ապրի՛, այդ ի՞նչ բան է,— ասաց կինը։

— Առավոտյան կանանես, կհասկանաս ինչ բան է։

Թագավորը հոգնած էր, կնոչն ասաց.— Գնա՛նք, քնե՛նք։

Թագավորն առավոտ շուտ արթնացավ, ելավ գուրս, տեսավ արեմն արևմուտքից է ծաթել, վախեցավ, ներս մտավ.— Օ՛ֆ, օ՛ֆ,— ասաց,— սա Քաչալ աղայի գործն է, իմ սիրուն աղջիկը ձեռիցս գնաց։

Առավոտյան Քաչալ աղայի մայրը եկավ թագավորի մոտ, հագած կապած, այն թափթփված պատավը տատնհինգ տարեկան էր դարձել։

— Թագավորն ապրի՛, ես Քաչալ աղայի մայրն եմ, ը՞ սիրուն ագջկան իմ Քաչալ աղային կա՞ս։ Պայմաններից մեկը պալատից գիմացն է։

Թագավորն ասաց.— Ապրե՛ս, մյուս պայմանն էլ բեր։

— Թագավորն ապրի՛, կբերեմ։

Պատավը գնաց տուն, Քաչալ աղային ասաց.— Թագավորն ոսկե թուխսն է ուղում։

— Լա՛վ, մայրիկ, երեկոյան ոսկե թուխսը կտանես։

Իրգօն իղուվ. իսկում ղուրդը թաքսավիլդէն քուվը իղուվ։ Իսկում ղուրդը լուշւից դըդղըդէլը, ծակկիլը լուշւիցէն ճըղճրդիլը։ Թաքսավիլը լլանն ըղնայր լուշւիցէն ձափկիլը- խուղիլը «Աշկէնը կլանինց միր ծառուցը» ասիլը։

Իսկում ղուրդը ասրծավ Ֆալ դղան, ծառուց.— Թաքսավիլդն արրո՞ւծ, գնշկէնը գուղիմ՝ հումանհումանն։

Թաքսավիլը լլան ըղնալը ծէն ղվուն.— Աշկէնը կնինց միր ծառուցը վայ ամանն։

Ֆալ դղան առուվ կնինց գաշկէնը սարայէն։ Ֆալ դղան հասուվ էր մըրաղէն, մէկըը լնգուվ ջրէն միչը գինուղ աշկէնը, ծառուց ասւ, Թաքսավիլէն աշկէնը.— Իս գուրթում պիրիմ դան աշկէնը։

Կնինց, առուվ դան աշկէնը, իպիր հիզը բալաբուր հարստութէնն ալէ։

Երևկոյան ոսկե թուխսը թագավորի մոտն էր։

Ոսկե թուխսն սկսեց կոցտհարել, ձագերն էլ սկսնցին ճլվլալ։ Թագավորն ու կինն սկսեցին ծուխ ուալ, պարել՝ «Աղջիկը մեր ձեռքից գնաց» ասելով։

Ոսկե թուխսը դարձավ Քաչալ տղա, ասաց.— Թագավորն ապրա՜ծ, ագջկաղ եմ ուղում՝ հենդ հիմա։

Թագավորն ու կինը ձայն տվեցին.— Աղջիկը գնաց մեր ձեռքից, վա՜յ ամանն։

Քաչալ տղան ագջկան առավ տարավ պալատից։ Քաչալ տղան հասավ իր մուրազին, հիշեց ժայռի մեջ կենդող աղջկան, թագավորի աղջկան ասաց.— Ես սլիաի գնամ բերեմ այն աղջկան։

Գնաց, բերեց այդ ագջկան, հարստությունն էլ հետը միասին։

6 (6)· ԹԱՓԱՎ ԱՒՐԷՆ ԲԶԴԱՓ ԴՂԱՆ

Ըզգինուր, չըգինուր թաքսավիր մը։ Ադ թաքսավիրը գունունօ ըրք դղօ։

Ան գուվանալաթի իրինց.— Իս լէվըը գըմիոնիմ ըրք իրզօն ամէլ միլըա բըր ուկաք կըրըղմանէս լէրվան, ավիդըրուն գարթաք։

Վաղըա գասնա, թաքսավիրը գումիոնա։ Մինձ դղան միմը իլան ավիղարունը գառնի, գուրթու կըրըգմանին լէրվան գարթիլը։ Ցադ վաղըտը կըրըգմանին ծառ մը գուրգանու, լայրը գուանցընէ։ Դգան գուվախնու, գուփախու։ Ըրք իրզօն գուրթու, ամա գուփախա, չուդարթու։ Զախապըրդաքը գուխապըտէ։

Ըրք իրգօնը գուխալիսա, լէտքը գուրթու օրթանջա ախապը. չուցըր գըննօ մինձ ախպարը տրղադ ալ գըննօ, ան ալ տրգադ գուխապըտի գախապըրդաքը։

Նուբը գուկու բզդագ ախպուրը։

Գուրթու բզդագ ախպարը, ղըրլիչա կըրըղմանին լէրվան գարթիլը։ Ցադ վաղըտը ծառը գուրգանու՝ միէն լայրը անցընիլա համուր։ Բզդագ դղան գուքիչի ղթծրը, գուգիխի, գաւգրի ղմուդը։ Դանվը գուննու գլսլսը անցընողը. միգալ ախպըրդաքը չուկիդանուն։

Բզդագ ախպարը ղադ դավէն մուդը գառնի, գուկու լախպըրդուցը քուվը, գու հայցնի.— Դարթացա՞ք դադէն կըրըղմանէն լէրվան։

Ախպըրդաքը գանին.— Հա։

Բզդագ ախպարը գանի.— Սօդ իք Գարթացուձ չիք։ Հգոօ մուդը գդրիցա պիրա։ Ախրգիք ուրթունք աս վիրէնը յօրըր գաթուձ ի գութ-գուծ։

Բարարուր գուրթուն գուհանէն դավէն հորը։

Ոսկե թուխսն սկսեց կոցտհարել, ձագերն էլ սկսնցին ճլվլալ։ Թագավորն ու կինն սկսեցին ծուխ ուալ, պարել՝ «Աղջիկը մեր ձեռքից գնաց» ասելով։

Ոսկե թուխսը դարձավ Քաչալ տղա, ասաց.— Թագավորն ապրա՜ծ, ագջկաղ եմ ուղում՝ հենդ հիմա։

Թագավորն ու կինը ձայն տվեցին.— Աղջիկը գնաց մեր ձեռքից, վա՜յ ամանն։

Քաչալ տղան ագջկան առավ տարավ պալատից։ Քաչալ տղան հասավ իր մուրազին, հիշեց ժայռի մեջ կենդող աղջկան, թագավորի աղջկան ասաց.— Ես սլիաի գնամ բերեմ այն աղջկան։

Գնաց, բերեց այդ ագջկան, հարստությունն էլ հետը միասին։

6(6). ԹԱԳԱՎՈՐԻ ՓՈՔՐ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում։ Այդ թագավորն ունենում է երեք տղա։

Նա կտակում է տղաներին.— երբ ես մեռնեմ, ամեն մեկդ երեք գիշեր պիտի գաք ղերեզմանիս վրա, սվետարան կարդաք։

Անցնում է ժամանակ, թագավորը մեռնում է։ Մեծ տղան մոմն ու սվետարանը վերցնում, գընում է հոր գերեզմանի վրա կարգալու։ Այդ ժամանակ գերեզմանից մի ձեռք է երկարում, լույսը հանգցնում։ Տղան վախենում է, փախչում։ Երեք գիշեր գնում է, բայց փախչում է, չի կարգում։ Եղբայրներին խաբում է։

Երեք գիշեր անցնելուց հետո, միջնեկ եղբայրն է գնում, լինչպես արել էր մեծ եղբայրը, նա էլ իր եղբայրներին է խաբում։

Հերթը գալիս է փոքր եղբորը։

Փոքր եղբայրը գնում, սկսում է կարդալ գերեզմանի վրա։ Այդ ժամանակ ձեռքը երկարում է, որ մոմի լույսը հանգցնի։ Փոքր տղան քաշում է թուրը, զարկում, մաար կտրում։ Լույսը հանգցրնողը գևն է լինում. մյուս եղբայրներն այդ չեն հասկանում։

Փոքր եղբայրն այդ գևի մատը վերցնում, գալիս է եղբայրների մոտ, հարցնում.— Կարգացի՞ք հայրիկի գերեզմանի վրա։

Եղբայրներն ասում են.— Այո՛։

Փոքր եղբայրն ասում է.— Սուտ եք։ Ձեք կարդացել։ Ահա մատը կտրել, բերել եմ։ Եկեք գնանք այնտեղ, ուր որ արյունը կաթ-կաթ կտրել է։

Միասին գնում հասնում են գևի հորը։

Բզդաց ախպարը դաւսի.— Տօք ընծէ հիլըցէք հուս, նըքըր իս ուկում՝ Բարնում գաբիցիք ղէս, իճըցըցէք հաւրը՝ Իս գուկում, բարունը դիժղըղիմ, տօք գուհասգնաք իս իգուձ իմ, գըքիչիք, գըհանիք ղէս՝

Բզդաց ախպարը աղ գուբ-գուբ վիրընէն լիդըտէն գուրթօ, գուհանա, դուիշի մինձ սարալի մը գօ՝ Գուրթօ լաղ սարալէն գումընննա, գուիշի աշկէլէն մը գարկաք գուպանա, գաւսի.— Պարէվ, քուչօգ՝

Աշկէլէն ալ գաւսի.— Ասըձը պարէն, ախպար՝ Ուգը բիրդէն, ծուկը թիվէն չըգաբիր լասդիդը ուկուր, ոսն չուց իգիր՝ Հուս դէվ մը գօ, մուդը գըդրուձ ի, լարալանմըշ իգուձ ի, բասգուձ ի, թը հաւդիա պառնէ, գընննի գուդի գքէ՝ Ուշէդ ախէ՝

Դգան ալ գաւսի.— Իս աղաւր համուր իգաձ իմ, բըրսաքանիմ ղէ՝

Աղ աշկէլէնը գաւսի.— Իս աղվուր չըմկիդէ, կընու համու էմ օրթանջա քուրիս քուվը, ան գասի քէ չուց բըր սրաննիս ղէ՝

Բզդաց դդոն գուրթօգօ, գուրթօ օրթանջա քուրը քուվը՝ Գուրթօ լան սարալէն գուընննէ, գուիշէ աս դաթէն օրթանջա ֆայրը քան զմէգալը աղվուր ի, նադուձ զարկաֆ գուպանա՝ Աղուր ալէ գաւսի.— Պարէվ, քուրօգ՝

— Պարէվ, ախպար՝ Ուգը բիլդէն, ծուկը թիվէն չըգաւոնու լասդիդ ուկուր, ոսն չուց իգիր՝ Համու դէվը գընննէ, գուդէ դքէ. լարալանմըշ իգուձ, բարգուձ ի՝

— Իս աղուր համուր իգաձ իմ, զաղուր սրաննիլէն թաւրիֆ ըրէ ընծէ, իս կնում սրաննիմ դէ՝

Ան ալէ գաւսի.— Գուրթաւս միգալ սարալէն, ըրք քուրէս բզդալը, գուրթաւս ան քըդ թաւրիֆ գօնէ, քի չուցը սրաննիս ղդէվը՝

Դգան գընննի գուրթօ լոն սարալէն, գուիշէ բզդաց քալրը ֆան զէրգը քալրը գահա ուղվուր ի. արլվէն գաւսէ՝ ոճն մի ձիթի, իս գուձիթիմ՝

Գաւսի.— Պարէվ. քարօգ, ընծէ թաւրիֆ իրճ, քի չուց բըր սրաննիմ ղդէվը՝

Աշկէլէնը գաւսի.— Կընաւ իշէ. ագուր թը դէվը բասգուձ ի, ջընջիրը պիրնին գաւհնէն, լիդիվին գուընննին իաս՝ բասգուձ ի՝ Ան վուղըտը գըքիչիս գըթթըր զըգէխիս, գըսրաննիս գէ՝ Ղանը գաւսի քէ. «Ինաան-օգլը միմալէ գլխէ, քի ուշէդ անդղէմ»՝ Ամմա ասն գաւսիս՝ իս լէմ մուրը լիրմինը ղաթ մը ձննաձ իմ, ղաթ մալէ գըգխիմ՝

Դգան գուրթօ, գուգիանօ ջընջիրը պիրնին գումընէն, լիդիվէն գուընննին, գուգիխի՝ Դէվը գաւսի.— Միմալէ գիխէ՝

Փոքր եղբայրն ասում է.—Դուք ինձ այստեղ սպասեք, մինչև ես գամ, պարանով կապեցնէք ինձ, իջեցրնէք հորը՝ Ես կգամ, պարանը կշարժեմ, դուք կիմանաք, որ ես եկել եմ, կքաշեք, կհանեք ինձ՝

Փոքր եղբայրն այդ կաթ-կաթ տրլտն ետևից գնում, հասնում, տեսնում է մի մեծ պալատ կա· Գնում, մտնում է այդ պալատը, տեսնում է մի աղջիկ ձեռագործ է անում, ասում է.— Բարև՛, քույրիկ՝

Աղջիկն ասում է.— Աստծո բարին, եղբա՛յր՝ Օձը պորտով, ծիտը թևով չի կարող այստեղ գալ. դու ինչպե՞ս եկար՝ Այստեղ մի վև կա, մատը կտրած, վիրավոր քնած է, եթե քո հոտն առնի, կելնի կուտի քեզ՝ Շուտ փախիր՝

Տղան ասում է.— Ես դրա համար եմ եկել, պիտի սպանեմ նրան՝

Այդ տղջիկն ասում է.— Ես լավ չգիտեմ, հիմա գնա իմ միջնեկ քրոջ մոտ, նա քեզ կասի ինչպես պիտի սպանես նրան՝

Փոքր տղան թողնում, գնում է միջնեկ քրոջ մոտ՝ Բարձրանում է պալատ, տեսնում միջնեկ քույրն ավելի սիրուն է, քան մեծը, նստած ձեռագործ է անում՝ Նրան էլ ասում է.— Բարև՛. քույրիկ՝

— Բարև՛, եղբայր՝ Օձը պորտով, ծիտը թևով չի կարող այստեղ գալ, դու ինչպե՞ս եկար՝ Հիմա գևը վեր կկենա, կուտի քեզ. վիրավորված եկել, քնել է՝

— Ես դրա համար եմ եկել, դրա սպանելու ձևը բացատրիր ինձ, գնամ սպանեմ նրան՝

Նա էլ ասում է.— Կգնաս մյուս պալատը, երեք քույրերիցս փոքրը քեզ կպատմի, թե ինչպես պիտի սպանես գևին՝

Տղան վեր է կենում գնում այդ պալատը, տեսնում՝ փոքր քույրը մյուս երկուսից տվելի զևզեցիկ է. արևին ասում է՝ դու մի ծաթիր, ես պիտի ծաթեմ՝

Ասում է.— Բարև՛, քույրիկ, ինձ պատմիր, թե ինչպե՞ս սպանեմ գևին՝

Աղջիկն ասում է.— Գնա տես, եթե գևը պառկած է, ճանճերը բերնից մտնում, եռևից դուրս են գալիս, ուրեմն՝ քնած է՝ Այն ժամանակ կքաշես թուրը, կգարկես, կսպանես նրան՝ Գևը կասի քեզ. «Մարգու տղա, մի հատ էլ զարկ, որ շուտ մեռնեմ»՝ Բայց դու կասես՝ ես մոլիցս մի տնգամ եմ ծնվել, մի անգամ էլ կզարկեմ՝

Տղան գնում, տեսնում է ճանճերը բերնից մտնում, ետևից դուրս են գալիս, զարկում է՝ Գևն ասում է.— Մի հատ էլ զո՛րկ՝

Դղան կ՚ասի.— Իմ մուրը լիրմինը ղալթ մը ձննուձ իմ, մին ղալթ ալէ գրպինիմ, դասպանիմ,

Դղան ուրդաղ գըսրանի դղէվը՝ Ծրդ դուլվա, գուառնի զաչկընիրը, ղղաղ քայրը կնք գուառնի, օրթոնջանը՝ օրթոնջա ախպօրը, մինձը՝ մինձ ախպօրը, Գուրթօ ադ հիրէն քավը գուհասնա, գոխժդդի գրարանը, Ախպրդնաքը մինձ աշղէկը գուքիչին,

— Աս մինձ ախպօր ղղսամթն է,— ղաւսէ դղան,

Ախպըրդնաքը գըհնդուն,

Իքընջէն ալէ գուհանի՝ օրթոնջա ախպօրը համուր,

Բգդաքէն գուհասնա նուրը, աչկէյնը գուսասի.— Ձը ախպըրդնաքը գըղըսիանմըշընուն, քի իս չունդ աղվներ իմ, ղքի գըթուղօն հիրէն միչը. ասն լաուանճ իլ,

Դղան գասի.— Ձէ, էմ ախպըրդնաք ուրդաղ պուն չըրինին, Գուհանի գաչկէյնը լաուանճ, կնք գումընօ հնրը,

Ախպըրդնաքը գուսնին.— Աս դահա աղվներ ի, ղէնք գըթօղունք հնրը, չըհանին ղը,

Հիրէն գիսը գուհասնա, բարուևը գուկղուին, դղան գրնինու միչը,

Գասին.— Մինձը՝ մինձ ախպօրը, օրթոնջէն՝ օրթոնջա ախպօրը, բղդայն ալէ գուղօնք վէղիրէն դղէն,

Բգդաք դղան հիրէն միչը գուբալըմիշ ընննօ, սունղը խիլքը կյճիւը գուկօ գիմնօ, գուրթօ մինձ ղաչհվընէն սարայը, գուիշէ հուն ղօ իսկը ուրիսք ալը Ցադ սարայինն գուննի, միգալ սարայէն ղուրթօ, հուն ալ գուիշէ իսկը ղնուրդ մը՝ ծակիրն ալէ հիդը, Գուուրթու յան միգալ սարայէն, գիշէ ծէնը մուրդէն միչը թաղվուձ, Գուհանի զծէնը մուրդինն Ծէնը գուզօ էր ըրգը մուղ, գասէ.— Ցիփըր նիղը գիմնէս գաս ըրգ մուղը աիրուր քիշզէս, իս գըհնասնէմ քէ,

Գուննի դղան գուրթօ Շնդ գուրթօ, քէչ գուրթօ, գուիշի հուվէվ մը մակակ գօրծէ, ադ հուվըվէն յալվարլամըշ գընննօ, գասէ.— Օ՛ո ղէմ ըսօլո՝ տօն հաքէ, քօ ըսախնէն իս հաքնէմ,

Հուվիվէն հիդը գուփխէ ղսախնէն, գըհաքնա հուվըվէն ըսուխը, գուառնի մակա մը լիրմինը, գուղնի ղէ, գիշէն գուանցնի ալօխը, գուսառնօ Ցյալ դղա, Դղան գըհարցնէ հուվըվէն.— Կիղէն միչը չա՞ գօ, չա՞ չիկօ,

Հուվէվն ալէ գասի.— Զա ըրը ընննօ, թնաքավըրէն դղաքը ըրք աչհվէյն պիրուձ ին, ըրգծքը իրինք առուձ ին, բգդաք աչհվէյնը ալէ վնդիրէն դղէն ըրը տղօն, Աչհվէն ալէ չաղի հարանաք ընննօ, քառասն ուր մանդա ի գվուձ,

Բգդաք դղան գուկու կիղը դումընննա, գուրթօ Տղան ասում է.— Մորիցս մի անգամ եմ ծընվել, մի անգամ էլ կզարկեմ, կսպանեմ,

Տղան այդ ձևով սպանում է գևին, Նա է պառնում, վերցնում է աղչիկներին, փոքր քրոջն ինքն է առնում, միջնեկը՝ միջնեկ եղբորը, մեծը՝ մեծ եղբորը, Գնում հասնում է հոլի մոա, շարժում է պարանը, Եղբայրները մեծ աղչկան քաշում հանում են,

— Այս մեծ եղբոր բախան է,— ասում է աղան,

Եղբայրներն ուրախանում են,

Երկրորդին է հանում՝ միջնեկի համար, Հերթը հասնում է փոքրին, Աղչիկն ասում է.— Եղբայրներդ կնախանձեն, որ տեսնեն ես շատ գեղեցիկ եմ, քեղ կթողնեն հորի մեջ, դու առաջ ելիր,

Տղան ասում է.— Ո՛չ, եղբայրներս այգպիսի բան չև՛ն անի, Առաջ աղչկան է հանում, ինքը մնում է հորի մեջ,

Եղբայրներն ասում են.— Սա ավելի գեղեցիկ է, իրեն կթողնենք հորում, չենք հանի,

Հասնում է հորի կեսը, կարում են պարանը, տղան մնում է մեջը,

Ասում են.— Մեծը՝ մեծ եղբորը, միջնակը՝ միջնեկ եղբորը, փոքրն էլ վեղիրի աղային կանանք,

Փոքր տղան հորի մեջ ուշագնաց է լինում, վերջը ուշքի է գալիս, վեր է կենում գնում մեծ աղչկա պալատը, տեսնում է այնտեղ մր ոսկե օրորոց կա, Այդ պալատից դուրս է գալիս ղնում է մյուս պալատը, այնտեղ էլ տեսնում է ոսկի թուխս կա՝ ձագերն էլ հետը, Գնում է մյուս պալատը, տեսնում է ձին ցեխի մեջ թաղված, Հասնում է ձին ցեխից, Ձին նրան երկու մաղ է տալիս և ասում.— Երբ նեղն ընկնես, այս երկու մազն իրար կքսես, ես կհասնեմ քեղ,

Տղան վեր է կենում գնում, Շատ է գնում, քիչ է գնում, տեսնում է մի հովվի, մաքիներ է արածեցնում, հովվին խնդրում է, ասում.— Ա՛ռ իմ շորերը՝ դու հագիր, քո շորերն էլ ես հագնեմ,

Հովվի հետ փոխում է շորերը, հագնում է հովվի շորը, նրանից առնում մի մաքի, մորթում է, մորթին անցկացնում գլուխը, գառնում քաշել տղա, Տղան հարցնում է հովվին.— Գյուղի մեջ ի՞նչ կա, ի՞նչ չկա,

Հովիվն ասում է.— Ի՞նչ պիտի լինի, Թագավորի աղաներն երեք աղչիկ են բերել, երկուսն իրենք են վերցրել, փոքրին՝ վեզիրի աղային են տալու, Աղչիկը չի ուզում հարսանիք անել, քառասուն օր ժամանակ է ավել,

Փոքր տղան գալիս մանում է դյուղ, գնում է

ջուլըմջը վաբբիդէ մը քուվը.— Պարի՛վ,— զանի, — վարբիդ, քուվիտ չանգիրդ չը՞ր առնիս գէս։

— Է՛,— զանի,— Քլալ դզօ, լիմիբը իզուր իլուր։

Ան ալ զանի.— Իս քէնէ փարա չըմ ուզի։

Ղուլըմջէն զանէ զէ քուվը։

Թաքավո՛րէն դզաքը զըզինչին ղուլըմջէն, զանին.— Իսկը ուրո՛ւաք մը բըր շինիս, բըր հասցընիս նըքըր քաուսն ուր։

Ղուլըմջէն լիդ զուկու չահրան մաթ։

Քլալ դզան զանի.— Զա՞ իզուձ իւ

— Է՛, Քլալ դզտ, ածն ուզուրսուս իս իզուձ, Թաքավո՛րէն դզաք նըքըր քաուսն ուր մանգատ ղվուձ ին, իսկը ուրո՛ւաք զուգին։

— Է՛, վարբի՞դ.— զանի Քլալ դզան,— ադ ի ղուշինզէտ։ Ամըն իրիզն մանէթի մը լարլաբաւ օտ, քաուսն օր լիդը ուրո՛ւաքը օտ կընօ։

Տըրզաւդ զըբըլըշա պունը։ Ամէն ըրզն Թըքթըք, ամաւ քաուսն ուրէն հիդը իսկը ուրուաքը զուպիւրի։ Ասնդ իրիզնը վաբբիդը զուխէ Թաբախէն ձագէն, զաթը ուրո՛ւաքը զըբըսաօ։ Գըխընդօ, քի Քլալ դզան շինուձ իւ

Աաբախդան զընօ վարբիդէյն զանի.— Օ՛ո զուրո՛ւաքը, վարբի՛դ, իս ալէ ուկում հիդիտ։

Վարբիդը չի դանէր զէ։

Աչկէյնը զուդխնու, զըխընդօ, զանի. «Դզան սազ իւ»։ Զվարբիդին զուզօ բանիշիշ, զանի.— Աս գաթէն զուգիմ խոկը գաւրը՝ ծանկիրն ալ հիդը բարաբուր։

Ղուլըմջին լիդ զուկու, զանի.— Աս գաթէն ալէ իսկը գուրը զու.զի լիրմինս։

Քլալ դզան զանի.— Քտաօն օր մանգատ գօր, իս զուխանդըրիմ։

Քտաօն ուրը զըխալիսա, աաբախդան վաբբիդ զուկօ, զըդխնօ դզան խանդըրիրի իսկը գուրը ծանկիրն ալէ բարաբուր։

Վաբբիդը զաունէ զուզանա Թաքավիրէն զօնազը։ Աս գաթէն ալէ բզդանզ աչկէյնը զանէ.— Զըրիդ բըր ընի ծիում, ուվ ըր զըհասնա յաուտնճ, ան ալէ զաունի զէս։

Թաքավո՛րը իլան գինի.— Բըթլն Թլզ ուկուն, չըրիդ բըր իսազոն։

Ղուլըմջէն զուխադրվտ, Քյալ դզան զուկօ, զանի.— Իս ալէ զուգիմ ուրթիլ չըրիդ։

Ղուլըմջէն զանի.— Թուփալ ծէն մը զօ լախըրը, օտ զէ, կընօ։

Քլալ դզան զուրթօ, զուդ Թուփալ ծէնը զաւզաբի լիղըքնէն միչը, ազ ըրզը մուզը զուքիշտի, զուկու ըսրիդնզ ծէնը, ըորիզուդ ըոուխնէն ալէ հիդը բարաբուր։

ոսկերչի մոտ.— Բարև՛,— ասում է,— վարպետ, մոտդ ինձ աշակերտ չե՞ս վերցնի։

— Է՛,— ասում է,— քաչալ տղա, որտե՞ղից եկար։

Նա էլ ասում է.— Ես քեզնից փող չեմ ուզի։

Ոսկերիչը վերցնում է նրան իր մոտ։

Թագավորի տղաները կանչում են ոսկերչին, ասում.— Մի ոսկի օրորոց պիտի շինես, մինչև քառասուն օր պիտի հասցնես։

Ոսկերիչը տխուր վերադառնում է։

Քաչալ տղան ասում է.— Ի՞նչ է պատահել։

— Է՛, քաչալ աղա,— ասում է,— քո գալն անհաշող էր. թագավորի տղաները մինչև քառասուն օր ինձ ժամանակ են տվել, ոսկե օրորոց են ուղում։

— Է՛, վարպետ,— ասում է Քաչալ աղան,— ա՞յդ է մտածմունքդ։ Ամեն իրիկուն մի մանեթի լաբլաբու ես, քառասուն օր հետո օրորոցն ես պնես։

Այդպես գործն սկսում է։ Ամեն իրիկուն թլկթլկ, բայց քառասուն օրից ոսկե օրորոցը բերում է։ Քառասուն օրվա վերջին պիշերը վարպետը լուսամուտի անցքից նայում, տեսնում է ոսկե օրորոցը փայլում է։ Ուրախանում է, որ Քաչալ աղան շինել է։

Առավոտյան վեր է կենում, վարպետին ասում.— Վերցրու օրորոցը, վարպե՛տ, ես էլ գամ հետդ։

Վարպետը չի տանում նրան։

Աղջիկը տեսնում է օրորոցը ուրախանում, ասում է. «Տգան ողջ է»։ Վարպետին նվեր է տալիս, ասում.— Այս անգամ կուղեմ ոսկե թուխան իր ձագերի հետ։

Ոսկերիչը վերադառնում է, ասում.— Այս անգամ էլ ոսկե թուխան է ուզում ինձնից։

Քաչալ աղան ասում է.— Քառասուն օր ժամանակ տուր, ես կպատրաստեմ։

Քառասուն օրը վերջանում է, առավոտյան վարպետը գալիս, տեսնում է, աղան պատրաստել է ոսկե թուխան իր ձագերով։ Վերպետն առնում է առնում թագավորի պալատը։ Այս անգամ էլ փոքր ազջիկն ասում է.— Ձիարշավ պիտի լինի, ով առաջ հասնի, նա էլ ինձ կառնի։

Թագավորը հայտարարում է.—Բոլորը թող գան ձիարշավ խաղալու։

Ոսկերիչն էլ է պատրաստվում, Քաչալ աղան գալիս է, ասում.— Ես էլ եմ ուղում գնալ ձիարշավ։

Ոսկերիչն ասում է.— Մի կաղ ձի կա տիրոջում, վերցրու գնա՛։

Քաչալ աղան գնում է այդ կաղ ձին կապում է եղեգնուտի մեջ, երկու մաղն իրար է քսում, գալիս է սպիտակ ձին, սպիտակ հագուստներն էլ հետը։

Փուհաքնա ըսուխնէն, գուրդնա գծէնը, ղարթու տալ չըրիկը մէյդանը, յառալ չինգին դամլկնա, յանալ չինգին գալըննի, Բզդաձ աշկէյը գըինգօ, փի ըզդաձ դղէն իդավ։ Դդան գափիրի ղռուխը, կուհիդնա գթուփալ ծէնը, գարթօ ի գօն։

Իքինջը ուրն ալէ արդաղ գալընօ։

Դղէն ղուլըմջէն գձսի.— Վարրիկ, չուց իր, աղվոր իր ադ դղան։

Ղուլըմջէն գձսի.— Ոլալ դդա, ասօն ալէ ապվորը կիտէցուր։

Ուչինջի արը դդան գուկնօ չըրիկ, գսաքիշտի թճըր, գաբաղէ վագիրէն դլէն ծիօն փուրը։

Էհալին գաձափկի, քէ աս գդրէջը չըրիկը գադանմիշ իդավ։

Ցադ վաղըտը դդան գձսի,— Ի՛ս իմ թճաքվորէն բզդաձ դղան, ես բըր առնիմ բզդաձ աշկէնը, ան էմ նշաձօն ի։

Ցաթը ար, յաթը իրգօն հարանաք գինին, ղըխընդուն։

Իրգնուցը ինգավ ըրք խնծոր. մէյը՝ հաղնթօղէն, մէյը՝ էհալէն, մէյն ալէ՝ մահրըճնէն։

Հագնում է շորերը, հեծնում ձին, դնում ձիարշավի հրապարակը, մի անկյունից մտնում է. մյուս անկյունից դուրս է գալիս։ Փոքր աղչիկն ուրախանում է, որ փոքր աղան եկավ։ Տղան փոխում է հագուստը, հեծնում է կաղ ձին, դնում տուն։

Երկրորդ օրն էլ այդպես է անում։

Տղան ոսկերչին հարցնում է.— Վապե՛ա, ինչպե՞ս էր, լա՞վ էր այդ աղան։

Ոսկերիչն ասում է.— Քաչա՛ղ աղա, դո՛ւ էլ ես լավը հասկանում։

Երրորդ օրը աղան գալիս է ձիարշավ, քաշում թուրը, վեղիրի աղայի ձիու փորը պատռում։

Ժողովուրդը ծափահարում է, որ այդ կտրիճը ձիարշավում հաղթեց։

Այդ ժամանակ աղան ասում է.— Ե՛ս թագավորի փոքր աղան եմ, ե՛ս պիտի առնեմ փոքր աղջկան, նա ի՛մ նշանածն է։

Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, ուրախանում են։

Երկնքից ընկավ երեք խնձոր. մեկը՝ հեքիաթ ասողին, մեկը ժողովրդին, մեկն էլ՝ դուրկ ապրողներին։

7 (7). ՇԱՀՅԱՐԱՆ

Շահլարան խլնք թճաքվորմ իր։ Ցեր վախտը քենգէնք խլնք մարթ չըկար։ Ինն ար մը ասուց.— քենգէս աղվոր. խիլք իլոն հարսատթէն աննննող չիդօ։

Ջադ խուսքիրը լսից հալվոր մը, ասաց.—Ջա՞ գընննօ Շահլարէն հարսատթէնը։ Ջահիլ վախտըս թաղլէ մը անցօ, չուղըր մը ղար լէ։ Ջադըրէն միչը գիցած ղարարաէն Շահլարան չունա ղէ։

Շահլարան լսից ղադ խուսքիրը, ասաց.— Ջադ հալվորը քսվիս պիրիք։

Կացէն հալվորէն քուվը, դիսան ղամրիլէն միչը բառգած է, ացէն էր.— Շահլարան գքէ գուղէ էր քուվը։

— Ջըմ գարնօ ուրթօ,— ասուց հալվորը,—ծառվէս, վգվէս գուտաղօ։

Իլուն կացէն, Շահլարէն ացէն հալվորէն ասածը։

—Կացիք, շաղգիցիք պիրիք գէ,— ասաց Շահլարան։

Կացէն, պիրէն ղէ։ Շահլարան ասուց տալ հալվորը.— Ցօն չո՞ւց դիսար չագրէն միչը ղարարաէն։

Հագնում է շորերը, հեծնում ձին, դնում ձիարշավի հրապարակը, մի անկյունից մտնում է. մյուս անկյունից դուրս է գալիս։ Փոքր աղչիկն ուրախանում է, որ փոքր աղան եկավ։ Տղան փոխում է հագուստը, հեծնում է կաղ ձին, դնում տուն։

Երկրորդ օրն էլ այդպես է անում։

Տղան ոսկերչին հարցնում է.— Վապե՛ա, ինչպե՞ս էր, լա՞վ էր այդ աղան։

Ոսկերիչն ասում է.— Քաչա՛ղ աղա, դո՛ւ էլ ես լավը հասկանում։

Երրորդ օրը աղան գալիս է ձիարշավ, քաշում թուրը, վեղիրի աղայի ձիու փորը պատռում։

Ժողովուրդը ծափահարում է, որ այդ կտրիճը ձիարշավում հաղթեց։

Այդ ժամանակ աղան ասում է.— Ե՛ս թագավորի փոքր աղան եմ, ե՛ս պիտի առնեմ փոքր աղջկան, նա ի՛մ նշանածն է։

Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, ուրախանում են։

Երկնքից ընկավ երեք խնձոր. մեկը՝ հեքիաթ ասողին, մեկը ժողովրդին, մեկն էլ՝ դուրկ ապրողներին։

7(7). ՇԱՀՅԱՐԱՆ

Շահլարան մի խելոք թագավոր էլ։ Իր ժամանակ նրանից խելոք մարդ չկար։ Նա մի օր ասաց.—Ինձանից լավ, խելք ու հասկացողություն ունեցող չկա։

Այդ խոսքերը լսեց մի ալեւոր, ասաց.— Ի՞նչ է Շահլարայի հարստությունը։ Երիտասարդ ժամանակ մի դաշտի միջով անցա, մի վրան կար։ Վրանում եղած ունեցվածքը Շահլարան չունի։

Շահլարան լսեց այդ խոսքերը, ասաց.—Այդ ալեւորին մոտս բերեք։

Գնացին ալեւորի մոտ, տեսան դամբյուղի մեջ պառկած է, ասացին նրան.— Շահլարան քեզ իր մոտ է կանչում։

— Չեմ կարող դնալ,— ասաց ալեւորը,— ոտքերս ու ձեռքերս դողում են։

Բերան գնացին, ալեւորի ասածները հաղորդեցին Շահլարային։

— Գնացե՛ք, շալակե՛ք, բերե՛ք,— ասաց Շահլարան։

Գնացին, բերեցին նրան։ Շահլարան ասաց ալեւորին.—Դու ինչպե՞ս տեսար վրանի մեջ եղած ունեցվածքը։

— Ցօն չունէս զէ,— ասուց հալվաձուրը։

Շահլարան նիխիկիցուվ, ասուց.— Գուգիմ դիսնօ գադ չադըրը։

—Գարնունք դիանօ ղէ,-- ասուց հալվաձուրը,— աձար ոսն ամըր թը դինիս ասլանէն թաքավաձուրէն, ծակէրէն թաքավաձուրէն, աղունք մէ գուդանէն լան չադըրը։

Թաքավաձուրը ամըր ձրծց ասլանէն թաքավաձուրէն, ծակէրէն թաքավաձուրէն, հալվաձուրէն հիդը իլուն կացէն լան չադըրը։ Շունդ կացէն, քէչ կացէն, հասուն չադըրը։ Ալալը չադըրէն միչը մդուն, պուն չդիսուն։ Շահլարան նիխացուվ, ասուց տալ հալվաձուրը.— Աս չա՞ պուն է, ղէս գախապըդիս։

Հալվաձուրը չուղուպ րդօր.— Աարրր ձրօր։

Ցադ խուաքէն իլվան, աշկէն մը նըքաչ մըդուվ։ Շահլարան դիսուվ ղէ շաշմըշ իղուվ, քէ աս չուց աղվըրթէն է։

Աշկէնը ալալնէն պաբիվ իկիր ասուց։ Ձաթմալէ ֆըրթանէն իրվան հիձուձ քուրսընա իգէն։ Ամըն մուրթը գուրա քուրսընա իգիք։ Ցադաձր իդղոէն ֆրթանէն իլվան հիձուձ մասա մալէ իգիք, ալալը նսդուն։ Շահլարան դիսուվ ղադ գաւրարուէն, շաշմըշ իդուվ, ծան չհանից։

Ախշարէն էն աղվաձր աշկէնը ասուց տալ Շահլարան.— Իրգօնը լէմ քուվը միսաֆըր իք։

Հալվաձուրը ասուց սալ թաքավաձուրը.— Զո՞ւց է Շահլարա, դաս ագվաձր աշկէնը գուղվա քէ նշանձօն ընննօ։

— Հաբու գընննօ՞,— ասուց Շահլարան։

— Իս ադ պունը գըդիսնում,— ասաց հալվաձուրը։

Իլուն կացէն աշկընէն դունախը։ Աշկէնը իպիր սուֆրան սաղից, նսդուն ուդիլա գիրունւ Հալվաձուրը ասուց տալ աշկէնը.-- Ալալիս գուգինք սօն թաքավաձուրէն նշանձօն ընննս, ղաբօ՞լ գինիս։

— Թաքավաձուրը ղէր մադնէն թը գադօ ընծէ, ղաբօլ գինիմ,— ասուց աշկէնը։

Շահլարան իղօր ղմադնէն։ Ցադդիղը դիրուն, խմիցէն, քէֆ իրէն, սահաթնէրուվ թմպաձ, ղուռնօ քիշտիցէն, ագվաձր-աղվաձր խուսացէն։

Ախշարէն էն աղվաձր աշկէնը ասուց.— Վախտը անցավ, Շահլարա՛, քիլէ ուրթունք բսուգէնք։

Շահլարան ասուց.— Ցօն կնօ, իս դուկում։

Աշկէնը կնաց, բսուգիցուվ։ Քէչ մը սօրա Շահլարան կնաց լաշկընէն ուգան, տօրը մադդուցուվ, աբոնին փիս հունդ մը իկիք։

Շահլարան դիսուվ գաշկէնը բըթըն ցավիր իլած է, թարխընէն գուղա, դօնը հիդդուձ է։

Շահլարան նէքցէ չըմդուվ, աշկէնը գինչից։ Ան չուղից, կնաց հալվաձրէն քուվը նսդուվ. շունդ նիխացուձ իր։

— Դու չունես դրանք,— ասաց ալևորը։

Շահլարան ղայրսացավ, ասաց.— Ուզում եմ տեսնել այգ վրանը։

— կարող ենք տեսնել,— ասաց ալևորը,— նթե դու հրամայես առյուծների թագավորին և թռչունների թագավորին, նրանք մեզ կտանեն այգ վրանը։

Թագավորը հրամայեց առյուծների թագավորին, թռչունների թագավորին, ալևորի հետ ելան գնացին այգ վրանը։ Շատ գնացին, քիչ գնացին, հասան վրանը։ Բոլորը վրանի մեջ մտան, ոչինչ չտեսան, Շահլարան ղայրացավ, ասաց ալևորին.— Սա ի՞նչ րան է, ինձ խարեցիր։

Ալևորը պատասխանեց.— Համրերի՛ր։

Այգ խոսքի վրա, մի աղջիկ ներս մտավ, Շահլարան տեսավ նրան ու զարմացավ, թե գա ի՛նչ գեղեցկություն է։

Աղջիկը բոլորին բարի գալուստ մաղթեց։ Մեկ էլ քամու վրա հեծած աթոռներ եկան։ Ամեն մարդու համար աթոռ եկավ։ Դրանից հետո քամու վրա հեծած մի սեղան եկավ, բոլորը նստեցին։ Շահլարան տեսավ այդ իրերը, զարմացավ, ձայն չհանեց։

Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ասաց Շահլարային.—Այս երեկո ինձ մոտ հյուր եք։

Ալևորն ասաց թագավորին.— Ի՞նչպես է, Շահլարա, ուղո՞ւմ ես, որ այս գեղեցիկ աղջիկը քո նշանածը լինի։

— Բայց կլինի՞,— ասաց Շահլարան։

— Ես այդ րանը կտնեմ,— ասաց ալևորը։ Նրան գնացին աղջկան պալատը։ Աղջիկը ընդուն սեղան բացեց, նստացին, ուտելիք կերան։ Ալևորն ասաց աղջկան.— Մենք բոլորս ուզում ենք, որ դու թագավորի նշանածը դառնաս, համաձա՞յն ես։

— Նթե թագավորն իր մասանին ինձ տա, կհամաձայնվեմ,— ասաց աղջիկը

Շահլարան ավելց մատանին։ Այգաեղ կերան, խմեցին, քեֆ արեցին, ժամերով թմրուկ, ղուռնա ղարկեցին, անուշ-անուշ ղրուցեցին։

Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ասաց.— Ժամանակն անցավ, Շահլարա՛, արի գնանք քնենք։

Շահլարան ասաց.— Դու գնա, ես գալիս եմ։

Աղջիկը գնաց, պառկեց։ Քիչ հետո Շահլարան գնաց աղջկա սենյակը, մտնեցավ գռանը, գռնից տհաճ հոտ էր գալիս։

Շահլարան տեսավ աղջկան ամրողջովին վերքերով պատած, թարախը հոսում է, առնր հոսում է։

Շահլարան ներս չմտավ, աղջիկը կանչեց նրան։ Նա չուզեց գնալ, գնաց ալևորի մոտ նստեց. շատ էր վիրավորված։

— Ձվա՞ք քանգալ նիդծյած իս,— ծսուց հնլվ՚ըր։

Շահյորան հսղիաթից ընննած պունլ։— Իմ մաղնէն չա՞ բըր ընննո։

Հնլվ՚ըր ծսուց.— Մ՚ըրնխլաչն գուկո ճշկէնը, գադ պունը իս պուդիսնօմ, համու բառգիցունք։

Մ՚ըրնխլաչն ի՚լիք ճշկէնը, ճշկէնը հէն աղվըրաէննը իր։

Հնլվ՚ըր ծսուց տալ ճշկէնը։— Շահյորան դքէ չուդէ։

Ճշկէնը ծսուց տալ թ՚ըքվ՚ըրը.— Դուդօմ գմադնէն,— ծփկէց մը մաղնաք հանից չիբին,— օո քէ մադնէն։

— Տօն քէ ծսուում գէմ մադնէն պօլ,— ծսուց Շահյարան։

Ճշկէնը հանից գմադնէն մինգըդից ծաոը տալ Շահյարան, ծսուց.— Իս ուշխուրն իմ. հիչ մուրթ գէս չըհասգընուր։

— Ինչու՞ ես այդպես նեղացած,— ասաց ալևորը։

Շահ՚յարան պատմեց եղածն ու ասաց.— Իմ մատանին ի՞նչ պիտի լինի։

Ալևորն ասաց.— Առավոտյան աղջիկը կդա, ես այդ բանը կանեմ, հիմա քնենք։

Առավոտյան աղջիկն եկավ՝ ղարձյալ իր նախկին գեղեցկությամբ։

Ալևորն ասաց աղջկան.— Շահ՚յարան քեղ չի ուզում։

Աղջիկն ասաց թագավորին.— Մաանին կտամ,— գրպանից մի բուռ մաանի հանեց,— տ՚ո քո մաանին։

— Դու քո ձեռքով իմ մաանին աուր,— ասաց Շահյարան։

Ագջիկը հանեց մի մաանի, ձեռքը պարգեց Շահյարային, ասաց.— Ես աշխուրհն եմ. ինձ ոչ ոք չի հասկանա։

8 (8). ԹԱԳԱՎԻՐԷՆ ԻՍԿԱ ԿԼԱՈՒԽ, ԱՐՋՈՒԹ ԿԼԱՈՒԽ ԴՂԱՓՐ

Վախտիլը թ՚ագ՚ավիրէն մէլը թ՚ապտիլը իըլաֆիտաև գուրթ՚ի իլվիլը. դըսնիլա համուր, քի իհալին չուց գուարրաւ Դրդիոնօ ըրք աշկէչն նըսդուձ դիշղ՚ափսչն քուվը գուխուսէչն։ Աշկընիրէն մէլը վ՚ան.— Ախար թ՚ագ՚ավիրը գէս թը գաոնի, իս էլր համուր ղըպիրիմ ըրգը դղօ՝ միգէն կլաուխ իսկա, միգալէն ալէ՝ ուրձուլթ։

Թ՚ագ՚ավիրը գուրթօ իդօն, գըգինչըցընի ղադ աշկէչնը, գաոնի գէ։

Ուր մալէ թ՚ագ՚ավիրը գուրթօ յավը։ էնը ամէլս, էնը ուր, էնը սահաթ սօնղրա ադ աշկէչնը ըրգը դղօ գըպիրի՝ միգէն կլաուխ իսկա գընու, միգալէն ալէ՝ ուրձուլթ։

Ադ թ՚ագ՚ավիրը գաոնունու ղայր գընալ մը։ Ադ գընալը գուգըսղանմըշ ընննու, մէդքը գըտընա գադ չուճրխնէն գէյր իննիլ։ Դուգիրի ըրգը շան լագուդ գուտընա ադ գինգուն հիդքուվէն, ադ ըրգը չուճօին ալէ, գաոնի, գուտընա սընդգէ մը միչ, գուսիրի ձէուվը։

Թ՚ագ՚ավիրէն խ՚ուրուր գուդուն, գ՚ուսին.— Ֆէ գնալը պիրուձ ի ըրգը շան լագուդ։

Թ՚ագ՚ավիր գուսուսի.— Դ՚արէք ղէ չուք ջամիչէն միչը, գարդէք գարգաղաչէն, անցնուղ—տաննուղ թըղ թըքնա իրիսը։

Ադ ըրգը չուճօիսը ճ՚այրը գուհանի ձուվին աուրուցի, Ցոնտին ըրգը հիկկա գուկուն, մէլը գուսնսի.—Ախար թը աս սընդալը փարօ ի՝ քի թըզգ ընննօ, ախար թը հիկկա ի՝ ընծի թըղ ընննօ։

8(8). ԹԱԳԱՎՈՐԻ ՈՍԿԵ ԳԼՈՒԽ, ԱՐԾԱԹ ԳԼՈՒԽ ՏՂԱՆԵՐԸ

Ժամանակով մի թագավոր ծգաված գնում շրջում է տեսնելու համար, թե իր ժողովուրդն ինչպես է ապրում։ Տեսնում է երեք ագռիկ ղարբասի մոտ նստած, խոսում են։ Աղջիկներից մեկն ասում է.— Եթե թագավորն ինձ առնի, ես նրա համար երկու տգա կբերեմ՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Թագավորը առն է գնում, կանչել է աալիս այդ աղջկան և ամուսնանում հետը։

Մի օր էլ թագավորը գնում է որսի։ Ինն ամիս, ինն օր, իններ ժամ հետո, այդ աղջիկն երկու աղա է բերում՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Թագավորը մի ուրիշ կին է ունենում։ Այդ կինը նախանձում է և մտադրում այդ երեխաներին անհետացնել։ Բերում է երկու շան լակոտ, գնում տյդ կնոջ կողքին, այդ երկու երեխաներին վերցնում, գնում արկգի մեջ, գցում ծովը։

Թագավորին լուր են աալիս, ասում.— Քո կինը երկու շան լակոտ է բերել։

Թագավորն ասում է.— Տարե՛ք նրան ճամփի մեջտեղը, ամրացրեք խաչափայտին, անցողգարձողը թող թքի երեսին։

Այդ երկու երեխաներին ջուրը ծովից գուրս է հանում։ Այն կողմից երկու հոգի են գալիս, մեկն ասում է.— Եթե այս տրկղում փող է՝ թող քեղ լինի, եթե հոգի է՝ ինձ լինի։

Գուառնին ղաղ սը նղա՛լը, գուպա՛նուն դէ, գուխին ըրդը չուճօխ։ Մուրթը գուառնի, գուդսնա դէ, էր համուր գուրիհի։ Ադա՛ր գընալը ղաղ չուճուխնէն գուղուրգի մակդա՛ր։ Ցէփըր քսուն դա՛րէ գուրննուն, Թա՛քավիրը գրխագընի չըրիդ։ Ա՛դ ղաքը գուա՛ռին.— Մինք ալէ բըր ուրթունք չըրիդ։

Ադ ղղօք ամէն մէլը ծէն մը գուառնի, գուրթուն չըրիդ։

Չըրիդ խաղիլէն վաղըտը տա՛ղդունքը գուինէլն կըլլինին։ Թա՛քավիրէն չաղվա՛ր ղընալը գրդխնու գաղ դգիցը իսկը-արձուրթը կլխընէն։

Դղաքը լէփըր յադ չամփին ղուառնէն, գուդխնուն գարգադաչը գարգաճ գնալը, ղըմըդըննուն, ձա՛ղգում ղիշին զիլխալ, կլսրփին գարցօնքը։

Ադ Թա՛քավիրէն չաղվա՛ր գլնալը ոծդ ղուհիվընանու, գուա՛սի.— Ասլանը գէլթը գաղվըրցնի ղէս։

— Ո՞վ գըպիրի գասլանը գէլթը,— գա՛սի Թա՛քավիրը։

—Չըրիդ խաղցուդ ըրդը դգաքը գըպիրին գը,— գա՛սի գնալը։

Թա՛քավիրը գուգինչցընի գաղ դղաքը։ Դղաքը գուկուն Թա՛քավուրէն դառնն։ Թա՛քավուրը գա՛սի.— Ընօք ուրին ըրը պիրիք ասլանը գէլթը, բադգը չըպիրիք՝ կլինէա բըր գըգրիմ։

Դղաքը գուրթուն լիոը։ Գուրթուն գիլվէն, գուխչին ասլան մը մինգըվծ ի։

— Իմ ձայձ աղվըրցըցիք,— գա՛սի ասլանը,— իս ծի աղվըրուրթէն գինիմ։

Ադ ձայձ չուբան գրննա, Թարուխը միչը։ Ադա՛նք տանկում գուձագին գձայձ, ադ Թարախ գուգգա, ադ ձայձ գաղվուրնու։ Ադ դղաքը գուգըթին գէլթ, գուառնին, յիդ գուրթուն, գուդանին Թա՛քավիրէն գուգօնն Թա՛քավիրը չա՛ղ դուխնգօ, ղա՛սդ.— Ա՛ճարիմ դղաք, չա՛ղ մա՛ւնուն իզօ։ Ուզիցե՛ք։

— Թա՛քավիր, չվա՞ դաղ գընալ ղարգաճ իս գարգադաչէն։

Թա՛քավիրը չուգուբ չիգօր։

— Թա՛քավի՛ր,— գա՛սին աննունք,— չվա՞ մինք քէ ա՛սած ա՛սլանը գէլթ պիրունք քէ, տօն միր ա՛ուձը չուլսիս, դաղ գնա՛լը գարգադաչին բըր քագիս։

Ցադ վաղըուը Թա՛քավիրը ա՛մըր գինէ՝ ուրթիլ գաղ գնա՛լը գարգադաչին քագիլ, պիրիլ։

Գուրթուն, գըպիրին Թա՛քավիրէն գօնը։ Գուա՛սին ադ դղաքը.— Թա՛քավի՛ր, ադ գինգուն միխքը չա՞ ի։

— Էր հարցըցիք,— գա՛սի Թա՛քավիրը։

Վերցնում են արկղը, րաց անում, տեսնում նրկու երեխա։ Այդ մարդր վերցնում է դրանց, տանում պահում։ Նրա կինը երեխաներին ուղարկում է գպրոց։ Ներ քսան տարեկան են դառնում, թագավորը ձիարշավ է կազմակերպում։ Տղաներն ասում են.— Մենք էլ պիտի գնանք ձիարշավ։

Տղաներից ամեն մեկը մի ձի է վերցնում, գնում ձիարշավ։

Ձիարշավի ժամանակ տղաների թասակներն ընկնում են գլուխներից։ Թագավորի չար կինը տեսնում է այդ տղաների ոսկի-արծաթ գլուխները։

Տղաները, երր այդ ճամփով անցնում են, տեսնում են խաչափայտին գամված կնոջր, մոտենում են, ծաղկով շոյում են երեսը, սրրում՝ արցունքները։

Թագավորի չար կինը սուտ հիվանդ է ձեանում և ասում.— Առյուծի կաթն ինձ կառողջացնի։

— Ո՞վ կրերի տոյուծի կաթը,— ասում է թագավորը։

— Ձիարշավ խաղացող այդ երկու տղաները կբերեն,— ասում է կինը։

Թագավորը կտնչում է այդ աղաներին։ Տղաները գալիս են թագավորի առուր։ Թագավորն ասում է.— Երեք օրից պիտի բերեք առյուծի կաթը, եթե չրերեք՝ գլուխնիդ կկտրեմ։

Տղաները դնում են լեռը։ Գնում ման են դալիս, տեսնում են մի առյուծ մեկնված է։

— Իմ ծիծր լավացրեք,— ասում է առյուծր,— ես ձեղ լավություն կանեմ։

Այդ ծիծր վերք է լինում, թարախը մեջը։ Նրանք դանակով ծակում են ծիծր, թարախը դուրս է գալիս, ծիծր լավանում։ Տղաները կթում են կաթը, առնում, վերադառնում, տանում տալիս են թագավորին։ Թագավորը շատ է ուրախանում, ասում.— Ապրե՛ք տղաներ, շատ դոհ եմ։ Ուզե՛ք։

— Թագավո՛ր, ինչո՞ւ ես այդ կնոջը դամել խաչափայտին։

Թագավորը պատասխան չի տալիս։

— Թագավո՛ր,— ասում են նրանք,— ինչու՞ մենք քո ասած առյուծի կաթը բերեցինք քեղ, դու մեր ասածը չես լսում, այդ կնոջը խաչափայտից պիտի հանես։

Այդ ժամանակ թագավորը հրամայում է՝ գնալ, այդ կնոջը խաչափայտից հանել, բերել։

Գնում, բերում են թագավորի տունը։ Տղաները հարցնում են.— Թագավո՛ր, այդ կնոջ մեղքն ի՞նչ է։

— Հարցրեք իրեն,— ասում է թագավորը։

— Ջը միխք չա՞ ի,— գուհարցնին դղաքը։

— Իս միխք չունէմ,— գուանի ադ գնալը,— գինչիցիք զմինձմարը։

Գըգինչին զմինձմարը։ Ան գուկու, թաքավիրը գուհարցնէ բաուվօն.— Իմ գնալը չա՞ պիրուձ իր՝ շան լուպա՞դ. չէ՞ դդաք իպիր։ Ուղուրթ ասու, թը չէ քէ կլաուխ ըրը գդրիմ։

— Ջէ գնալը,— դանի բաուօվը,— պիրուվ ըրգը դդո՝ միդէն կլաուխ իսկա, միգալէն՝ արձութ։

— Ձո՞ գան դդաքը,— գանի թաքավիրը։

— Իս միխք չունեմ,— գանի բաուօվը,— քէ միգալ դնալնի միգավիրը։

Թաքավիրը գուգինչի գնալը, գուհարցնէ.— — Իմ գնալը չա՝ պիրուձ իր՝ շուն լագուդ պիրուձ իր։ Ուղուրթ ասա, թը չէ՝ իլլաւխա ըրը գդրիմ։

Ան սալ գուանի.— Դղաք պիրուձ իր՝ միդէն կլաուխ իսկա, միգալէն՝ արձութ։

Ադ վաղըուը ըրգը դդաքը կլխընէն հանիցէն տաղըսկունքը։ Թաքավիրը ադունց կլխընէն դիոուվ՝ մէգէն արձութ ի, միգալէն՝ իսկա։

— Ան դդաքը էնի ին,— ասուց թաքավիրը։

— Իս միգավիր չիմ, քէ միգալ գնալն է միգավիր։ Իս իմ խուսքէն դիրն իգօ,— գանի գնալը։

Թաքավիրը գինչից գչալաթը, ասուց.— Ըրգը ձէն պէ, մէլը բաուվօն համոր, քի ղուղուրթը չասուց յան վաղըուը, մէգն ալէ՝ չադվիր կինգունը համոր, քի ղըսղանչլըվլն զէս խավից։

Թաքավիրը ամըր իրօց՝ գադ դդաքը պիրուղ գնալը համամ դանէյն, ադվիր ըոախնա հաքցընին, պիրին յէր քուվը։

Գուգանէյն, գուլվանուն, գուհաքցնին ղադվիր ըոախնէյն, գուպիրին գունըսգըցնին թախսէյն։

Թաքավիրը թագա հարսնաք դինի. յութը ուր, յութ իրգօն։

Իրգնայցը գիննա ըրք խընձըրու հուդ. մէլը՝ ընձի, մէլը՝ Սէթրակին, մէլը՝ հաղաթօղէն։

— Քո մեղքն ի՞նչ է,— հարցնում են տղաները։

— Ես մեղք չունեմ,— ասում է կինը,— կանչեցեք տատմորը։

Կանչում են տատմորը։ Նա գալիս է, թագավորը հարցնում է պառավին. — Իմ կինն ի՞նչ էր րերել՝ շան լակատ, թե՞ աղաներ էր բերել։ Ճիշան ասա, թե չէ՝ քո գլուխը կկտրեմ։

— Քո կինը,— ասում է պառավը,—բերեց երկու տղա՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

— Որտե՞ղ են դանվում տղաները,— ասում է թագավորը։

— Ես մեղք չունեմ,— ասում է պառավը,— քո մյուս կինն է մեղավոր։

Թագավորը կանչում է կնոջը, հարցնում.— Իմ կինն ի՞նչ էր բերել՝ շա՞ն լակոտ էր բերել։ Ճիշտն ասա, թե չէ՝ գլուխդ կկարեմ։

Նա էլ ասում է.— Տղանե՞ր էր բերել՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Այդ ժամանակ երկու աղաները գլխներից հանում են թասակները։ Թագավորը տեսնում է նրանց գլուխները՝ մեկը արծաթ, մյուսը՝ ոսկի։

— Այս աղաներն ի՛մն են,— ասում է թագավորը։

— Ես մեղավոր չեմ, քո մյուս կինն է մեղավորը։ Ես իմ խոսքի տերը եղա,— ասում է կինը։

Թագավորը կանչում է դահճին ասում.— Երկու ձի բեր, մեկը պառավի համար, որ այն ժամանակ ճիշտ չասաց, մյուսն էլ՝ շար կնոջ համար, որ նախանձից ինձ խաբեց։

Թագավորը հրամայում է՝ աղաները ծնող կնոջը բաղնիք տանել, դեղեցիկ հագուստներ հագցնել, բերել իր մոտ։

Տանում են, լվանում, գեղեցիկ հագուստներ հագցնում, բերում նստեցնում են թախտին։

Թագավորը նորից հարսանիք է անում. յոթ օր, յոթ գիշեր։

Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը՝ ինձ, մեկը՝ Սեդրակին, մեկն էլ՝ հեքիաթ ասողին։

9 (9). Տ Տ Ո Մ Ը

Ժամանակին գնաց մը եղբայա չի ունենում։ Գըլխընդրվա ասըձա. «Ջոջօխ թըղ ընօ դէ, թը գուզէ, տտօմ թըղ ընօ»։

Ասդուձ զծալնը գըլսէ, գուզօ էր տտօմ մը, ադ տտմէն միչն ալէ աշկէյն մը գըգինաւ։

Տտօմը գըմիգնօ, ամմա դունըմիչը հիչ պուն մալէ չունինի։ Մարը գուշալկի զադ աւօմը, գուրթաւ պօրտ մանուղնէն քուվը, գանի իրինց.— Շուդ գըխնդրէմ գէմ տտօմն ալէ սուրվըցցիք մանիլը։ Ջրհաննամը թըղ ընօ, թը՛ղ պանաւ։

— Քո մեղքն ի՞նչ է,— հարցնում են տղաները։

— Ես մեղք չունեմ,— ասում է կինը,— կանչեցեք տատմորը։

Կանչում են տատմորը։ Նա գալիս է, թագավորը հարցնում է պառավին. — Իմ կինն ի՞նչ էր բերել՝ շան լակոտ, թե՞ աղաներ էր բերել։ Ճիշտն ասա, թե չէ՝ քո գլուխը կկտրեմ։

— Քո կինը,— ասում է պառավը,—բերեց երկու տղա՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

— Որտե՞ղ են դանվում տղաները,— ասում է թագավորը։

— Ես մեղք չունեմ,— ասում է պառավը,— քո մյուս կինն է մեղավոր։

Թագավորը կանչում է կնոջը, հարցնում.— Իմ կինն ի՞նչ էր բերել՝ շա՞ն լակոտ էր բերել։ Ճիշտն ասա, թե չէ՝ գլուխդ կկարեմ։

Նա էլ ասում է.— Տղանե՞ր էր բերել՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Այդ ժամանակ երկու աղաները գլխներից հանում են թասակները։ Թագավորը տեսնում է նրանց գլուխները՝ մեկը արծաթ, մյուսը՝ ոսկի։

— Այս աղաներն ի՛մն են,— ասում է թագավորը։

— Ես մեղավոր չեմ, քո մյուս կինն է մեղավորը։ Ես իմ խոսքի տերը եղա,— ասում է կինը։

Թագավորը կանչում է դահճին ասում.— Երկու ձի բեր, մեկը պառավի համար, որ այն ժամանակ ճիշտ չասաց, մյուսն էլ՝ շար կնոջ համար, որ նախանձից ինձ խաբեց։

Թագավորը հրամայում է՝ աղաները ծնող կնոջը բաղնիք տանել, դեղեցիկ հագուստներ հագցնել, բերել իր մոտ։

Տանում են, լվանում, գեղեցիկ հագուստներ հագցնում, բերում նստեցնում են թախտին։

Թագավորը նորից հարսանիք է անում. յոթ օր, յոթ գիշեր։

Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը՝ ինձ, մեկը՝ Սեդրակին, մեկն էլ՝ հեքիաթ ասողին։

9(9). ԴԴՈՒՄԸ

Ժամանակին մի կին երեխա չի ունենում։ Ասածուց խնդրում է. «Երեխա թող լինի, ուղում է դդում լինի»։

Աստված ձայնը լսում է, մի դդում է աալիս, այդ դդումի մեջ մի աղջիկ է լինում։

Դդումը մեծանում է, բայց տան մեջ գործ չի անում։ Մայրը շալակում է դդումը, գնում բուրդ մանողների մոտ և ասում.— Շա՜տ եմ խնդրում իմ դդմին էլ մանել սովորեցնեք։ Ջրհանո՜ւմը, թո՛ղ աշխատի։

Տոմը հիչ գըսօրվա՞ պանիլ։ Ադ տոմը ա՛շկընիրէն գանսի.— Շադ գըխնդրիմ զէմ պիժէննն ալէ մանիցիք, իս գաւրթում դունծ, խնծա՛ր պիրիմ ծէ։

Աշկընիրը զէր ալ՛իժէննն ալէ գըմանին։

Տոմը կլուրվիլուվ-կլուրվիլուվ գուրթու գըմընա թաքաւիրէն բուստանը։ Տոմէն միչին աշկէլնը գընէնէ, գըբըլիջա դունծ, խնծա՛ր քագիլը։ Գրլընա տոմէն միչը, գուրթու թաքաւիրէն դըգան գիչի գըղ՛ընա, քի բուստանը քագվուձ ի։

Աշկընիրը գուդին, գըխնդուն։

Իրիգոնը գուկու մարը տոմը դանիլը համար, գանսի.— Ո՞ղ չըբաշարի, իշալլա, մանչից, չըմա՞նից, չա՞ շինից։

— Մանչի՛ց, հապու չըմանչի՛ց, սկու իշի։

Գընալը գառնի գաստմը գուրթու իգոն։

Միգանուրը ադ գնալը ըրգը քիլօ պօրտ ֆագ-լա գառնի, գըղանա։

Տոմը էր ինղէրդուցը դանսի.— Տո՛ք զէմ պի-ժէննն ալէ մանիցիք, իս գուրթում ծիգ գուպիրիմ դունծ, խնծա՛ր։

Գինա կուլուրվիլուվ-կուլուրվիլուվ գուրթու գը-մընա բուստանը։ Թաքաւիրէն դգան գըգուհվը-դա ձաուէ մը դի՛ն.գը, գըդիանօ աստմ մը մդուվ բուս-տանը, միչին իլաւվ աշկէլն մը բըլըշիցուվ դունծ, խնծա՛ր քագիլը։

Թաքաւիրէն դգան գըդիանօ, քի շի՛ղ ազվի՛ր աշկէլն մէ, համան գըքարվա լէրվան, գըպըռնի զէ, գանսի.— Իս գքի հավնիցօ, տօն գառնի՞ս գէս։

Աշկէլնը գանսի.— Գառնի՛մ։

Ցադ վախըտը դգան գըլըլօ դունծ, խնծա՛ր աստմը, գըհուրգի գէ։

Իրգոնը ադ գնալը գուրթու տոմը պիրիլա, գըհարցընի.— Ո՞ղ չըբաշարի, իշալլա, մանչից, չըմանչի՞ց, չա՞ շինից։

— Մանի՛ց, հապու չըմանչից, սկու իշի։

Գընալը գըշալգի գաստմը, գարթու իգոն։

Միգանուրը գընալը ըրգը քիլօ ֆագլա պօրտ գառնի, գըշալգի գտաօնն ալէ գաւրթու։

Աշկէլնը գէնէ գուրթու դունծ, խնծա՛ր պիրիլը։

Թաքաւիրէն դգան, քի գուհիլէր էյր գըպռնի գէ, գանսի.— Ո՞ր ըղր առնիս գէս, մադնէս տնէմ մուդիտ։

— Գառնի՛մ,— գանսի աշկէլնը։

Թաքաւիրէն դգան գէր մադնէն գըտանա աշ-կընէն մուդը։

Իրգոնը մարը գուրթու տոմը պիրիլը, գանսի.— Մանչից, չըմանչից, չա՞ շինից։

— Մանչից, հապու չըմանչից, սկու իշի։

Դումն աշխատել կսովորի՞։ Այդ դդումը աղ-ջիկներին ասում է.— Շատ եմ խնդրում իմ բաժի-նըն էլ մանեք, ես կդնամ ձեզ տանձ ու խնձոր կբերեմ։

Աղջիկները նրա բաժինն էլ են մանում։

Դդումը գլորվելով-գլորվելով դնում մտնում է թագավորի այդին։ Դդմի միջի աղջիկը դուրս է գա-լիս, սկսում է տանձ ու խնձոր հավաքել։ Լցնում է դդմի մեջ ու գնում։ Թագավորի աղան տեսնում է, որ այդին քաղված է։

Աղջիկներն ուռում են, ուրախանում։

Իրիկունը մայրը դուլիս է դդումը տուն տանե-լու, ասում.— Աստված շնորհքը կտրի, մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Կինը առնում է դդումը, դնում տուն։

Մյուս օրը այդ կինը երկու կիլո բուրդ ավելի է վերցնում, տանում։

Դդումն իր ընկերուհիներին ասում է.— Դուք իմ բաժինն էլ մանեք, ես դնամ ձեզ տանձ ու խնձոր բերեմ։

Նորից գլորվելով-գլորվելով դնում մանում է թագավորի այդին։ Թագավորի աղան թաքնվում է մի ծառի տակ, տեսնում է մի դդում մտավ այ-գին, միջից մի աղջիկ դուրս եկավ և սկսեց տանձ ու խնձոր հավաքել։

Թագավորի տղան տեսնում է, որ աղջիկը դե-ղեցիկ է, անմիջապես դուրս է թռչում բռնում նրան, ասում.— Ես քեզ հավանեցի, դու ինձ կառնե՞ս։

Աղջիկն ասում է.— Կառնե՛մ։

Այդ ժամանակ տղան տանձ ու խնձոր է լըց-նում դդմի մեջ, ուղարկում։

Իրիկունը այդ կինը նորից է դնում դդումը բե-րելու, հարցնում է.— Աստված դրա շնորհքը կտրի, մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Կինը շալակում է դդումը, դնում տուն։

Մյուս օրը դարձյալ երկու կիլո բուրդ ավելի է վերցնում, շալակում է դդումն ու գնում։

Աղջիկը նորից գնում է տանձ ու խնձոր բե-րելու։

Թագավորի տղան, որ նրան էր սպասում, րոնում է ու ասում.— Եթե ինձ պիաի առնես, մատանին գնեմ մատիդ։

— Կառնե՛մ,— ասում է աղջիկը։

Թագավորի տղան իր մատանին դնում է աղ-ջկա մատը։

Երեկոյան մայրը դնում է դդումը բերելու, ասում է.—Մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Մարը գըշալղի տաւսմը, յալա րախալըմ, գուրթու իդօն։

Իլվուձ ուրը թաքավիրէն մարթակը գուկոն ղաշկէյնը ուզիլը։

Գընալը գաւսի.— Մինք աշկէյն չունէնք, մինք տաւսմ մը կանէնք, ուրիշ մուրթ չունէնք։

— Զարուր չունա, տաւսմ թըղըննօ,— գուտուին։

Մարը գուդօ ղուտաւսմը, թաքավիրէն մարթակը գըծափկին, ղըխաղուն, գըխնդուն, ղաւնին ղուտաւսմը ծիօն յէրվան գըսնին, յալլա րախալըմ, գուրթուն թաքավիրէն ուրալը։ Ինքիս. հարսնիկ կինին։ Ուվ ըր գըդիսնօ, գուտուի. —Վա՜խ, խէղճ ղաղան, տաւսմ պիրուձ ին։

Թաքավիրէն ղաղան գուտուի.— Զարուր չունա,— գուհիյա։ Ղաղան էսօր գուհիյա, վաղը գուհիյա, ամա աշկէյնը տաւմէն միչին չըննիր։

Ինաղքին միչը ղաղվաա մը գըգինու, թաքավիրէն ղաղան գըհիղնա ղծէնը, գուրթու։ Աշկէյնը գըննէ տաւմէն միչին, գըհաքնա ղաղվիր ըուախնէն, գըհիղնա ծէնը, գուրթու յադ ղաղվաաը։ Ղըղաղան աշկէյնը գըննին գըխաղուն, քէֆ ղինին, գըխնդուն։

Աշկէյնը քան ղղաղան յառանճ գուուրթօ իդօն, գըմըննա տաւմէն միչը։

Նափուխ մը սօնրա գինա ղաղվաու գըննօ։ Ղաղան գինա գուուրթու։

Աշկէյնը գըննէ տաւմէն միչին, գուհաքվա, գուսագվա, ըրգը աղվըրնա գըանա ձուցը, գուհիղնա գգարմէր ծէնը, գուրթու։ Գինա ղղաղան աշկէյնը գըննին գըխաղուն. քէֆ գըննին, գըխնդուն։

Ուղխա ուդիլիքան աշկէյնը կլուր մը կուդէ, կլուր մանէ ղուքարի ձուցը։ Աղվըրնաքը քարուց կլուրը գուդին։

Ցանաին գընալ մը գըդիսնօ ղաշկէյնը կլուր գուքարի ձուցը, էնք ալէ գուքարի յէր ձուցը։ Աշկընէնէն ձուցէն կլուրնէն աղվըրնաքը գուդին, ամմա ան գինգունը ձուցէն կլուրնէն ուդուղ չիկօ։

Ղաղան քան գաշկէյնը վարբիդ գըդաշկինմիշ ըննօ, մահանօ ճօր ֆիսիլը. գըննէ աուրիցէ գաշկընէն ծէնը գըբիհա, գըհիղնա յէր ծիանը, գուրթու իդօն, գուհիյա աշկընէն։

Աշկէյնը գըննի, գիշի էր ծէնը չիկօ, քիլիլամ գուրթու ի դօն. գըտանի ղուախը, րըր մըննա արաամէն միչը, գիշի, գըդիսնօ, քի ուտօմը չիկօ։ Ցադ վախըսը ղաղան համան գըկրգի ղէ, աուօին ալէ գըքարի գրծգը։ Ադ վախսը գաունին մէգ ղմիդալ, գըխնդուն։

Իրինք հասուն իրինց մուրաղէն, տծք ալէ հասիք ծիր մուրագէն։

Մայրը շալակում է ղղումը և դնում աուն։

Հաջորդ օրը թադավորի մարդիկ դնում են աղչկան ուղելու։

Կինն ասում է.— Մենք աղջիկ չունենք, մենք միայն դղում ունենք, ուրիշ մարդ չունենք։

— Վնաս չունի, թող դղում լինի,— ասում են։

Մայրը տալիս է ղղումը, թադավորի մարդիկ ծափ են տալիս, ուրախանում, վերցնում են դղումը, դնում ձիու վրա, հայդե՜, գնում թադավորի պալատը։ Քեֆ, հարսանիք են անում։ Ով որ տեսնում է, ասում է.— Ափսո՜ս, խեղճ տղան, դղում են րերել։

Թադավորի աղան ասում է.— Վնաս չունի,— սպասում է։ Տղան այսօր է սպասում, վաղն է սպասում, բայց աղջիկը դղմի միջից դուրս չի գալիս։

Քաղաքում հրավերք է լինում, թադավորի տղան հեծնում է ձին, դնում։ Աղջիկը դղմի միջից դուրս է գալիս, հադնում իր գեղեցիկ շորերը, հեծնում է ձին, դնում այդ հրավերքին։ Տղան ու աղջիկը ելնում, պարում են, քեֆ անում, ուրախանում։

Աղջիկը տղայից առաջ է տուն գնում, մտնում դղմի մեջ։

Մի շարաթ հետո նորից հրավերք է լինում։ Տղան նորից է գնում։

Աղջիկը դուրս է գալիս դղմի միջից, հադնվում, զուգվում, գարդարվում է, երկու աղավնի գնում ծոցը, հեծնում է կարմիր ձին ու գնում։ Նորից աղան ու աղջիկը ելնում պարում են, քեֆ անում, ուրախանում։

Ճաշի ժամանակ աղջիկը մի քուֆտա ինքն է ուտում, մեկն էլ ծոցն է դցում։ Աղավնիներն ուտում են քուֆտան։

Այն կողմից մի կին տեսնում է, որ աղջիկը քուֆտա է գցում ծոցը, ինքն էլ է դցում իր ծոցը։ Աղջկա ծոցի քուֆտաներն աղավնիներն են ուտում, իսկ կնոջ ծոցի քուֆտաներն ուտող չկա։

Տղան աղջկանից ավելի ճարպիկ է լինում, ջուր թափելու պատրվակով դուրս է գալիս, աղջկա ձին պահում, նստում է իր ձին, գնում տուն, սպասում աղջկան։

Աղջիկը դուրս է գալիս, տեսնում իր ձին չկա, քայլելով գնում է աուն, հանում շորերը, որ մտնի դղմի մեջ, տեսնում է, դղումը չկա։ Այդ ժամանակ տղան իսկույն դրկում է նրան, դղումն էլ դցում կրակը։ Այդ ժամանակ առնում են իրար, ուրախանում։

Իրենք հասնում են իրենց մուրաղին, դուք էլ հասնեք ձեր մուրագին։

10 (10). ՈՒՅԷՆ ԱՂՎԸՐԹԷՆ

Վախըտըմ ավչէն մէյը ցանուձիր ցիրինն։ Ուր մը իլուվ կնաց թալլան՝ ցիրինը իշիլա։ Ծիրինչէն միչը տխուվ ըրդը ուց՝ սիվ իլան իսբիդինդ։ Սիվ ուցը զիսբիդինդ ուցը բըղլից։ Ավչէն դանէլում զադ քիշից գթվունդը, նիդից սիվ ուցը, իսբիդինդ ուցը իլուվ անիր պիրինին, ասուց տալ մուրթը.— Արի, ինսան օղլու, փչիմ պիրունիտ։

Ուցը փչից ավչէն պիրունը, ավչէն սուրվիցուվ զալաք հալվանչէն լիզնն։

Ուցը ասուց մարթօն.— Հիչ միգէ մը չիսիս զաս։

Ավչէն լիփը իդօն գուկիր չամպուքը մաչչէն միչը դիսուվ, գեր էխպապ հուվէվը։ Հուվէվը շուդ խնդուց, լիփը զինգիրը դիսուվ, խնդութունը իլուվ մանկէ մը գնից։

Ալդ վախտը թիրիկնէն ավիլը բաշլիցէն.— Ա՜խ, մթնիր, իշնէրինք զադ մանկակը բադրոնչէն իլնինք։

Հուվըվէն շօնը, լիփըր լսից թիրիքընէն ավիլը, ասուց.— Ա՜խ, էմ դիրը թը գիշդացնի զէս մսին, զադ թիրիքընէն բուդուս-բուդուս գունիմ։

Ավչէն լսից զադ խուսփիրը, լիփը հուվէվը իպիր ուդիլան, խմիլան, ասուց տալ հուվէվը.— Շօնը յառանչ գիշդացօր։

— Տօն միսաֆիրը իս,— ասուց հուվէվը.— յառանչ գբէ բըը գիշդացնիմ։

Ավչէն ասուց.— Շօնը յուռանչ գօր, թըդ ուդէ, թը չէ՝ իս ալէ չըմուդէ։

Հուվէվը մաժրուր իգուվ ավչէն խաթրը չըգըդրիլում, իդօր մէս շօնը, գիշդացօց զէ։ Իրինք բըլիչիցուն ուդիլ-խմիլը։

Հուվէվըն իլան ավչէն ըրավանիլում շօնը, հանկէսդ սրդում բառգիցուն։

Շօնը գիշդանիլում ղուվաթլիցուվ, ուռունց դըրուչը մանկակը էնք րիհից, չէ թօգ թիրիկնէն մուդկրնուն։

Աւրախդան, լիփըր իմցուն, դիսուն մանկակը րըթըն գուն, թիրիկնէն ալէ բադուս-բադուս իգուծ ին։ Հուվէվը շուդ խնդուց անիր համուր, քէ զավչէն խուսքը լսից, ասուց.— Արի, խաթըրըտ իշիմ,— ասուց հուվէվը,— ուդօմ քէ դամըզլըդ մանկա մը։

Ավչէն իչուվ սուրէն միչը, լադ դալիղան մանկա մը պառչից։ Ավչէն կիդանիլում զլիգօն, ալայը սուրէն միչը զադ պիրուդ մակէն, քի գուպուռչիր։ Առուվ կնաց զէ, կիդանիլում քի ադ մանկէն գուշադնու։

Ավչէն մանկէն իդուր ի դօն, մանկէն ձնից շուդ շադցուվ, իղուվ սուրէ մը։

10(10). ՕՁԻ ԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանտկին մի որսորդ ցորեն էր ցանել։ Մի օր ելավ դնաց աբտ՝ ցորենը տեսնելու։ Տեսավ ցորենի մեջ երկու օձ՝ սև ու սպիտակ։ Սև օձը սպիտակ օձին կուլ տվեց։ Որսորդը այդ որ տեսավ, քաշեց հրացանը, կրակեց սև օձի վրա սպիտակ օձը դուրս եկավ նրա բերանից, ասաց մարդուն.— Ադամո՛րդի, արի, փչեմ բերանդ։

Օձը փչեց որսորդի բերանը, որսորդը բոլոր կենդանիների լեզուն սովորեց։

Օձն ասաց մարդուն.— Ոչ մեկին այս բանը չասես։

Երբ որսորդը տուն էր դալիս, ճանապարհին անասուի մեջ, տեսավ իր ընկեր հովվին։ Հովիվը, երբ ընկերոջը տեսավ, շատ ուրախացավ, ուրախությունից վեր կացավ մի մաքի մորթեց։

Այդ միջոցին շնադայլերն սկսեցին ոռնալ.— Ա՜խ, մթներ, իջևինք այդ ոչխարների պատառները քամուն տտյինր։

Հովվի շունը, երբ լսից շնադայլերի ոռնոցը, ասաց.— Ա՜խ, եթե տերս ինձ կշտացնի այս մսով, այդ շնադայլերին պատառ-պատառ կանեմ։

Որսորդը լսեց այդ խոսքերը, երբ հովիվը բերեց ուտելիքն ու խմելիքը, ասաց հովվին.— Շանն առաջ կշտացրու։

— Դու հյուր ես,— ասաց հովիվը,— առաջ քեզ պետք է կերտկրեմ։

Որսորդն ասաց. —Շանն առաջ տուր, թող ուտի, թե չէ՝ ես էլ չեմ ուտի։

Հովիվն ստիպված, որպեսզի որսորդի սիրտը չկոտրի, միս տվեց շանր, կշաացրեց նրան։ Իրենք սկսեցին ուտել-խմել։

Հովիվն ու որսորդը շանն ազավինելով, հանդիսա սրտով քնեցին։

Շունը կշաանալով ուժ առավ, առանց տիբոջ ոչխարներին պահեց, չթողեց շնադայլերը մոտենան։

Առավոտյան, երբ զարթնեցին, տեսան, որ բոլոր ոչխարները կան, շնադայլերն էլ պատառ-պատառ են արվոծ։ Հովիվը շատ ուրախացավ, որ որսորդի խոսքը լսեց, ասաց.— Արի՛, քեզ լավություն անեմ,— ասաց հովիվը,— մի բերքատու մաքի տամ։

Որսորդն իջավ հոտի մեջ, այդ պահին մի մաքի բառաչեց։ Որսորդը հասկանալով լեզուն, ամրոզջ հոտի միջից այդ բորոտ մաքին ընտրեց, որ բառաչում էր։ Վերցրեց դնաց, իմանալով որ այդ մաքին կրազմանա։

Որսորդը մաքին տարավ տուն, մաքին ծնեց, շատ բազմացավ, դարձավ մի հոտ։

Ամբն իրիկուն սուրէն գուակո իդոն։ Ուր մը մթնուլը մակնացը սուրէն իգիք իդօն, ավջէն խընդուց։ Դնալը ասաց.— Ջվա՞ գուձիաղդէս, ասու դէ ընծէ, թը չինը գըմ՛արգիմ դքէ։

Ավջէն չասաց։

Ցաղ վախըտը հավիրը գաքըրքըրէրին ասանը յասչիվը գիցած դնխպը։ Հանվիրէն միչը խոլօղ մը գար, խոլօղը թափթըփիլ թիվիրքը, ասաց.— Գառաօն գնաց թարրիա դանիմ, տծն դնա՞ մը չուգարի՞ս թարրիա ինիս։

Ավջէն հասդըցավ խոլօղէն ասածը, առավ վարիացը, ձիձից դգնալը, դնալը ինթօղ վախտվ։

Մուրթը էր սիրդը գիցածը չասաց գինգտնը, քանի վար ացը ասած իր. «Ինչ միդէ մը չըրըր ասիս զէ»։

Ամէն իրիկուն հոտր տուն էր գալիս։ Մի օր էլ մթանը ոչխարի հոտր տուն եկավ, որսորդը ծիծաղեց, կինն ասաց.— Ինչո՞ւ ես ծիծաղում, ասա, թե չէ կթողնեմ քեզ։

Որսորդր չասաց։

Այդ ժամանակ գոան առաջի ադբի մեջ հավիրը քուջուջ էին անում։ Հավերի մեջ մի աքլոր կար, թեերը թափահարեց, ասաց.— Քառասուն կնիկ եմ դաստիարակում, դու մի կնիկ էլ չե՞ս կարողանում դաստիարակել։

Որսորդը հասկացավ աքլորի ասածր, վերցրեց դավազանր, ծեծեց կնկան, կինը թողեց փախավ։

Մուրդն իր սրտում եղածր չասաց կնոջը, քանի որ օձն ասել էր. «Ոչ մեկին չպիտի ասես»։

11 (11). ՄԻՆՉ ԶԸԳԻՑՈՒՉ ԴԻԷՂ՝ ՄԻՆՉ ՓԷՕՈՒՐ ՄԸ ՏԷՅՐ

Գըգինօ, չըգինուր, դանչ թաքավէչը մը գըգինօ։ Հանվիվիրնէչն չուչ չըր սիրիր։ Ուր մանէ զաւլաք հանըվըրնէչն գվլուսկ գրուրիւա ամբը գադը։

Գըրըվուչէչն գհանվիվիրնէչն կլուսկը գդրէլլ։ Հանվիվիր մա գաղչը ղդղան, գասը.— Աման դդաս, բիհի դէլս, գըրիդանում դահա քէ։

Դղան գասէ.— Զա՞ շինիմ, յադա, չուց րիհիմ դքէ, թը գուկան գնօն գքէ, զալաիս անէ գըգընինի։

— Մը՛ վախնուր,— գասը հանվիվէլրը,— բադէչն մէլչ ընծը դիէղ մը շինէ, բադիհնէչմ թօող, յաներ ընծը ադիւա գուդուս, գապո՞ մա գրտնէչս բադիհնէչն, բալան չինիր, ամա չայրըր գասնա, գըտաոնօ ցիրիկում, իրգաանը գուկուս, ընծէ գասիս։

Դղան գանհանաթ գուրը։ Բադէչն մէլչ դիէղ մը գըչինէ, դղծուդը գըտնա մէլչ. բադիհնէչմ գըթուղա, յաներ ա ադիւա գուդը դադէչն։

Գասնա ադէչն մը, թանքավէչը ամբը գինը տրթիլ ֆլուն թաուլը ֆըրթանը ընծէլլը։ Միգաննօուր ալուա գուրթուն ֆըրթանը ընծէլլ։

Դղան իրգաուն գուքը, գըպանը գրանգիհնիէ, դադէչն գասը.— Իսուլ կացուք ֆըրթանը ընծէլլ։

Դօուդ գասը— Վծուդ գուրթուս ընծէլլ։ Սաաթ մը սունդա գըտատրինուս, մանկծուդ գըտնէչս ուլուգ թիվէլու, մըգ քան հծուսգ մը գըգդրէս, ըրդը ծիուս գըփշուիս, գըփըչըդիս, գըքաիրիս պիրծնիու։ Թանքավիրէչն մարթուաք թը գըհարցնին քիդ չագու շինիս, ասը՝ ֆրթանը գծդիմ։

Միգաննօուրը ալուա գուրթուն ֆըրթանը ընծէլլ։ Ադ դղան սաաթ մը սունդա գըտատրինը։

11(11). ՄԵՆ ԶԱՂԱՏ ՏԵՂՈՒՄ՝ ՄԻ ՄԱՆ ՔԱՐ ԴԻՐ

Լինում է, չի լինում, մի երիտասարգ թուգավոր է լինում։ (Նա) ծերերին րնավ չէր սիրում։ Մի օր էլ բոլոր ծերերի գլուխները կտրելու հրաման է տալիս։

Սկսում են ծերերի գլուխները կտրել։ Մի ծեր ալեոր խնդրում է իր տղային, ասում.— Ամա՞ն տղաս, ինձ պահիր, պետք կգամ քեզ։

Տղան ասում է.— Ի՞նչ անեմ, հա՛յր, ինչպե՞ս պահեմ քեզ, թե գան դտնեն քեզ, բոլորիս էլ կմորթեն։

— Մի՛ վախեցիր,— ասում է ալեորր,— պատի մեջ ինձ համար մի տեղ շինիր. մի պատրհան թող, այնտեղից ինձ ուտելիք կտաս, պատրհանին էլ դռնակ կդնես, չի երևա, բայց ցերեկը ինչ որ անցնի-դառնա, երեկոյան կտաս, ինձ կասես։

Տղան համաձայնվում է։ Պատի մեջ մի տեղ է շինում, հորր դնում մեջր. պատրհան է թողնում, այնտեղից ուտելիք տալիս հորը։

Անցնում է մի ժամանակ, թագավորը հրամայում է՝ գնալ այսինչ գաշտը քամի հնձելու։ Հաջորգ օրր բոլորը դնում են քամի հնձելու։

Տղան երևկոյան գալիս է, պատրհանը բացում, հորն ասում.— Այսօր դնացինք քամի հընձելու։

Հայրն ասում է.— Վաղը կգնաս հնձելու։ Մի ժամ անց. կհոգնես, մանգաղը կդցես ձախ թեիդ (իբրև թե) մի քանի հասկ կկտրես, երկու ձեռքով կտրորես, կփչես բերանդ կգցես։ Եթե թագավորի մարդիկ քեզ հարցնեն, թե ի՞նչ ես անում, կասես՝ քամի եմ ուտում։

Հաջորգ օրր բոլորը դնում են քամի հնձելու։ Այգ տղան մի ժամ անց. հոգնում է, մանգաղը

մանկԸուղ դըտնա թիվէյն, գըգդրը մըգ քանը հԸուսգ մը, գըփշրը լափէյն մէյէ, գըփըէըդը, գըքաըը ի պիրԸն։ Թաքավիրէյն չաուշնալն ղըղըսնօն, գըհարցընին.— Ձա՞ գէօշինիս, չա՞ գՕդիս։

— Ֆըթանը գԸդիմ,— գուաըը դղան։

Իրդաուն գուրթուն թաքավիրէյն խաթուր գուդուն, գաըին.— Դդա մը գը, ֆըրթանը գուընծը, ֆըրթանը գՕդի։

Թաքավէյր գաըը.— Դինչիցըք զադ գդան լաստիէղ, իշիմ։

Գրգինչին ղղան, Թաքավէյր գըհարցընը.— ՏԸն իսուր չա՞ գուքարալր ի պիրԸնիս։

— Ֆըրթանը գուքարայրիմ ի պիրն նիս, քաղցԸձալմիր։

-- Ֆըրթանան դուղվա՞, փիր դըդիշդացնիչ։

— Հաբր ֆըրթանան գընծըվուա՞։

Ցանդիր իրվան ալ ֆըրթանը ընծէլլ չըր ուրթուն։

Ուր մալը թաքավէյր դալլուլ գըգինչըցընը գալուա մարթուակ սարալալն լաուչալվ գըպիրըցընը, գաըը.— Ծիզ ըրք ուր մուհլաթ, ըրք ուր սունգա րըր ասաք ծիր քանղալուա մինձ պարիդԸմ։

Դդան գուրթը դանդէլն գաըը.— Թաքավէյր գէլմ մինձ պարիդԸմ գՕգը։

Դօգ գաըը.— Զշաունիա դուլ, Թաքավէյր գըհարցնը՝ չո՞ց րըր կիդանուք. լան վաղըտը դաղիմուամ գըղարգիս շօուն, շաուն չըղգալուվ գըփախտա։ Ավըլ-մավը սունղա գըգինչէլա գը, շաուն գուկը։

Դղան տրգադ ալը գինը, Թաքավէյր գըշաշմըշգընընը դգալն խիլըքութԸն իրվան։

Ղայր ուր մալը թաքավէյր գինա դալլուլ գըգինչըցընը, կալուա մարթուակ գըղուղվը սարալալն լաուչալվ, գաըը.— Ըրք ուր ծիզ մուհլաթ, րըր ասաք ծիր քանղալուա մինձ դուշմօն։

Հալիվէյր դղալն գաըը,— Զգընաըա դուր։

Ըրք ուր սունղու ալուա գըղուղվէյն։ Թաքավէյր գըշաշմըշգընընը, քի ադ դղան գդընա դարօուձը դուշմուն դէյը։ Գրհարցնը.— Ձա՞ դէյը գդընաըտ պիրԸձիս։

— Ֆանգալուա մինձ դուշմօնիս դընաանը,— գաըը դգան։

— Զու՞ց դրհաագընուք,—գըհարցընը Թաքավէյր։

— Համը իս գըցըցընիմ քիղ,— գաըը դգան։

Ավլլուամ գիխԸձ քիմը գինգԸն, գընա գըթափըլվա կիդալն։ Գրնը գամանց-գամանց գուղըրթաւ, գըգաննա, գաըը.— Թաքավէր, շիդ թըղ արրէյս, էյմ մօուրթ շիդ չաղվէյրիլը. քը գամըրը բիլա չուպոնը, զէյր դԸդ բադէլն մէյէ բիհԸձը։

— Դիսուր Թաքավէյրիս,— գաըը դգան,— դցում է թևին, կտրում մի քանի հատ, տրորում ափի մեջ, փչում, գցում բերանը։ Թագավորի հսկիչները տեսնում են, հարցնում.— Ի՞նչ ես անում, ի՞ն ես ուտում։

— Քամի եմ ուտում,— ասում է տղան։

Երեկոյան գնում են թագավորին հայտնում, ասում.—Մի տղա կա, քամի է հնձում, քամի է ուտում։

Թագավորն ասում է.— Կանչեք այդ տղային այստեղ, տեսնեմ։

Կանչում են տղային, գալիս է։ Թագավորը հարցնում է.— Դու այսօր ի՞նչ էիր գցում բերանդ։

— Քամի էի գցում բերանս, սոված էի։

— Քամին կուավի՞, փոր կկշտացնի՞։

— Հետպա քամին կհնձվի՞։

Դրանից հետո այլևս քամի հնձելու չեն գնում։

Մի օր էլ Թագավորը մունետիկի միջոցով կանչել է աալիս բոլոր տղամարդկանց իր պալատի առաջ, ասում է.—Ձեզ երեք օր ժամանակ, երեք օր անց ինձ պետք է ասեք, ո՞վ է ձեր ամենամեծ բարեկամը։

Տղան գնում է հորն ասում.— Թագավորն ուղում է (իմանալ) իմ ամենամեծ բարեկամին։

Հայրն ասում է. —Շունդ տար, թագավորը կհարցնի՝ թե ինչպե՞ս իմանանք. այն ժամանակ շանդ քացով կխփես, շունդ վնգստալով կփախչի։ Մի ըոպե անց, շանդ կկանչես, շունը նորից կգա։

Տղան այդպես էլ սռում է։ Թագավորը ղարմանում է տղայի խելքի վրա։

Մի ուրիշ օր էլ թագավորը նորից մունետիկի միջոցով բոլոր աղամարգկանց հավաքում է իր պալատի առաջ, ասում.— Երեք օր ձեզ ժամանակ, պիտի հայտնեք ձեր ամենամեծ թշնամուն։

Ալևորը աղային ասում է.—Կնոջդ ասր։

Երեք օր անց, նորից բոլորը հավաքվում են։ Թագավորը ղարմանում է, որ այդ տղան կնոջը տարել է որպես թշնամի։ Հարցնում է.— Ինչու՞ համար ես կնոջդ բերել։

— Ամենամեծ թշնամիս կինս է,— ասում է աղան։

— Ինչպե՞ս հասկանանք,— հարցնում է թագավորը։

— Հիմա ես քեղ ցույց կաամ,— տսում է աղան։

Մի ապաակ կնոջը աալուն պես, կինը գլորվում է գետին։ Կամաց-կամաց ուղղվում է, վեր կենում, ասում.— Թագավո՛ր, երկար ապրես, իմ մարդը շաա վատն է. քո հրամանն անգամ չի կաասրում, հորը պատի մեջ է թաքցրել։

— Տեսնո՞ւմ ես, իմ թագավոր,— ասում է

գընաս քոնըզ շատնիս րիւա չիգըկ, ամըլ-մամըլ խամապից զէյս։ Ղարահաթլուալիմ, գջազաս դէյր, չծցըր կիդիս։

Ցան վաղըտը թաքաւէյրը ամըր գինը գհաւիվէյր քօտ պիրըցընի, վազէյր գըտարծընը զուդ հալիվէյր լէյր քօտ։ Ամըր գինը.— Ովըր մինձ չունաս, մինձ քէօտր մը թող տնա ի քուշան։

12 (12). ԴԱԲԱԽ ՉԱՆՎԷՑՐ

Վախտիլէ թաքաւիրնէյն իրինց վէգիրնէյն հիէա թագդիլը ղլաճաթտս, կիշերու-ցիրեկու գատրթալն դիլվուլն, հաագընիլա համտր, իրինց լհալին չուց գտարրտ։

Թաքաւիրէյն միէ դարվիշը ղլաճաթտվ վագիրէյն հիդ կիւէյր մը, ծմըռվօնը գէյս, դարախխանալն առ գատրթը։ Մըզ դարախխանալն տոծն յարահն լալս գտիրվընիր։ Գըմտգընտն, գըդըսնօն, քի հալիվէյր մը միրգըցուց, մտրտքը ղըքըր րայրդ, ժըղծը հէյր, գիշա գտրթտմարը։ Գըշաշմըշընտն, յադ ցրդալն ադ հալիվէյր չուց գտտիմանը։ Գըղարգին դտատտ հալիվէյր դալտտախ գըշադվը գաատտ պանիլտ։ Թարվալշ պիրիվ գուդը։

— Ասըծնը պալէյն, թաքաւիր.— գնսը հալիվէյր։

Թաքաւէյր ամլը-մամլը դըհանգընը հալիվիրէյն չա ընննէյը, դըհարցնը էյր.— Հիոըվայն հէյդ չծ՞ցիս։

— Ցադ չիհահին չո՞ւ դուշըմըշգընտմ։

— Ցարսօն ըրգտքէյն հէյդ չծ՞ցիս։

— Հի՞չ ագվիր չիմ։

— Ըրգտքէյն հէյդ չծ՞ցիս։

— Ըրգաք դըհը ըրք չիգծնը։

— Ձա՞ հլինիցիր գվէյցը։

— Վէյց դըսվըրգաք ատրծըցա, յարսօն ըրգտքէյն ֆայդա չիրէյց։

— Էօլա լատ իկկալմ թըղ ցանալր։

— Ցանիցա, րծղ գտրգալցգը։

— Միմտ թըղ ցանալր։

— Ցանիցա, գտբթինիցուալնգը։

— Միմտլը թըղ ցանալր։

— Դըքըր ցանիմ, ծր իրգծն իղտ։

— Ձտաղ մը թը գըղտրգիմ քիգ, գտոնո՞ւս փիրջալրղէ։

— Ադիր վարրիդն իմ։

— Դտրվիշնէյն գտրթտն ի ծն, թաքաւէյըը գնսը տտլ վագալր.— Ադ հալիվէրէյն ջտգտրնէյն թարջտմծն գտգիմ։ Շիդ խիլըք գտիրվընը։

Թաքաւէյր բատգսծ քիմը, վագալր գըլլննա քատտամ իսկա, գտրթը հալիվիրէյն քծտ, գնսը.— տղան,— կինս շանս չափ անգամ չեղավ, անմիջապես ինձ մատնեց։ Մեղավոր եմ, պատժիր ինձ, ինչպես գիտես։

Այն ժամանակ թագավորը հրամայում է ծեռունուն ըերել, նրան գարձնում է իր վեզիրը։ Հրամայում.— Ով որ մեծ չունի, թող անկյունում մի մեծ քար դնի։

12 (12) ԿԱՇԵԳՈՐԾ ԱԼԵՎՈՐԸ

Ժամանակին թագավորներն իրենց վեզիրների հետ ծպտված գիշեր ու ցերեկ, գնում մանէին գալիս, իմանալու, թե իրենց ժողովուրդն ինչպես է ապրում։

Թագավորի մեկը, ծպտված, վեզիրի հետ մի գիշեր, ձմեռվա կեսին, գնում է դեպի կաշեգործատները։ Մի կաշեգործատան դռան արանքից լույս է երեում։ Մոտենում են, տեսնում, որ մի մերկացած ալեւոր, մսրուքը մինչև պորտը, մաել է հորը, կաշի է մշակում։ Զարմանում են, այդ ցըրտին այդ ալեւորն ինչպես է դիմանում։ Դուռը խփում են։ Մեր կաշեգործը վաղում, գուռը րաց է անում։ Դերվիշը բարև է տալիս։

— Ասածո՛ բարին, թագավո՛ր,— ասում է ալեւորը։

Կինր պատասխանում է.— Տեսա՞ր, մա՛րդ, աստված կնոջ շաոից հեռու պահի, վեր կացար ասացիր, թե կնկա շաոն ի՞նչ պիտի լինի, ինձ էլ ծեծեցիր։ Ամենախելոք կինը ես եմ, տեսա՞ր ինչ խաղեր խաղացի գլխիդ, այսպես է կնկա շաոը։

31 (31). ԸՐՔ ԱՎԷՐ ԽԱՆԸՄԼԸՂԸ

Մօուրթը գնաց բարբչիցայն խանըմըլըղը՝ առչը նէուբ գինգէունը ինգուվ — Մօ՛ւրթ, ղընը, հէուվ մը, իփը, ուդիմ։

Մօուրթ հէուվ մը ղնից, փակլամիշ իրէյց իտօր ղը թանջարան, գրիէգ վառից.— Գնա՛գ, իս կացա, գիւխա-չիւխա՝ տէօն կիդիս։

— Մօւրթ, իս ըրք ավէր խանըմ իմ, իփը, պիր ուդիմ։

Մօուրթ ուրթիլէն վախըտ մը սունդրա մուրագէօն մը իգիք, հուց ուզից։

— Մուրագուն, իս ըրք ավէր խանըմ իմ, հէուց դուլէօբ գը, օո գհէուց, թանջարան հէուվ մը գը, իշը խիշուձ ը, թը՝ չիէ, թը չիէ՝ գրիէգ վառը։

Մուրագէօնը գուիշի՝ հուվը իւիուձ է։ Հէուվը գուառնը, չառաօգ գուտը՝ա մէյչ, գուանը.— Ծանըմ, հէուվ չիւիօձ է. գրիէգ վառիցա, պաղօոչ մը առա, իս գուրթում։

Մուրագէօնը գուրթը մարթօն դուկօն, գուիշը մօուրթ հուն գը, գուավչի.

— Ծանըմը գուլը ղվարդցը,
Իս ալ գուդիմ գհուվը։

Մօուրթը գուկը ի ղօն, գուանսէ.— Գնա՛գ, հէուվ չա՞ իղուվ, իւիօ՞ձ ը, թը՝ չիէ։

— Մօւրթ, քանըը կացօձ իս ճէյդ ա իւմուձ չիմ։ Մօւրթ, ադըգ իգիր, դէյր ճէյր իւրմիմ, պիր ուդինք ուդիլան։

Մօուրթ գուիշը ղանջարան՝ գուիշը հաավէն ղիէպ չառաղ մը գը։

— Գնա՛գ, հավօն ղիէպ չառաղ մը գը, հէուվը չա՞ իղուվ։

— Ջա՞ կիդիմ, մօւրթ, մուրագէօն մը իղըք, իս ացա՝ իշի ղանջարան հէուվ իւիօ՞ձ է, թը՝ չիէ, ացուձ ընծը՝ քէչ ճնացօձ իւիլա, ղայր չա՞ իգուվ, չըմ գիդիր։

— Ա՞սը քը խանըմլըղը, տրղադ չըննուր, սուսինէնց գընընը,— գացը, գառնը վարդցը գըրըլիշա գնալ ձիձէչ։

32 (32). ԳԻՆԳՈՒՆԸ ԻՐՈՒՉ ՊՈՒՆԸ ՉԸՐՎՆՈՒՐ

Դուգինօ, չուգինուր մուրթ մը գուգինօ։ Ադ գուրթը ամըն ուր գուձիձվըդա գինդունը հիդը, տալ գընալը գացէ.— Իս սաբաքդոն գուրթում իրգօնը գուկում, շուդ գուչարչարվիմ, ացն չա՞ գուշինիս ի դօն։

31 (31). ԵՐԵՔ ՕՐՎԱ ԽԱՆՄՈՒԹՅՈՒՆ

Մարդ ու կին որոշեցին խանմութլյուն անել. առաջինը հերթը կնոջն ընկավ.— Մա՛րդ, մի հավ մորթիր, եփիր, ուտեմ։

Մարդը մի հավ մորթեց, փետրահան արեց, դրեց կաթսան, կրակը վառեց.— Կնի՛կ, ես գնացի, կեփվի-չեփվի՝ դու դիտես։

— Մա՛րդ, ես երեք օրվա խանում իմ, եփիր, րեբ ուտեմ։

Մարդու դնալուց մի քիչ անց մի մուրացկան է գալիս, հաց ուզում։

— Մուրացկա՛ն, ես երեք օրվա խանում եմ, հացը պահարանումն է. ա՛ռ հացը, կաթսայում հավ կա, տե՛ս եփել է, թե՝ չէ, թե չի եփել՝ կրակը վառիր։

Մուրացկանը նայում է՝ եփել է։ Հավը վերցնում է, տրեխը դցում մեջը, ասում.— Խանո՛ւմ, հավը չի եփել. կրակը վառեցի, մի բադարջ վերցրեցի, ես գնում եմ։

Մուրացկանը գնում է մարդու խանութը, տեսնում մարդն այնտեղ է, երդում է.

— Խանումը կուտի դավաղանը,
Ես էլ կուտեմ այդ հավը։

Մարդը գալիս է տուն, ասում.— Կնի՛կ, հավն ի՞նչ եղավ, եփե՞լ է, թե՝ չէ։

— Մա՛րդ, ոնց որ դնացել ես, ջուր էլ չեմ խմել։ Մա՛րդ, լավ է եկաը, ջուր տուր խմեմ, ճաշն էլ բեր, ուտենք։

Մարդը նայում է կաթսայի մեջ, տեսնում հավի փոխարեն մի տրեխ կա։

— Կնի՛կ, հավի տեղ մի տրեխ կա, հավն ի՞նչ եղավ։

— Ի՞նչ իմանամ, մա՛րդ, մի մուրացկան եկավ, ես ասացի՝ նայիր տես կաթսայի հավը եփե՞լ է, թե՝ չէ. ասաց՝ քիչ է մնացել եփելու, հնաո ի՞նչ եղավ, չգիտեմ։

— Ա՞յս է քո իանմութլյունը, այդպե՛ս չի լինի, այսպե՛ս կլինի,— ասում է. առնում դավաչանն ու սկսում կնոջը ծեծել։

32 (32). ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉԻ ՆԵՎՈՒՄ

Լինում է, չի լինում, մի մարդ է լինում։ Այդ մարդն ամեն օր ծեծկռտվում է կնոջ հետ, ասում.— Ես առավոտյան դնում եմ, երեկոյան դալիս, շատ եմ չարչարվում, դու ի՞նչ ես անում տանը։

Գրնա՛յը զըսրդիդա պաէ.— Շո՛դ ադվա՛ր, վա՛ղը աօն պրդհնօս ի գոն, իս գալթամ քէ դիդը պանիլ, ըմմը իրդօնը ակամ ի գոն, ալակ պունը դիդը-կիւր իրած ընննա։

Գրնա՛յը գարթամ պանիլ, մարթը զըլրլըշա գոն պունը։ Հալա գոնը չավիլած՝ չաճռիլ գուա՛լ։ Մարթը գնա՛ծ՝ չո՛ հինիմ։ Զուշըխէն պիրնէն պարդը գլորնա, գրդա՛հինմիշ լննօ՝ թըդ ծանը քիշկիլմ մը գլդրէ, նըգըր իմ՛որ չաղիմ։

Ըմմը չո՛դ շահարած ընկլան գոդա՛հինմիշ ընննօ՝ գարտաը միշքիս գարիմ, նրգըր հացը շաղիմ, իդն ա՛լէ գայտէն միչը գրննա, պունիս ա՛հէդ գըսա՛լիսէմ։

Շագիլէն վահար իմ՛որ, գարտար գաճիթէ պաւը, գարտաը գագըդա, ալյանը իրվան գաճիթա, իմ՛որ գահ՛ըրչա, էնդ ըրթըն գաթ՛ըրչա, չո՛ հինէ, գաշընգէ մը գոնի դէ։ Գաէ՝ իշիմ չաճօրու Զա գուդիանօ, չաճռիը միռած է, իմ՛որ չիգաւ, էնք ա՛լէ ըրթըն թ՛ըչըլած է։ Գամիրգընօ յարիվը գալաւոդա, յանդունդ դա՛ձօ մը գակա, ադա՛ր խոշդընէն գուդանա։ Ջավալը մարթը աօը գաղըդրէ, գահիւա նըգըր գընա՛յը ակօ պա՛նիլինա։

Գրնա՛յը գակօ, կաւիչէ աօը նըգըտնդ դդրած է, դըգինչէ մարթօն.— Մա՛րթ, աօը պաց։

— Ջըմ պա՛նօ,— գա՛ոէ մարթը,— գաբահաթ մը իրած իմ։

— Զարար չունա, պուն չիկօ, ա՛ռա իշիմ չա՛ է.

— Գընա՛ղ, չաջօխը խըխդած իմ։

— Զարար չունա, ղերը գանընտնաք,— գա՛սի գընա՛յը։

— Գընա՛ղ, իմ՛որ խարաքած իմ։

— Զա՛րար չանա, ադ ա՛լէ պուն մը չէ։

— Գնա՛ղ, գարտաը գդրած իմ։

— Զարար չունա, ադ հիչ պուն չիդիլ է։

— Գընա՛ղ, պուն մա՛լէ բըր ասիմ, գավա՛խնում

— Աաւ, աառ՛ւ իշիմ՝ չա՛ է։

— Ա՛խ, չո՛ւց ասիմ, գավախնում. գա՛ղօն խաշդընէա գարտած է։

— Մա՛ուրդ, ալալը թը իգավ, ադ մէլը չիդավ։

Կնիկը սրանեղում է, ասում.— Շա՛տ լավ, վտը դու կմնաս տանը, ես կդնամ քո փոխարեն տշխատելու, բայց երեկոյան տուն դամ, բոլոր դռծերը տեղը-տեղին արած լինես։

Կնիկը դնում է աշխատելու, մարդը սկսում է տան դործն անել։ Դեռ տուր չավլած՝ երեխան լաց է լինում։ Մարդն ասում է՝ ի՞նչ անեմ։ Երեխայի բերնին րտրձ է դնում, մտածում՝ թող ձայնը մի քիչ կտրի, մինչև իշոլը շաղեմ։

Ւայդ, քանի որ շատ ճարպիկ էը, մտածում է՝ կարասը մեջքիս կապեմ, մինչև խմորը շտղեմ, կարադն էլ կարասի մեջ կհարվի, դործս շուտ կվերջացնեմ։

Խմորը շաղելու ժամանակ, կարասը պատին է խփվում, կոտրվում, թանը թափվում է վրան։ Խմորը թրջվում է, ինքը լրիվ թրջվում, ի՞նչ անի. մտածմունքի մեջ է ընկնում։ Ասում է՝ երեխային տևսնեմ։ Նայում է, ի՞նչ, տեսնի, երեխան մեռած է, խմորը փչացած, ինքն էլ լրիվ թրջված։ Մերկանում է, պառկում արեի տակ։ Այն կողմից մի կատու է գալիս, դրա ունեցած-չունեցածը տանում։ Տեղ մարդը դուռը փակում է, սպասում, մինչև կնիկը գա աշխատանքից։

Կնիկը դալիս է, տեսնում դուռը նեըսից փակված է, կանչում է մարդուն.— Մա՛րդ, դուռը բաց։

— Ջե՛մ բացի,— ասում է մարդը,— հանցանք եմ կատարել։

— Վնաս չունի, բան չկա, ասա՛, տեսնեմ՝ ի՞նչ է։

— Կնի՛կ, երեխային եմ խեղդել։

— Վնաս չունի, ուրիշը կունենանք,— ասում է կինը։

— Կնի՛կ, խմորը փչացրել եմ։

— Վնաս չունի, էդ էլ մի բան չէ։

— Կնի՛կ, կարասը կոտրել եմ։

— Վնաս չունի, էդ էլ դատարկ բան է։

— Կնի՛կ, մի բան էլ պիտի ասեմ, վախենում եմ։

— Ասա՛, ասա՛, տեսնեմ՝ ի՞նչ է։

— Ա՛խ, ո՞նց ասեմ, վախենում եմ. կատուն ունեցած-չունեցածս տարել է։

— Մա՛րդ, բոլորը թե եղավ, այդ մեկը՝ չեղավ։

ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

1 (33). ԼԻՉՕՆ ՅՈՒՎՂ

Դըգինօ, չըգինաւր, փադ ձախուգ մուրթ մը։ Ադ մուրթը ամըն ուր քաղքին գուրթիս ըրք սըհաթի չամպուքը լիոը, փադ գըգդրիր, գըշալօիր գոնօյը, գըդանիր քաղուք, գըձախիր։ Ամըն ուր տըրկուդ դուաբրիր։ Շուդ անցուվ, քէչ անցուվ, ուր մալէ լիոը ուրչ ալը դիւուվ, շուդ վախցուվ։ Իշից տալ ուրչը, քիւրը ուրչը քիւրլ է, իչվէն ուրչը իչվա է, ըմմը իւսուիլը՝ լինանը խուսիլ է։

— Աս չա՞ պուն է,— ասուց, վախցուվ։

Յառանչ թը կուուրթօ՝ արչէն մինի գուվախնօ, լիդ թը գուուրթօ առունց փադ իդօն գուուրթօ։ Շաշմըշ իդուվ. չա՞ բըր չինէ։

Ուրչը լիդացուվ, քի մուրթը գուվախնու, ասուց.

— Մ՛լ մուրթ, տօն աւի ամըն ուր լասդիգը, իս փադ գըխաղրիմ քէ, գըդանէս, գըձախիս։ Ամըն ուր ղաթ մը գուուրթէր իս, համօ ըրք ղաթ գուուրթուս Փարա գավիլցընիս իշօ մը գառնիս, պունիս աղվէր գընէս։

Տըրկադ ալէ պանիցուվ։ Դարէ մը անցուվ, փադ ձախուգ մարթօն պուէնը շուդ ագվէր իդուվ։ Ուր մալէ դուշընմըշ իդուվ. «Իս աս ուրչէն չո՞ շինիմ, դանէմ իդօն, մըսում ուդիլա գիրցընիմ էր»։

Դինդուէնը ասուց.— Կնօ դուկունին իսկրում մէս օտ, ուդիլա իւիէ, իրգօնը միասֆըր գուունէմ։

Մուրթը կնաց լիոը, սիսուվ ուրչը, ասուց.— Գիլէ, ուրթունք իդօն՝ իս ու ասն։

Ուրչը չուդից, ասուց.— Թը գուուրթունք ի դօն՝ իս ու տօն, դուշմուն գընունք։

Մուրթը ասուց.— Հա՛, չէ՛, բըր ուրթունք։

Իգէն իդօն։

Կիշերը մնթ իր, դիրինք մուրթ չըդիսուվ չամպուքը, հասան իդօն, մուրթը գինչից գինգունը։ Գնալը տօսը իպուց, դիսուվ ուրչը վախցուվ, ասուց.— Աս՞ ի քէ միասֆըրը, նայհլութ թըզ ուկօ քէ ալէ, քէ միասֆըրէն ալէ։

Ուրչը հանգըցուվ։ Անցուն նըքցէ, գիրուն ուդիլա, խալխիցան, ուրչը տարծուվ լիոը։ Միդալ ուրը մուրթը կնաց լիոը փադ պիրիլա։ Ուրչը իլուվ տիմը, ասուց.— Ղ աթ մալէ տօն յաս լիոը փադ գդրիլ չըրուկօ. զաքէ բադուռ-բադուռ գինիմ։

Մուրթը իչից. հիչ փադ թուդուձ չէ, զալայը քարուձ է։ Մուրթը ի դօն կնաձ, հանչիցուվ ամէս

1 (33). ԻՆՁՎԻ ՎԵՐՔԸ

Լինում է, չի լինում, փայտ ծախող մի մարդ է լինում։ Այդ մարդն ամեն օր քաղաքից երեք ժամվա ճանապարհի հեռավորութեամբ սարն էր դնում, փայտ կտրում, շալակում, տանում քաղաք, ծախում։ Ամեն օր այդպես էր ապրում։ Շատ անցավ, քիչ անցավ, մի օր էլ սարում մի արջ տեսավ, շատ վախեցավ։ Նայեց արջին՝ քայլվածքըն արջի էր, աչքը՝ արջի աչք, բայց խոսելը մարդու խոսվածք։

— Սա ի՞նչ բան է,— ասաց, վախեցավ։

Առաջ դնար՝ արջից էր վախենում, ետ դնար՝ առանց փայտի պիտի տուն դնար։ Շվարեց մնաց, ի՞նչ անի։

Արջը հասկացավ, որ մարդը վախենում է, ասաց.— Ա՛յ մարդ, դու ամեն օր այստեղ արի, ես քեզ համար փայտ կպատրաստեմ, կտանես, կծախես։ Ամեն օր մի անդամ էիր գնում, հիմա երեք անդամ կդնաս։ Փող կսվելացնես, էշ կունենաս, գործերդ կլավանան։

Այդպես էլ աշխատեց։ Մի տարի անցավ, փայտ ծախող մարդու գործը շատ լավ գնաց։ Մի օր էլ մտածեց. «Ես այս արջին ի՞նչ անեմ, տունեմ տուն, մսով կերակուր ուտեցնեմ»։

Կնոջն ասաց.— Գնա՛ խանութից ոսկորով միս առ, ճաշ եփիր, այս երեկո հյուր ունեմ։

Մարդը դնաց սար, արջին տեսավ, տասաց.— Արի, միասին դնանք տուն։

Արջը չուղեց, ասաց.— Եթե միասին տուն դնանք, կթշնամանանք։

Մարդն ասաց.— Հա՛, չէ՛, պիտի դնանք։

Եկան տուն։

Գիշերը մութ էր, ճանապարհին նրանց մարդ չտեսավ, հասան տուն, մարդը կնոջը կանչեց։ Կենը դուռը բացեց, արջին տեսավ, վախեցավ, ասաց.— Այս է՞ք հյուրը, անիծվես դու էլ, քո հյուրն էլ։

Արջը հասկացավ։ Ներս մտան, ճաշեցին, վերջացրին, արջը վերադարձավ ասր։ Հաջորդ օրը մարդը դնաց սար, փայտ բերելու։ Արջը նրա գեմն ելավ, ասաց.— Մեկ էլ դու այս սարը փայտ կտրելու չդաս. քեզ պատառ-պատառ կանեմ։

Մարդը տեսավ, բնավ փայտ չի թողել, բոլորը ցրել է։ Մարդն եկավ տուն մի ամիս

մը։ Ամէն մը ոնդրա կինա կնայ լիոը։ Ուրյը գինա տիմը իլուվ, ասուց.— Զոլա՞ իկէր լիոը։

— Զա՞ չինիմ ավարօ իմ։

— Սրանի՛ ղէս,— ասուց արչը, բառգիցուվ կկղէնը։

Մարթը դյուշինմըշ իսուվ. «Թո աբանիմ գէ, փադ դդրիլ լիդ դակամա։ Չիփօրը առուվ ծառը, վերցօց գնեից արչէն, իմոդ չիպօրը փախուվ, ըմը կկոլիր արչը ապդիցուվ։ Ամէն մը օօրա, գինա փադ ձախապը լէր պանաձիին վադ չիգնք. աս ղաթէն լիոանը միպալ չօնդը կնայց, կինա արչը տիմը իլուվ, ասուց.— Ի՞ս չացա՞ք էն, յաս լիոը չըրրը տկաս ջոթ մանէ՝ պըսթանիմ գքէ։ Չիդըրէն ցուվը ճաղցուվ, ամա քէ գինդունը իսաքէն ցուվը չանցուվ։

Մարթը վաձախուծունը լէր դանահուծը փխխից։

Դինգունը էն աղվորը աս է։

2 (31). ԳՈՒՐՅՕՇ ԻԼԱՆ ԿԻՂԱՑԷՆ

Դիցէլր, չըգիցէլր, գուրյօշ մը իլան կիղացալմ գիցէլր։

Ակ գուրյօշ իլան կկղացէն միգ-միգը հիդ շիդ մինձ աուալըդ գոնէրին ա. միդմիդ չուդ լարդըմ գինէրին։

Ուր մը իշանք, ցանիլը վաղլսալ կիղացէն պըմաոնը կրիշարը աունլալ։ Գըգինչը ղգուրյաշը, գանէ.— Իշէ, պարյուշ ախպար, իսար ոձրանխանն մաոցօ կրիշար աունլլն, ասոնց ա. կիլա կրքըր տիրպոսկ չըմ գձրէ ցանէ, կնօ, ընձէ րիշար պիր։

— Իչացիս, կլիէս լիրվան, կիղացը ախպար, ուրխում քիզ րիշար պիրիմ,— ասուց գաբյօշը, կնիցւ

Գուրյօշ կնից իղօն, առա. ղրիշօր, աարծու։ Ցաոնիլը վաղըտը ասրդղ ցիրէչն ընձիլը վաղըտն իր ու խաոլինայն մըզ ղըսրմմը ընձըլուա իր։

Գուրյօշ հոսաս լան վաղըտը լէյիրը մըզ տին կիղացէն ու ղղուաք գաբընձաննիր, հարսնալը ու ձշկընէլր պոնաւ գաջուղվայն, իսօթ գուզաբայն, միգալ աչն ալը ձշակչաք գաբաձ իրցայր գծլ գաղանտյն. մըզ ղըրըցաւ՝ աշխօր գաւքըպըրմիր։

Գուրյօշ ղրիշօր շալգաձ մըղաւ ի խաոլան. ուչէյա-աշէյտ գօրմիր, գրիշուր վաղըտը հասցընընիլա համաւր, չոնքի կիդիր քի կկղացէն քաղցօձիլը։ Աջալա ուրթիլիքան խիդգօն մը լուաշքը մըղաւ

— Հը՛,— ասուց,— չը՞մ ասիր, քի աջալա պօն ընծը չուկօր։ Ցտլրըր աջալա պուն մա գըգինը, գէյա գաջիննա։

հանգստացավ։ Մի ամիս հետո նորից գնաց սար։ Արչը նորից գեմն ելավ, ասաց.— Ինչո՞ւ եկար սար։

— Ի՞նչ անեմ, անգործ եմ։

— Սպանի՛ր ինձ,— ասաց արչը և պառկեց գետնին։

Մարդը մտածեց. «Եթե սպանեմ նրան, նորից կգամ փայտ կտրելուց։ Կացինը ձեռքն առավ, ղարկից արչին, գցեց կացինն ու փախավ. կարծում էր թե արչը սատկեց։ Մի ամիս հետո, փայտ ծախողը նորից իր արհեստից ձեռք չքաշեց. այս անգամ ուրի մյուս կողմը գնաց, նորից արչը գեմն ելավ, ասաց.— Ես քեզ չասա՞ցի, որ մեկ էլ այս սարը չգաս, թե չէ կսպանեմ քեզ։ Կացնի վերքը լավացավ, բայց կնոջդ խոսքի վերքը չանցավ։

Մարդը վախից իր արհեստը փոխեց։

Կնոջ ամենալավն այս է։

2 (34). ԿՐԻԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Լինում է, չի լինում, մի կրիա և մի գյուղացի էլ լինում։

Այդ կրիան ու գյուղացին իրար շատ մեծ բարեկամությամբ են կապված լինում և իրար շատ են օգնում։

Աշնան մի օր, ցանքի ժամանակ, գյուղացին մոռանում է հետը պաշար վերցնել։ Կանչում է կրիային և ասում.— Լսի՛ր, կրիա՛ եղբայր, այս առավոտ ես մոռացա պաշար վերցնել, առանց ուտելու էլ մինչև երեկո չեմ կարող ցանել, գնա՛, ինձ համար պաշար բեր։

— Աչքիս ու գլխիս վրա, գյուղացի եղբայր, գնամ քեզ պաշար բերեմ,— ասում է կրիան, գնում։

Կրիան գնում է աուն, պաշարը վերցնում ու վերադառնում։ Վերուգարձին, արգեն ցորենը հնձելու ժամանակն է լինում և արուերի մի մասն էլ արգեն հնձված էր։

Կրիան հասնում է այն ժամանակ, երբ մի կողմից գյուղացին ու տղաները հունձ են անում, հարսներն ու աղջիկները հնձված ցորենն են հավաքում ու խուրձ կապում, մյուս կողմից էլ իշապանները կապված խուրձը կալ են տեղափոխում. մի խոսքով՝ աշխատանքը եռում է։

Կրիան պաշարը շալակած, մանում է արտ և շապ-շտապ գնում, որ պաշարը ժամանակին հասցնի, քանի որ գիտեր, որ գյուղացին շատ քաղցած է։ Շատախելուց մի խողան է աչքը մտնում։

— Հը՛,— ասում է,— ես չե՞մ ասել, որ շատախելը իմ գործը չէ։ Ուր շատախ մի գործ կա, ինձ է գտնում։

3 (35). ԲԱՌՎՈՒՆ ՕՋԸ ԻԼԱՆ ԻՐԻՑԷՑՆ ՄՈՒՐԱՖԸ

Բառով մը ունցէր է Ծձ մը, գուվանաջաքը ադ Ծձն իղէր իր, ամմա ադ Ծձ սադզէր իր։

Օր մը կայիր է ի ժուվ, իրէյց բայարէքը բըլիշէյր. լիւիը ավիդարուն գուգարթիր, մուրաք գաիժկըդվիր, բառովը գուբըլիշա լԸց։ Իրէյց դէսէյր ղը, չայց ըր դյուշինմիշ իղէյր չըլարցէյր կիդանիր սարաթ, չվա՞ գաուլիր։

Մայք տրեր բադարչքը խայլիսա, գինչի ղրառով, հասգընու գդարդ չա՞ իւ։

Բայարէքը խուլխէյր, իրէյց գրառով գինչէյր, հարցուցէյր.— Օրչնուձ, չվա՞ իս ավիդայտն գուգարթար, ասն գուլայրըզ։

— Ա՜խ, իրկ՛ոց,— գուասի բառով,— էմ ցավ մէյնձ իւ։

— Աաու, չա՞ իւ։

— Ծձ մը դանար, ալիվ ըննու քի, սադդավ, մուրաք ադարթմ քը մուրաք գըլմանիր, հայըր ավիդարունը գուգարթայրըզ, մուրաքըս ցաժդըդվիր, էմ Ծձ ինգաս մայքս, անուր Նամար լացա։

— Վայ, անիձուձ, գիմաք քը Ծձ ըլմանցաւիր ղէս։

Գուխուդդի ղէ գիգիսին սարթիցի։

3 (35). ՊԱՌԱՎԻ ԱՅՏՆ ՈՒ ԵՐՑՅԻ ՄՈՐՈՒՔԸ

Մի պառավ ունեցել է մի այծ, իր միակ հույսն այդ այծն է եղել, բայց այդ այծը սատկել էր։

Մի օր պառավը դնում է եկեղեցի, երեցն արդեն պատարագն սկսել էր. երբ սկսում է ավետարանը կարդալ, մորուքը շարժվում է. պառավն սկսում է լաց լինել։ Երեցը տեսնում է նրան. ինչքան մտածում է չի կարողանում հասկանալ լացի պատճառը։

Միտքն է դնում պատարագի վերջում կանչել պառավին, իմանալ ի՞նչ է նրա դարդը։

Պատարագը վերջանում է, երեցը պառավին կանչում է, հարցնում.— Օրհնա՛ծ, ես որ ավետարան էի կարդում, դու ինչո՞ւ էիր լաց լինում։

— Ա՜խ, երե՛ց,— ասում է պառավը,— իմ ցավը մեծ է։

— Ասա՛, ի՞նչ է։

— Մի այծ ունեի, արևը բեղ լինի, սատկեց, մորուքը ճիշտ քո մորուքին էր նման, երբ ավետարան էիր կարդում, մորուքը շարժվում էր, իմ այծը միտքս ընկավ, դրա համար էլ լաց եղա։

— Վա՛յ, անիծվա՛ծ, ուրեմն ինձ քո այծի՞ն նմանեցրիր։

Պառավին եկեղեցուց դուրս է քշում։

4 (36). ՄՕԼԼԱՆ ԻԼԱՆ ԲՕԲ

Օուր մը մօլլան իլան բՕր բալաբաւր գուրթուն լիլվէլ։ Գըհաանէլն քուփլէլն դէլա, մօլլան գաւի տալ ի բՕր։— Բուբ, իս օղր ավիդաբՕն գաբթացՕձ իմ, ադվիր ա մայքիս լիհՕձ իմ։

—Է՛,—գաւսը բՕբ,—չա՞ կրՕձը միր ավիդաբՕնը։

— ԿրՕձը, քի մըլ իրիսէյա քը գըղարգին, միգալն ա իլլը։ Ես ալը գՕղիմ կիդանուր ըսահը, քը՝ սալդը։ Ադիր համուր բըր գարգիմ քիլ սիլսամ։

— Ընդ ադվիր քաջրբը,— գաւսը բՕբը։

Շաղ, մօլլան գըշըղը սիլան բաբՕն իրիսէյն, բՕբ գիւլը գմիգալ իրէյա։ Միգալ իրիսէյն ա գըշըղը սիլան, բաբՕն իրիսվՕնք գըգարմըրին։

Ցադ վաղըաը բՕբ բիրդան մը գըցավնը, դըպըռնը մօլլայն ըրգը վիդօց, գաւսը.— Մօլլա՛, միր ավիդաբնայն միգալ իրիան ա ըսիէնց կրՕձը,— գաւսը, գմօլան գիսկը ճայր։

4 (36). ՄՈԼԼԱՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ

Մի օր մոլլան ու աներտերը դնում են զբոսանքի։ Հասնում են կամրջին, մոլլան տերաևրյին ասում է.— Տերտե՛ր, ես ձեր ավետարանը կարգացել, լավ էլ մի տես պահել եմ։

— Է՛,— ասում է տերտերը,— ի՞նչ է գրված մեր ավետարանում։

— Գրված է, որ եթե մի երեսիդ խփեն, մյուսն էլ դեմ արա։ Ես էլ ուզում եմ իմանալ՝ ճի՞շտ է, թե՝ սուտ։ Դրա համար էլ քեզ մի ապտակ եմ տալու։

— Շա՛տ լավ, փորձիր,— ասում է տերտերը։

Մոլլան՝ շրթիկ, մի ապտակ է քաշում տերտերի երեսին, տերտերը մյուս երեսն է շուռ տալիս։ Մյուս երեսին էլ է ապտակ քաշում, տերտերի երեսները կարմրում են։

Այդ ժամանակ աներտերն խոհույն կռանում է, բռնում մոլլայի ղույգ ոտքից, ասում.— Մոլլա՛, մեր ավետարանի մյուս երեսին էլ այսպես է գրված,— ասում է, մոլլային շուրը դցում։

5 (37). ԽԼՒԻՒՔ ԽԶՄԱԹԿԱՐԸ

Դըղինօ, չըղինօ, ըրդը հարՕսդ մուրթ, ա՛ղունք դունանուն իրինց իզմաթկարիրը։

Միգ հարըսդէն խզմաթկարը շո՛ւդ խիլա՛ք ղըննօ, միդալէնը՝ չէ։

Ուր մը միդ հարՕսդը ղըդուվադէ միգալ հարՕսդը իսՕն։ Մաւա ղրպանօն, թուվըր-թուվըր ա-դըլվիրէն հիդը, աղվո՛ր մանօն ա՛լէ ղըղինօ մա-սէն։ Դուդին, ղըմին, խիլա՛ք խզմաթկարէն ալ-բա՛ն չը մարլուգը մանօն ղըֆիտա։

Խլա՛ք խզմաթկարը զա՛սի տալ դիրը.— Աղա, աղո՛, Մուսա լիռը ծալն իչա՛ծ ի։

Աղան ուսուլըմ գըհանէ գուսուդըսօլը, գըսըրիէ ղմարաքը, շո՛ւդ գըխընդօ, քի էր իզմաթկարը աղվո՛ր խուսքիրա՛մ հասկացրցո՛ծ էր։

Վաղըա մը սօնրա միդալ հարՕսդն ա՛լէ գըզալ-վադէ։ Ան գէր իզմաթկարը գըդանա ի քանաֆը, դիրինք մարթ շըլըսիլա՛ համար, գա՛սը էր.— Դի-սա՛ւր, չո՛ւց խիլաք իր ան իզմաթկարը, լէվր լէմ մալվուգը մանօն գըֆիտա, ասօն ա՛լէ գա՛սէս. «Ա-ղա՛, աղո՛, Մուսա լիռը ծալն իչա՛ծ ի»։

Դադվադը գըննօ, հարՕսդը մասա գըպանօ, էնք ա՛լէ մանօն գըսընա, քէ էր իզմաթկարն ա՛լէ սրդաղ աղվո՛ր խուսքիր ասի էր։

Ուդիլը վաղըսը մախսուս մանօն ղըֆիտէ մալվուգը, իրդմակարը գըդիսնօ ղէ, ղըմասնօ գէր ա՛սիլա՛քը.— Աղո՛,— քանաֆէնը՝ մալվուգիտ։

Աղան կիդէնը գըսո՛ւօ, գըխ՛ուղօ գալրթօ։

6 (38). ՋԱՆԱՂԻՆՑ ԽՋԻՐԸ

Միր կէղը մարթ մը գար անՕնը Ջանաղինց Խչիր իր։ Ան նշանած իր։ Ուր մը ըրդը ֆըստան գառնէ, գըդանա նշանածվէն, ըմմա անո՛ր մարը չուհաչնա գէ։

Ջանաղինց Խիչիրը գալրթու էր մարքարէն քալը, գուսախ.— Ըրգը ֆըստան դարա ղէ՝ մէյը գո՛ւթնօ, միգալը՝ սավալի, ըմմը խալնանաս չու-հաչնա գը։ Խչիր իղիր դա գիր ղը։

Ղաբադալը խաքան ղադ դիրիվը չուդիր։

7 (39). ՄԻՍԱՖԸՐ ԶԸՊՈՆԻՐ

Սվիդիցէն ուր մը գուրթօ Քասա՛պ, գրո՛ւօ յանդիղը միսաֆըրըղը։

Սա՛րախդա՛ն գընննէ խարաղին գիշէ՝ անծրիվ գուկօ, տունը դիրուչը գա՛սէ.— Շրչէն, անծրիվ գուիշնա, տուրիցէ ընննիլը ուր չէ.— յէդ գուրառգա յաթաղէն միչը։

5 (37). ԽԵԼՈՔ ԾԱՌԱՆ

Լինում է, չի լինում, երկու հարուստ մարդ, նրանք իրենց ծառաներն են ունենում։

Մեկի ծառան շատ խելացի է լինում, մյուսինը՝ ոչ։

Մի օր հարուստներից մեկը հրավիրում է մյուս հարուստին իր տունը։ Սեղան են բացում, տեսակ-տեսակ ուտելիքների հետ լավ մածուն էլ է լինում սեղանին։ Ուտում, խմում են, խելոք ծառայի տիրոջ մորուքին մածուն է թուխվում։

Խելոք ծառան ասում է տիրոջը.— Աղա՛, աղա՛, Սուսա լեռը ձյուն է իջել։

Աղան աննկատ հանում է թաշկինակը, սրբում մորուքը և շատ ուրախանում, որ իր ծառան խելացի խոսքերով հասկացրեց։

Ժամանակ անց մյուս հարուստն էլ է հրավիրում։ Նա իր ծառային տանում է ղուպարան, որպեսզի մարդ չլսի, ասում է.— Տեսա՞ր, ի՞նչ խելոք էր այդ ծառան, երբ իմ մորուքին մածուն կթափվեր, դու էլ կասես. «Աղա՛, աղա՛, Մուսա լեռը ձյուն է իջել»։

Հրավերքը լինում է, հարուստը սեղան է բացում, ինքն էլ է մածուն դնում, որպեսզի իր ծառան էլ իրեն այդպիսի լավ խոսքեր ասի։

Ուտելու ժամանակ պիտոմբը մածուն է թափում մորուքին, ծառան տեսնում է, բայց մոռանում է ասելիքը,— Աղա՛,— ասում է,— պուպարանինը՝ մորուքիդ։

Աղան գետինն է մտնում, թողնում հեռանում։

6 (38). ՋԱՆԱՂԵՆՑ ԽԱՉԸՐԸ

Մեր դյուղում մի մարդ կար, անունը Ջանաղենց Խաչեր էր։ Նա նշանված էր։ Մի օր երկու հազուստ առնում, տանում է նշանածին, բայց նշանածը մայրը չի հավանում։

Ջանաղենց Խաչերը ընում է իր մորաքրոջ մոտ, ասում.— Երկու հադուստ տարա նրան՝ մեկը ընտիր կտորից, մյուսը՝ հասարակ, բայց հարսնացուի մայրը չհավանեց։ Խաչեր եղիր ու կուլ առիր։

Հայարտ ոսիսաղն այս տերևը չի ուտի։

7 (39). ՉՅՈՒՐ ՁԻ ՊԱՀԻ

Մի օր սվեդացին Քեսաբ է դնում, մնում է այնտեղ հյուր։

Առավոտյան վեր է կենում, լուսամուտից նայում՝ անձրև է դալիս։ տանտիրոջն ասում է.— Բարեկա՛մ, անձրև է դալիս, դուրս ելնելու օր չէ,— ու նորից պառկում է անկողնում։

Դունըդիրը տուրիցէ գըննէ, յիդ գըտառնօ, գա-
սէ.— Շբէն, Սվիդիան ալոդ է, աս անծրիվը մի-
ստֆըր չըպռնիր։

8 (40). ԽԼՈՒԻՔ ԴԻՆԳՈՒԻՆ ՋՈՒՂՈՒԲԸ

Գինգուն մը ացուձ ին.— Ծինէ մի մը րըր
գաւխինք՝ քը ախպարը. մուրթիս, յտ՝ դղուս, զմա
գըթատզօս գաւխին։

Գնալը չատուբ գուդս.— Դղուս թը գըզախիք՝
նաիրը գառնունում, մուրթիս թը գըգախիք՝ դէրը
գառնիմ, ախպար քիսը աշխատր չիգօ։

9 (41). ԽՈՒՐՋԷՑՆ ԹԱԲՒՕԹ

— Խուրծղ,— գասին խուրըզայն,— իլ լիդը քա-
մէլն ձուարք, գիր Նադուր գարիս, բաս չըրըր
քրքըրիս զկարէլն։

— Շկնդ ադվիր,— գասը խուլտուղ,— գլխուս-
դանում։

Գուրթը, գըննը քումէլն ի ձուարք, գուդը,
գըգիշդանը, գրրլիշա ի փիրդըդալլ։

— Խուրծղ,— գաւխին էլր,— չվա դուփիրգիս,
թամամն խուսդացօր։

— Զա շինիմ,— ճուդուբ դուդը խուրտուղ,—
թարիօթթիսնր։

10 (42). ՕԾ ԻԼԱՆ ՃԸՐԸ ԳՈՒՐՅՕՇ

Օծ իլան ճըրը գարյօշը իրգան ջամփըգ ար-
թիլ իքան, գըհատնէլն մինձ ճայր մը։

— Է՜,— գասը Օծ,— Գուրյուշ ախպար, չո՞ց
րըր տսնտլք դուս ճայր։

— Հիչ մը վաիիր, Օծ ախպար,— գասը Գուր-
յօշ,— իս գքիզ գանցընիմ։ Իլը գռնիէս։

Օծ գրվարադվա, գընսդտ գուրյօշէն գռնա-
գալն։ Գիշնէլն ի ճայրը։ Գրհատնէլն դիքըր ի ճը-
րէլն գիսգիէգ։ Օծ գրիաձը գԳուրյուշէլն զձամ-
գիէ։

— Ա՛խ, Օծ ախպար,— գասը Գուրյօշ,— չվա՞
գուիաձիս։

— Թաբիուաթթիսնը։

— Էյմ թաբիաթթն ալէ տըրգադը,— գասը Գուր-
յօշ, գիշնա ճրէլն յադիէ։

Տանտերը դուրս է դալիս, նայում, ևտ է դա-
լիս, ասում.— Բարեկա՜մ, Սվեդիան անամպ է,
այս անձրևը Ֆյուր չի պահի։

8 (40). ԽՆԼՈՔ ԿՆՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մի կնոջ հարցնում են.— Ձևկանից մեկին պի-
տի կախենք՝ եղբորդ, ամուսնուդ կամ տղայիդ
ո՞ր մեկին կթողնես, որ կախենք։

— Եթե տղայիս կախեք՝ նորը կունենամ, ևրև
ամուսնուս կախեք՝ ուրիշը կառնեմ. եղբոր նմանը
աշխարհում չկա։

9 (41). ԱՔԼՈՐԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

— Աքլո՜ր,— ասում են աքլորին,— բարձրա-
ցիր այդ դարու շեղջի վրա, կե՜ր, ինչքան սիրտդ
կուզե, միայն թե դարին չքցչես։

— Շա՜տ լավ,— ասում է աքլորը,— խոստա-
նում եմ։

Գնում, բարձրանում է գարու շեղջի վրա, ու-
ւտում, կշտանում է. սկսում է քցուչ անել։

— Աքլո՜ր,— ասում են նրան,— ինչո՞ւ ես
քցչում, չէ՞ որ խոստացար։

— Ի՞նչ անեմ,— պատասխանում է աքլորը,—
բնավորությունս է։

10 (42). ՕՁՆ ՈՒ ՋՐԻ ԿՐԻԱՆ

Օձն ու ջրի կրիան երկար ճանապարհ են
գնում, հասնում են մի մեծ գետի։

— Է՜,— ասում է Օձը,— Կրիա՛ եղբայր, ինչ-
պե՞ս պիտի անցնենք գետը։

— Մի՛ վախենա, Օձ եղբայր,— ասում է
կրիան,— ես քեզ կանցկացնեմ։ Բարձրացիր շա-
լակս։

Օձը դալարվում, նստում է կրիայի թիկունքին։
Իջնում են ջուրը։ Հասնում են ջրի մեջտեղը, օձը
կծում է կրիայի ծոծրակը։

— Ա՛խ. Օձ եղբայր,— ասում է կրիան, ին-
չո՞ւ կծեցիր։

— Բնավորությունս է։

— Իմ բնավորությունն էլ այս է,— ասում է
կրիան ու իջնում ջրի հատակը։

11 (43). ԿԱՒԸ ԻԼԱՆ ՕՂԴԸ

Օուր մը կալը դիսուվ քարվուան գաանալը չօ-լէն։

Կնիկց, պարիվ իդօր ասուց.— Ծղդ ախպար լօ՞ գուրթուս։

Օղդը ասուց.— Իս Հալուբ գուրթում, տօն լօ՞ գուրթուս։

Կալը ասուց.— Իս ալէ քի հիդ գուկում։ Զունքի դիսօ բրօօնգաս գախվուծ ի, բալքա իլնա դա՝ իս ուդիմ։

11 (43). ԳԱՅԼԸ ԵՎ ՈՒՂՏԸ

Մի օր գայլը սեսավ քարավանն անցնում է անապատով։

Գնաց ասաց.— Բարև՛, Ուղտ եղբայր, ո՞ւր ես գնում։

Ուղտն ասաց.— Ես Հալեպ եմ գնում, դու ո՞ւր ես գնում։

Գայլն ասաց.— Ես էլ քեզ հետ կգամ։ Տեսա որ շրթունքդ կախված է, գուցե ընկնի՝ ես ուտեմ։

12 (44). ՅԻՐԷՅՆ ԻԼԱՆ ԳԻՐԻԿ

Յիրէլն գուսրթը դուլր աշխուր՝ դիար դուրբաթ։

Գուգինչը գգիրիէյ գաւը.— Գիրըգ ախպար, իս գուսրթում դիար դուրբաթ։ Մուգաթ էդիր, թը գարիս, դէդիս պոնը։

— Մը վախնուր, ցիրին ախպար, դըքըր ուրուրուդ իլա գընումա։

— Գիրըգ ախպար, շի՞դ մը պացվէլր, գըքըրքըրվէլս։

12 (44). ՅՈՐԵՆՆ ՈՒ ԿՈՐԵԿԸ

Յորենը գնում է օտար աշխարհ պանգիսութեյան։

Կանչում է կորեկին, ասում.— Կորե՛կ եղբայր, ես գնում եմ օտար աշխարհ։ Ուշադի՛ր եղիր, եթե կտրող ես, ինձ փոխարինիր։

— Մի՛ վախենար, յորե՛ն եղբայր, մինչևիսկ իմ որեղենի բարակ շերտ կդառնամ։

— Կորե՛կ եղբայր, շա՛տ մի բացվիր, կքրքրվես։

Գ

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐ

1 (45). ՄՈՒՍԱ. ԼԻՈՒԸ

Թուրքերը հաշտում դանին, գումարիին գ՚ալիլը։ Մուսա մարգարէն գուռրիու ասսրձա, նգիվը գաարթու էհալին։ Ջուվը իգիք լառանչը։

Ադամ ասաց.— Գիխէ վարիցան ձավան։

Մուսա մարգարէն գիխիկ, գջամփունքը պացվիցուվ, էրկը քուվը ձուվ իղուվ, իհալին անցուվ։

Թուրքը իգիք, ճՓրը համան ժողվիցուվ, թուրքը խըխղվիցուվ։

Հալիրը իւուն տալը գիւղը։ Մուսա մարգարէն ասաց ասսրձա.— Աման, դէր, չա՞ րըր շինիմ, քաղցած ի դաս իհալին, մաք ըրք հաց գանէնք, գամրիլը հունը գո։

Ադամ ասաց.— Ըրք հացը բադաս-բադաս իրիվ, սաֆրա տրիք, թող ուղի իհալին։

Իհալին գիրուվ, գիշղացուվ, քառասն գամրիկ ալէ լիվցուվ։

Յանայր սօնրա Մուսա մարգարէն ասաց.— Ադամ, չա՞ րըր շինիմ, գաս իհալին ճարաւ իւ։

Ադամ ասաց.— Գիխէ վարիցան, ճՓրը թող ուկո, թըղ խըմի իհալին։

Մուսա մարգարէն գիխիկ վարացը, ճարաչալը ֆիտիկաւ, հալիրը խնդացէն, շուդ ճՓր իմիցէն, ըլվասաք իրէն, փաքլամիշ ըղան, ան դիղը արրիցան, Ադ դիղը Մուսա լիռը իղուվ։

1 (45). ՄՈՎՍԵՍԻ ԼԵՌԸ

Թուրքերը հարձակվում, մորթում են հայերին։ Մովսես մարգարեն գնում է աստծո մոտ, նրա ետևից ժողովուրդն է գնում։ Ծովը կտրում է նրանց առաջը։

Աստված ասաց.— Խփի՛ր գավազանը ծովին։

Մովսես մարգարեն խփեց, ճանապարհ բացվեց, ծովը երկփեղկվեց, ժողովուրդն անցավ։

Թուրքերը եկան, ջուրն իսկույն միացավ, թուրքերը խեղդվեցին։

Հայերը դուրս եկան մի հարթ տեղ։ Մովսես մարգարեն ասաց աստծուն.— Ո՛վ, տե՛ր, ի՞նչ ասեմ, ժողովուրդը քաղցած է, միայն երեք հաց ունենք զամբյուղի մեջ։

Աստված ասաց.— Երեք հացը տատան-պատան արեք, սեղան ղցեք, թող ժողովուրդն ուտի։

Ժողովուրդը կերավ, կշտացավ, քառասուն զամբյուղ էլ ավելացավ։

Դրանից հետո Մովսես մարգարեն ասաց.— Աստվա՛ծ, ի՞նչ անեմ, ժողովուրդը ծարավ է։

Աստված ասաց.— Գավազանդ խփի՛ր, թող ջուր գա, թող ժողովուրդր խմի։

Մովսես մարգարեն գավազանը խփեց, կարտչայ գետր հոսեց, հայերն ուրախացան, շատ ջուր խմեցին, լվացք արեցին, մաքրվեցին, այդտեղ էլ բնակվեցին։ Այդ տեղր կոչվեց Մովսեսի լեռ՝ Մուսա լեռ։

2 (46). ՄՈՒՍԱ. ՔԵՀԻԱՆ

I

Ոմր մը Մուսա քէհիէյն քովը լուրանջը մօտրիմ մը գակը, դնաը.— Ջէլա րըր րինիս, բըր դիրցընիս, խմցընիս, հիչ մարթի չըբըր կիդանը։

Մուսա քէհիան գնդ մօտրիմը դարեէլլ գինը, գըգիրցընը, գըհըմցընը, հիչ մարթա պանն չանիր։

Ադ մօտրիմը Մուսա քէհիէյն գնաը.— Անդիտք քանըզք մարթի դուրգր, լանիր խաբուր պիրիկա համուր։

Քանըզք ուրթօդ գակը գնաը, չի քանքէյն գալմանիւսւմ սիանիէյր, թը գըգընասն կը, բըր գանէյն կը։

2(46). ՄՈՒՍԱ. ՔԵՀԻԱՆ

I

Մի օր Մուսա քեհիայի մոտ մի մարդ է գալիս, ասում.— Ինձ պիտի պահես, կերցնես, խմցնես, ոչ ոք չպիտի իմանա։

Մուսա քեհիան այդ մարդուն ընդունում է. կերցընում-խմեցնում, ոչ ոքի ոչինչ չի ասում։

Այդ մարդը Մուսա քեհիային ասում է.—Անտիոք քաղաք մարդ ուղարկիր, այնտեղից ղուրեր բերեն։

Քաղաք գնացողը գալիս, ասում է, թե քաղաքապետր փախել է, եթե դանեն նրան, պիտի կախեն։

Երբ պարտ ու մուրթ Մուսա քէհյէն քծուվը բուվուած դըմբնը։

Երբ դարին առնդըրա փախուղ դալամաղամայն ագիւղ գակը։

Հարամաթ դալլալ կըզկնչըցընը, քի հէյն դալամաղաամ թըղ ակը, յէր քարսէյն թըզ նըսպաւ։

Մուսա քէհիէյն քծո բուվուած մօուրթ փախաած դալամաղաամ դընը, ան դաւը էյր.— Կընը քաղըք, խալալ ւծր վ. Հալամաղամ էյմ դաւն պը։

Մուսա քէհիան զուրթը քաղրք խաչուր դադը։

Քանգվին զուկաւն, ասլթանաթմա պղայմաղաամ գըզկանէյն։ Սալթանաթմա քարսէն նպըզյնիլը վաղըսը, մուրթ գըզուրդը Մուսա քէհիէյն ձիով պիրիւա համաւր։ Երքըր չադ վաղրաը՝ արմանաք, հախ չանանայնիր ձիով քաղըք մըննիլաւ։

Պէրիւին ասնրա գալամաղաամ գընպըզնը սապ գալթըղր, միպայնէյն ալը՝ սալտի գալթըղը, դաւը.— Ախ էմ ձինձ ախպարընը, իս երք դարա բուվիցա, ընձը չըհարցալց, քի իս ծուվ իմ, գալր մուրթ գադ չէր ինիր։

Գրաւանը աալ Մուսա քէհիան, գաւը.— Իս քի պէյլըքը հիչ չըմ մանանար, ապը՝ չաւըրըր գուղիս։

— Սաղլըղընա գուղիմ, գալամաղամ էֆէնդի,— դաւը Մուսա քէհիւն,— չվա՞ մինք չըրըրդարինք ջամփան իպրրին տրթիլ, երր տրթանք հալվանանայն ջամփին՝ դիսփիկին։ Միմանէ չվա՞ միք խտաներ չըրըր անընաք միր գիպըցեցց մէյչ։

Գալամաղաամը ասաց.— Կլնաչա, իչայնիս լիրվան, լաախր առնդա ջամփան իպրրին ալը երր տրթաք, խտաներնա ալը երր անընաք միր գիպըցէյց մէյչ, միր լնան ալը երր պինչըվա Մուսա լիս։

3 (47). ՄՈՒՍԱ ՔԷՀԻԱՆ

II

Վաղահիլէ Մուսա քէհիա անանանավ մարթ մի կիցիրի։ Ադ մուրթը իհալէյն շիդ էյլըք գաինիր Ուր մանէ չըֆլթչէյմը էքիղ քուիրէյն* քավը թաւրլան գուվանկիր։ Զաղմանէ խիխը քար մը գուպաղնվա։ Հիրէյն գափտխը գանիլուղ քար մը ղըշըրճա, հիրէյն պիրանը գապացվա։ Ցադ հլաորը իսկա գուղինօ։ Ադ չըֆլթչէյն գաչաշմըշ ընանօ, չա բըրշինէ դէյը։

Գուրթօ, իաւրաւր գուդօ Մուսա քէհիէյն։

Մուսա քէհիան գուկը զադ իսկէյն ըրք պիժէյն գինէ։ Պիժէյն մը գուդօ թաւրլալն դրյուչը, պիժէյն մը գուդօ չըֆթչէյն, պիժէյն մանէ էյնք գաանը։

Երեք տարի այդ մարդը Մուսա քեհիայի մոտ թաքնված է մնում։

Երեք տարի հետո, փախչող քաղաքապետին ներում է շնորհվում։

Կառավարությունը մտնեփիկ է կանչել տալիս, որ նախկին քաղաքապետը թող դա, իր աթոռը դրավի։

Մուսա քեհիայի մոտ թաքնված մարդը փախած քաղաքապետն է լինում, նա ասում է.— Գնա քաղաք, հայտնիր, որ քաղաքապետն իմ տանն է։

Մուսա քեհիան գնում, իմաց է տալիս։

Քաղաքից դալիս են, քաղաքապետին հանդիսավոր կերպով առնում։ Հանդիսավոր կերպով իր աթոռին բարձրացնելուց առաջ, քաղաքապետը մարդ է ուղարկում՝ Մուսա քեհիային ձիով իր մոտ բերելու։ Մինչ այդ՝ հայերն իրավունք չունեին ձիով քաղաք մտնելու։

Բերելուց հետո քաղաքապետը նրան նստեցնում է աջ կողմը, իսկ մյուսներին՝ ձախ կողմը և ասում.— Սա իմ մեծ եղբայրն է, ես երեք տարի մոտը թաքնվեցի, բայց նա չհարցրեց, թե ես ո՛վ եմ, ուրիշ մարդ այդ չէր անի։

Ապա դառնում է դեպի Մուսա քեհիան, ասում.— Ես քո լավությունը երեք չեմ մոռանա, պահանջիր ինչ որ ցանկանում ես։

— Ողջույ՛ն եմ ուղում, քաղաքապետ աեր,— ասում է Մուսա քեհիան,— ինչու՞ մենք քաղաքի մայթերով իրավունք չունենք քայլելու, որ փողոցի մեջտեղով՝ անասունների ճամփով պիտի քայլենք։ Մեկ էլ՝ ինչո՞ւ մեր եկեղեցիներում թաղիք չպիտի ունենանք։

Քաղաքապետն ասում է.— Գլխի՛ս, աչքի՛ս վրա, սրանից հետո մայթով կղնաք, ձեր եկեղեցիներում էլ թաղիք կունենաք, ձեր լեռն էլ պիտի կոչվի Մուսա լեռ։

3(47). ՄՈՒՍԱ ՔԵՀԻԱՆ

II

Ժամանակին Մուսա քեհիա անունով մի մարդ է լինում։ Այդ մարդը ժողովրդին շատ բարիք է անում։

Օրերից մի օր մի հողագործ էքիզ քուփրեին* մերձակա արտում վար էր անում։ Մեկ էլ խոփը մի քարի է դեմ անում։ Հորի բերանը մի տափակ քար է ըրջվում, հորի բերանը բացվում է։ Այդ հորի մեջ ոսկի է լինում։ Հողագործը շվարում է, թե ինչ անի։

Գնում է, Մուսա քեհիային իմաց է տալիս։

Ե՛ուսա քեհիան դալիս է, այդ ոսկին երեք բաժին է անում։ Մի բաժինը աալիս է արտի աիրոջը, մի բաժինը՝ հողագործին, մի բաժին էլ ինքն է վերցնում։

* Գյուղակ Բէթխաոէց գեպի հյուսիս-արևելք։

Դուխուրգէ խաբար հուքումաթէչին, քի հէյր մը պացվուձ ի, միճն ալէ իւկա ձըդնվուձ է։ Հուքումաթը գուկը. Մուսա քէհիան զէյր պիժայնը հուքումաթէչին գոդո։ Ջունքի խուղէչն միճին ընդուձ խաղինան հուքումաթէչնէ։ Միպալ տըհին ալէ թարլէն դրէյէ ամըր ղինը, քի զէյր աչկէչնը չըճթըչէչն ուդո, չունքի անուր սաքաթում հարսդցու։

Ցադիր իրվան հուքումաթը պադ դիղէչն անօն գըսընա Մուսա լիո, Մուսա քհհիչէն անունօվ. Հուքումաթէչն աղվիր խոմաթ ինիլէչն համուր։

4 (48). ԹԻԳՂՂԻԱ ԻԼԱՆ ՎԱՐՎԱՌԱՆ

Վաղըահլա գիցէյր փուխփայնաթ թաքավէր մը, ունցէյր ըրգը աչկէչն՝ Թիգղիէ իլան Վարվառան։

Ըրգը աչկայնն ա իդէչն շիդ խիլըք, առուձ բաշդուղ, Պրըսդէյս սիրուլ։ Դահմա ղըքարուղին առաըձը պանիր՝ առաըձը իրմէչն վահնիլ, Պրհսդէյս սիրիլ, Պրհսդիսէչն ուրէնքնէչն պոնիլ։

Ամդիր համար ալը իրից գօվ՝ թաքավէր չըր սիրիր դիրինք։ Ամ ըրգը աչկայն գըփահիչէն գանին։ Թաքավէր ամըր դինը ղնանիլ պիրիլ դիրինք, այար թը չըր ուկոն, կուդղուիլ, սրանիլ դիրինք։ Ցադ վաղըսը ամըն քայր դահմ դըփահա։

Թիգղիէ գըփահա գորթը տալ սըպ Սարկէյա։ Ցանդիէղ գը մինձ, մէլթ մաղարուամ։ Ցառանճ ըր մընա ի մաղարան՝ դուշմօն գընահանա։ Ավըլմալըլ գրփոը զծիովալն, գըվհրցընը ղհչվէչն տալ իրգանք, գրհրընարը ասըձա. «Ցա, զէյր առգուձ, սու՛ս ղհհկէյս, միսկիր ղէյս զուշմանուալս ծուառա»։

Միմալը գըառուղը կիպալն, շայս մը գինընա, գըփագը զմաղարէչն առաու։ Ամմա լառանճըր նըքսը մընա՝ կլառհս գըմընը ըրգը շոէչն արասալն։ Ղալր շայս գիննա, Թիգղիէ գըմընը լըրգը շոէչն արասալն, գըչարալամըշ ընը քարիրէչն լարասին փրթիլա համուր, ամմա չըգար։ Ցառանճ ցավին արցունք գըծոա լիչօց, լանիր առնդա քրդուանք մը փայդահ գինը, դիքըր առնդա վիրընննէչնը գուղգը։

Դիքըր համը արցընքը, քրդընքը, վիրընը խառինվուձ գաթըննիր գըճիթէչն շըոէչն բանդէչն իրվան տալ մաղարէչն տաուա գըրըսառն դրղ ալմասաը հադընիր։

Վարվառան գըփահա տալ մէլթ խանդիէ, սուլուղ աա գաձը ջըկնավիրը մաղարիէմ՝ շոհն պացուձ։ Մաղարիգօն մէլչ առնգը ըրք բադհհնըգ, ուրգ խուրուն։ Վարվառան գըննա լադ մաղարիէ, գաղնը թփէյր գըքիշը լառճալվ։

Դուշմօն ղրղննա Զվարվառան, գըդանա դառնալ իրվան, ամ ինչ ղրղնվուձ է, ամ ինչ ղրղնվուձ է։

Կառավարութեանը հայտնում է, թէ մի հոր է բացվել, մեջն էլ ոսկի է գտնվում։ Կառավարութիւնը գալիս է, Մուսա քհհիան իր վերցրած բաժինը պետութեանն է հանձնում, որովհետև հողի մեջ գանվող գանձը պետութեանն է պատկանում։ Մյուս կողմից էլ կարգագրում է արտի աիրոջը, որ իր աղջիկը հողագործին տա, որովհետև նրա շնորհիվ ինքը հարստացավ։

Այդ պատճառով կառավարութիւնն այդ աեղի անունը դնում է Մուսա լեռ, Մուսա քհհիայի անունով, կառավարութեանը լավ ծառայելու համար։

4(48). ԹԵԿՂԵՆ ՈՒ ՎԱՐՎԱՌԱՆ

Ժամանակին լինում է մի կուսակալ թագավոր, ունենում է երկու աղջիկ՝ Թեկղեն ու Վարվառան։

Երկու աղջիկներն էլ լինում են շատ խելոք, ասսվածապաշտ, քրիստոսասեր։ Նրանք միշտ ասսվածային բաներ կին քարոզում՝ աստծուց վախենալ, Քրիստոսին սիրել, Քրիստոսի օրէնքները պահել։

Դրա համար էլ իրենց հայր թագավորը նրանց չէր սիրում։ Այդ երկու աղջիկները տանից փախչում էին։ Թագավորը հրամայում է նրանց գտնել, բերել, իսկ եթե չգան, նրանց հալածել, անդամ սպանել։ Այդ ժամանակ ամէն մի քուրը մի կողմ է փախչում։

Թեկղեն փախչում գնում է դեպի սուրբ Սարգիս։ Այնտեղ մի մեծ, մութ քարայր կար, նախքան քարայր մտնելը՝ թշնամին հասնում է։ Աղջիկն անմիջապես ձեռքերը սարածում, աչքերը երկինք հառում, աստծուց խնդրում է. «Ո՜վ, տեր աստված, հոգիս ա՛ռ, մի գցիր ինձ թշնամու ձեռքը»։

Հանկարծ դետինը ցնցվում է, մի ժայռ է ընկնում, փակում քարայրի դուռը, բայց մինչև նրան մտնելը՝ ղլուխը մնում է երկու ժայռի արանքը։ Երբ ժայռն ընկնում է, Թեկղեն մնում է երկու ժայռի արանքը, չանում այդ արանքից դուրս պրծնել, բայց չի կարողանում։ Յավից, նախ արցունքներն են ժայթքում աչքերից, հետո մի քանի կաթիլ էլ դուրս տալիս, վերջում արյունն է հոսում։

Մինչև հիմա էլ արցունքի, քրտինքի և արյան խառնուրդի կաթիլները քարացել, մնացել են դեպի քարայրի դուռը ասնող ժայռի պատին ու պսպղում են ալմաստի հատիկների նման։

Վարվառան փախչում է մի մութ ձոր, որի ձախ կողմում կար մի ճղնավորի քարայր՝ ժայռի մեջ բացված։ Քարայրում կար երեք գմբեթավոր պատրհան, իսրանի նման։ Վարվառան մանում է այդ քարայրը, (մուտքի առաջ) քաջում կաղնու թփեր։

Թշնամին դանում է Վարվառային, տանում հոր

դէյն քօ։ Դօդ չալրըր գինը, ֆայտա չինիր, քրիս-դյանլըղին վաղ չուկուր։

Ցան վաղըտը զըպոնալն ը զըձձէյց, գըխըրը-դալն ը չամփըննալն, քաւրիրէյն իրվան։ Ան գի-նաւ գնաը.— Ըրք խուրուն գը. ըրք աստուձ գը՝ հայր աստուձ, վօրդի աստուձ, հոգին սուրբ։

Ագիէնց ա գընընը հիկկէյն,

Ամըն աղըզ, լէլփըր զանննաք ցօխ գուրթայն, ղընննալն լաղ մաղարիէ, լումըն խուրընը լառճիվ խուաչ մը զըհանալն, գուրթայն լիրից պօն։

5 (49). ՄԻՐ ԽԱՒԼԱԴԸ

Միր դիղը հաչի հաբիբ անօն մուրթ մը գու-աբրիր։

Ադ մուրթը էվլադ-օվլաթ չունցիրը, ամա գուաունը ղալրը չուճախնա, ղումինձընը։ Ցաղաւր սօնրա գուչադնը միր կլէղը։

Ուր մը ադաւր բաուվը գուրթօ մաչէն ուլի-րէյն համուր ընձրոգա գդրիլա համուր, գուդիսնօ մէչէյն միչը ճախցուց քօր մը գօ։ Գուուկու կլէղը, գուհաւթիր։

Մարթաքը գուրթուն, գուդնին, գութամըղին ղադ ճաղուցքը՝ իրինց գընննու շաղսիր։

Ցադ Բիթիասը միգ յանը՝ Ուհան Օսկէն պէր-նը* մուդը։ Ցադ դիղը Շըբըլղէյն** իլուն գօ։

6 (50). ՁՈՒՎԷՑՆ Ա.ՇԿԱՑՆ

Թաքաւվէյր մը ունցէյր ըրք դղը ու ըրք ման-դուլ պաղլը ձուվէն իղգէյր։ Ադ պաղլին գուկուղ-նըվա։ Թաքաւվէր ամըր գուինը դղուց՝ ուրթիլա բիհիլա ղպաղլին։

Մինձ դղան գուրթը բակլըլըդը, ամա անջաղ դըկր գիսկիշէյր գըաիմանը, սունդրա քաւն գաու-նիէկը, գըրաոգա դիկըր լայու Աաբաիդան գիմը, գիշը, քի մըգ մանդուլ պաղլին կուղցըվծաը։

Միգաննօր ուրթանչը դղան գուրթը բակլըլը-դը։ Ան ալը, տրըղ էյր մինձ ախպուար, ղըբաոգա Աաբաիդան գիշը, գըդանա՝ միգալ մանդուլ բաղ-լին ա կուղցըվծաը։

Նօբ գուվը բաղաձ դղայն։ Աս դղան, չըրաոգիլա համուր չիգաձ մադա գըգդրը, գըսնուայր ացղ բաղօո մը։ Մադէյն ցավին դղան չըրաոգայր։

Գիսկիշիրին սունդրա ձուվին գընննին ըրք աշկէյն գուկուն ղպաղլին կուղնէյլ։

* Բիթիասի մուտ Հովհան Ոսկեբերանի մենաստանը։

** Շըբըլղէյն աղբյուրը։

5(49). ՄԵՐ ՀԱՋԻ-ՀԱԲԻԲԼԻՆ

Մեր տեղում Հաջի Հարիբ անունով մի մարդ էր կենում։

Այդ մարդը երեխա չէր ունեցել, բայց ուրիշ երե-խաներ էր վերցրել ու մեծացրել։ Դրանից հետո մեր գյուղը բազմացավ։

Մի օր նրա պատավը գնում է անասո ուլերի համար անձակտ կտրելու, տեսնում է անտառում մի ջրաղացքար կա։ Գալիս է գյուղ, պատմում։

Մարգիկ դնում, գտնում, մաքրում են այդ ջրա-ղացը՝ գարձնում իրենց սեփականը։

Այդ (ջրաղացը) Բիթիասի մի կողմն է Հովհան Ոսկեբերանի* մոտ։ Այդ տեղը կա և Շըբըլղեյնը**։

6(50). ԾՈՎԻ ԱՂՋԻԿԸ

Մի թագավոր ունեցել է երեք տղա, և ծովեղերին երեք ածու բակլա։ Բակլան գողանում են։ Թագա-վորը հրամայում է տղաներին, որ դնան բակլան պահպանեն։

Մեծ տղան գնում է պահակության, բայց մինչև կես գիշեր հալիվ է գիմանում, հետո քունը տա-նում է, քնում մինչև լույս։ Առավոտյան ղարթնում, տեսնում է, որ մի ածուի բակլան գողացել են։

Մյուս օրը միջնեկ տղան է գնում պահակու-թյան։ Նա էլ մեծ եգրոր նման քնով է ընկնում։ Առավոտյան նայում, տեսնում է, որ մյուս ածուի բակլան էլ են գողացել։

Հերթը հասնում է փոքր աղային։ Այս աղան, որպեսզի չքնի, ճկույթ մատը կտրում է, վրան մի կտոր աղ ցանում։ Մատի ցավից տղան չի քնում։

Կեսգիշերն տնց ծովից դուրս են գալիս երեք աղջիկ, դալիս են բակլան դողանալու։

Ադ աշկընէլր գըննուն իրգան րօլլա, գձձըս-
դնք քըրքըրօաձայնըր գուվդինէլն իրվան, գը-
հասնէլն դիկըր թուփըզնայն։

Բըղդագ դղան գընուջըմը աշկընիրէն իրվան, գըքնթը ղմիէ գձձէլց։ Միգալնէլն գըփախէլն, գինննէլն ի ձնվ։

Ադ դղան ղադ աշկայն գըգանա իգնն, գաղը մարէլն գնսը, քի ղադ աշկէլն էլր գնագ բըր առնը։

Հարսնաք ղինին։

Ադ աշկայն չխուսէլր։ Գասնա էփիլէ վաղըա, գունընը ըրք դղըք։ Ջալըր գինը մօրթ խուսըցնիլա ղգնա, ֆայդա չինիր։ Գրպգընը գչուջըղնայն միէ, գըտնա մօրը ձնգէլն, գըկընէլղը։ Գընա չբխուսէլր։ Միգալ չուջօղ ալը գըպռնը, գըտնա ձնգէլն բըր գընը, գինգծն սայրու չըտիմանուր, մաղդան գչիլգը, իսգին թէօա մը գլքաւլա պիռնին։

— Ա՜խ, մուրթ,— գնսը գնա,— չվա՞ զադ իրիր։ Իս տուս բըր ուրթուալմ ձն, լէլմ գադէլն-մօր քն, շիդ պուն բըր պիրալմ, գանի բըր ինալմ գքիզ։ Արը գուր զէլս ի ձնվ։

Մօրթ գաունը գչուջաուղ, գգնա, գուրթուն ի ձուվիգիր։

Գնալը գնալ.— Համօ իս գուրթում, ալար քալչ մը սունղրա ձն, թը գըփըրփըրը հիլը ընծը, իս գուկում։ Ջիէ, ալար քանը գօլ մը իղ ձօ թը գըգարմըրը, կիգայէլր քի էլմ գնդ, էլմ մուար ղէլս գընօձին։ Օ՛ո գչուջաուղ, իլ կնօ ի գնն։

Գնալը գիշնա ի ձնվ, գուրթը։ Գալչ մը սունղըրա ձն քանը գօլ մը դիղ գուգարմըրը։ Մօրթ գընաագընը, քի աշկընէլն գնդ-մուար գընօձէլնզլ, քի չվա սօն սուրիցը ճնայիր։

Մօրթ գաունը գչուջաուղ, գուրթօ ի գնն։

7 (51). ՋՈՒՎԸ ՄՕՐԹ

Վաղաիլա միր տա՝ ձուվըղիր գուրթուն իղէլր խէլր ինէլլ։ Օր մը գուրթուն միգ քանը օր գըմընուն, լիդ գըտառնուն։

Ակըզ մալը գուրթուն ի խէլր։ Բուխըն իհալին ձօվ գիշնա։ Տիրգուակ վաղլստ ըրք գանննաք գըգագվէլն, գուրթուն մաղարալմ լառաիվը գըրըդ գըվառին։ Ջուղ մալը ձուվին գընուր գըրըլդուղ մօրթ մը, բուխըն մագիրու ձաձալըվուձ, ամմա բուխըն միրգագ, անատան դուղմա։ Ադ մօրթ գուկը, գըձնգը լագ գրաիգէլն լառճալվ։

Ադ գանննաք գրըգ գաունին, գըքարին յագ մարխօուն իրվան։ Էլնք ալլը աուսի գաունը ղղրէգ, գըլընննա էլնք լէր իրվան։ Գանննաք ղըվաիիին, օմ սիէ իսանձօգ մը գաունը, գընննին գուրթուն իհալսլն քօու։ Ադ ձուվը մալրվն ալը գաունը իսանձօգ մը, իժգըգիլը—իժգըգիլը գուրթը գանննէլց լիղըսաս։

Այդ աղջիկները բարձրահասակ էին, մարմնի վրա թողած արձակ վարսերով, որոնց ծայրերը հասնում էին մինչև կրունկները։

Փոքր տղան հարձակվում է աղջիկների վրա, նրանցից մեկի մազերից բռնում։ Մյուսները փախչում, ընկնում են ծովը։

Այդ տղան աղջկան ասնում է տուն, հորն ու մորն ասում, որ այդ աղջկան պիտի առնի։

Հարսանիք են անում։

Ադջիկը չի խոսում։ Բավական ժամանակ է անցնում, այդ աղջիկն ունենում է երկու տղա։ Ամուսինը ինչ անում է, որ կինը խոսի, բան չի դուրս գալիս։ Երեխաներից մեկին բռնում է, դնում մոր ծնկների վրա, մորթում։ Կինը չի խոսում։ Մյուս երեխային էլ է բռնում, դնում ծնկներին, որ մորթի, կնոջ սիրտը չի դիմանում, սիրտը խառնում, ետ է տալիս, մի ոսկի թաս է բերնից ընկնում։

— Ա՜խ, մարդ, – ասում է կինը,— ինչո՞ւ այդ արեցիր, ես դեռ պիտի դնայի ծով, իմ հոր ու մոր մոտ, շատ բան պիտի բերեի, քեզ հարբուսացնեի։ Արի՜ ինձ տար ծով։

Մարդը վերցնում է երեխային ու կնոջը, դնում նավեղը։

Կինն ասում է.— Հիմա ես դնում եմ, եթե քիչ հետո ծովը փրփրի, սպասիր ինձ, ես կգամ։ Իսկ եթե մի կալի չափ տեղ կարմրի, իմացիր, որ հայրս ու մայրս ինձ մորթեցին։ Վերցրու երեխային և դնա առուն։

Կինն իջնում է ծովը, սուզվում։ Քիչ անց ծովը մի կալի չափ տեղ կարմրում է։ Մարդն իմանում է, որ ծնողները մորթեցին աղջկան, թե՝ ինչու ես դու դուրսը մնացել։

Մարդը վերցնում է երեխային, դնում առուն։

7(51). ԾՈՎԻ ՄԱՐԴԸ

Ժամանակին մեր կողմերը ծովափ էին դնում մատաղ անելու։ Մի օր գնում էին, մի քանի օր մնում, վերադառնում։

Մի օր էլ դնում են մատաղի։ Ամբողջ ժողովուրդը ծով է իջնում։ Երեկոյան կողմ երեք կին բաժանվում, գնում են մի քարայրի առաջ կրակ վառում։ Հանկարծ ծովից մի սարօրինակ մարդ է դուրս դալիս, ամբողջովին մաղով ծածկված, մորից՝ մերկ։ Այդ մարդը դալիս չոքում է կրակի առաջ։

Կանայք կրակ են վերցնում, լցնում այդ մարդու վրա։ Մարդն ինքն էլ է բռով կրակը վերցնում, լցնում իր գլխին։ Կանայք վախենում են, ամեն մեկը մի խանծող է վերցնում, ելնում գնում ժողովրդի մոտ։ Այդ ծովի մարդն էլ է վերցնում մի խանծող, թափահարելով գնում է կանանց հետեից։

Դանդաղ գըփախչէին գուրթուն բաքճն քօու ան ալը գուրթը լիլիտվըներէն։ Բօր գըդըռնա դադ գանդաղ ու դադ գըրըլդուահ, գնաը — Ջա՞ բըր չինիմ իս համը, օշնուձնա, լսադիէդ դուն դանդաղ, հարոնիր, աշկընիր, չուշըղնա, չո՞ւյ բըր ինիք համը։

Մանգարէն լուճալվ թիղընալմ գիցուձ իղէլը։ Բօր գըպիրըցընը գամպը բարօն մը, գադ ձուվը ժօուրթ գըգաբըցընը լադ թիկընէչն։

Սարախդան իհալին գընը գիշը, գըդըռնա, քի բարօն աա տրգան ի՞ատարաօձ, գարօձը, ձուվը մօրթ չիգը, թուղալը կանգէլը։

8 (52). ՊՕ ԱՇԿԷՆԸ

Գուգինօ, չուգինուր՝ անալըղ մար մը։ Ալ գունընօ դդա մը իլան աշկէն մը։ Ադունք գունունուն ուլգընիր։

Ադ աշկէնը իլան դդան ամըն աւր ուլգընիրը էրգուքում արծիլ դուդանէրին։

Ուր մալէ ուլգիգունը մէլը գուգուրավա։ Անալըղ մարը գուաաէ.— Ցօ՞ գօ ուլգիգունը մէլը։

Աշկէնը իլան դդան գուաահին.— Դաւրսըվիցուվ։

Մարը գուաէ.— Ի՞ը աըրգադ է, քալր իլան ախպար ուշէդ կացիք, պաավիցուք ուլալը, գըքըր չըվընաք գէ՝ չըմընաք ի գօն։

Քալրը իլան ախպարը գուրթուն ուլալը պաավիլ

Մօթը ինդուվ, աշկէնը Ցուից մաշէն միչը։ Ուլալը չվընդուվ, բաշլից լուցը։ Ախպարը գինչից.

— Ուլալը վընդո՞ւր, քուրօ՛կ։

Քալրը չըգարցուվ խուսիլ, անճախ.— Վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ,— գունիր։

Ախպարը բաշլից քալրը պաուվիլ, ամմա ան պօ մը ուարծուձ իր։

9 (53). ՂԱԹԸՐՋԸ ՆԻՋԱՄԸ

Ղաթըրջը Նիգամը փաս պիրիլ կլացէլը, ճիրէն գուկուդրվա ասալ խանդէկ։

Նիղամը ըրգը ծօռ պացէլը աղութէլը, ացէլը.— Ցա՜, սուրփ Սարքէս, պունիր ճիրէն, թըզ չիննա։

Ըմը ճիրէն գուուրթու։ Աուրի Աարքէս չըպրունէգը, չունքի սուրի Սարքէս չիկօ, աւրի Սարքէս հանքալօթ ի։

Ղաթըրջը Նիգամը լէփըր գաիշի ճիրէն դըկըլդըրվա, սուրի Սարքէս չըպըռնէ, չիգլարով գուաահ.— Փախէ՛, սուրի Աարքէս, համը գուհնուս ճիրէն վըրքը, գուբըխշէս։

Կանայք փախչում, գնում են քահանայի մոտ, նա էլ հեռևներից քահանան տեսնելով այդ կանանց ու այդ մերկ (մարգուն), ասում է.— Ես հիմա ի՞նչ անեմ, օրհնածնե՛ր, այստեղ կանայք, հարսներ, աղջիկներ, երեխաներ կան, ի՞նչ անենք հիմա։

Քարայրի առջև մի թղենի է լինում։ Քահանան կանեփի պարան է բերել տալիս ու այդ ծովի մարգուն թղենուց կապում։

Առավոտյան վեր են կենում, տեսնում, որ պարանն առաջվա պես փաթաթված, կապված է, իսկ ծովի մարգը չկա, թողել գնացել է։

8(52). ԲՈՒ ԱՂՋԻԿԸ

Լինում է, չի լինում՝ մի խորթ մայր։ Նա ունենում է մի տղա և մի աղջիկ։ Նրանք ունենում են ուլիկներ։

Այդ աղան ու աղջիկը ամեն օր երկուսով ուլիկներին տանում էին արածեցնելու։

Մի օր էլ ուլիկներից մեկը կորչում է։ Խորթ մայրն ասում է.— Որտե՞ղ է մի ուլիկը։

Աղջիկն ու աղան ասում են.— Կորավ։

Մայրն ասում է.— Ը՛ը որ այդպես է, քույր ու եղբայր շուտ գնացեք, փնտրեք ուլիկը, մինչև չգտնեք՝ տուն չմտնեք։

Քույրն ու եղբայրը գնում են ուլիկը փնտրելու։ Մուտն ընկնում է, աղջիկը մնում է անտառի մեջ։ Ուլիկը չի գտնում, սկսում է լաց լինել։ Եղբայրը կանչում է.— Ուլիկը գտա՞ր, քույրի՛կ։

Քույրը խոսել չի կարողանում, հաղիվ.— Վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ,— է անում։

Եղբայրն սկսում է քրոջը փնտրել, բայց նա բու էր դարձել։

9(53). ՋՈՐԵՊԱՆ ՆԻՋԱՄԸ

Ջորեպան Նիղամը գնում է փայտ բերելու, ջորին գլորվում է գեպի ձորը։

Նիղամը երկու ձեռքը պարզում է, աղոթում.— Ա՛յ, սուրբ Սարգիս, բռնիր ջորին, թող չընկնի։

Բայց ջորին գնում է։ Սուրբ Սարգիսը չի բռնում նրան, քանի որ սուրբ Սարգիս չկա, այն հեքիաթ է։

Ջորեպան Նիղամը, երբ տեսնում է, որ ջորին գլորվում է, սուրբ Սարգիսն էլ չի բռնում, բացականչում է.— Փախի՛ր, սուրբ Սարգիս, հիմա կմնաս ջորու ասակ, կճղմվես։

Ուր մը ասդուձ գուանսէ Քրիսդուսէն.— Կնձ իշէ յոն մամլաքաթը չա՞ գո։

Քրիսդուսը գուրթու գիշէ՝ գաննաքը իլուք ին, քան ղմարթաքը։

Գուկու գուանսէ.— Գաննաքը իլուք ին, քան ղմարթաքը։

Ասդուձ գուանսէ.— Տօն բըր ուրթուս հուն, լարսօն ղարտ բըր ծուս, բըր գարքըվէս, բըր հասդընուս ձավ իլուք ի, սօնրա լիդ գուկուս։

Քրիսդուսը կնուց, գարքըվիցուվ։

Էր գնալը ամըն ուր գուանսէր.— Պանիլ կնօ։

Քրիսդուսը դուպանիր, գուկիր պանիլին, գնալը գուանսէր.— Կնօ, ճՕր պէ։

Քրիսդուսը գուրթիր, ճՕր գուպիրիր։

Գնալը գուանէր.— Կնօ, գուղպը ֆիւէ։

Քրիսդուսը գուրթիր, ղուղպը գուֆիտիր։

Ուր մալէ Քրիսդուսը աչիզ ծնաց, լարսօն գարէն չրևալիուձ տղից ուրթիլ ասդըձու քուվը, ամմա Քրիսդուսը ադ գինգանը լիրմինը դղա մը դունիր։ Ձադ դղան մաքդաբը դուդուրգիր։ Ադ դղան գօկտօր գուսուրվիր։

Քրիսդուսը ասուց էր դղէն.— Թը հիվանա մը գըզկոնուս, ասար իս կ՚իսէն գալնուձ իմ, հուն արէ, չա՞բըր գուղիս իլլաձ գօր՝ գըճուղնօ։ Ագար իս վդուցը լիրվան գալնուձ իմ՝ չըճուդնուր։

Դղան իշից դադէն խասքիրը, իլավ կնաց։ Տլդադ շուդ մարթ ճուղցՕց։

Ուր մալէ թաքավուրէն աշկէլնը հիվանա իր։ Թաքավուրը գինչից տլալ գօկտօրնէն, հիչ մէլը պան մը չըգալցավ հասգընիլ։ Գինչիցէն Քրիսդուսէն դղան։ Դղան ասուվ պչանթան, կնաց իշից, թաքավուրէն աշկէլնը բասդուձ ի, սմմա էր գուդը վդուցը լիրվան գալնուձ ի։

Դղան ասուց.— Հիվընտէն կլօխը լանտէն իլիդիք։

Ըրք դդրէձ ուշէդ իգէն, իլլիցէն թաքավուրէն աշկընէն կլօխը Քրիսդուսէն տէն։

Դղան իշից աս ղուրգը լիդ վդուցը ուէն գալնուձ ի, չա՞ բըր չինի, կնուց Քրիսդուսէն լանգաճը ասուց.— Էմ մարը գուկօ, ուշէդ փախէ։

Քրիսդուսը փախուվ, թաքավուրէն աշկէլնը ճուղցուվ։

Թաքավուրը ասուց.— Տօն ագվար հասգընող գօկտօր իս, լասկէ ոօրա օմբրօտ նահկուտը բըր աբրէս էմ սալան, ղէմ աշկէնն ալէ քիդ բըր ադամ։

Մի օր աստված ասում է Քրիստոսին.— Գնա՛, տես այն աշխարհում ի՞նչ կա։

Քրիստոսը գնում, տեսնում է, որ կանայք խելոք են, քան տղամարդիկ։

Գալիս ասում է.— Կանայք խելոք են, քան տղամարդիկ։

Աստված ասում է.— Դու պիտի գնաս այնտեղ, երեսուն տարի պիտի մնաս, պիտի ամուսնանաս, պիտի հասկանաս ո՞վ է խելոք, հետո վերադառնաս։

Քրիստոսը գնաց, ամուսնացավ։

Իր կինն ամեն օր ասում էր.— Գնա՛ աշխատիր։

Քրիստոսն աշրատում էր, գալիս աշխատանքից, կինն ասում էր.— Գնա՛, ջուր բեր։

Քրիստոսը գնում էր, ջուր էր բերում։

Կինն ասում էր.— Գնա՛, ադրը թափիր։

Քրիստոսը գնում էր, աղրը թափում։

Մի օր էլ Քրիստոսը դժգոհից, երեսուն տարին լրացած, ուզեց գնալ աստծո մոտ, բայց Քրիստոսն այդ կնոջից մի տղա ուներ։ Այդ տղային դրպրոց էր ուղարկում։ Տղան բժշկություն էր սովորում։

Քրիստոսն ասաց իր տղային.— Եթե մի հիվանդ տեսնես, ու ես գլխին կանգնած լինեմ, այնտեղ արի, ի՛նչ դեղ ուղում ես տուր՝ կլավանա։ Բայց եթե ես ոտքերի կողմը կանգնած լինեմ՝ չի լավանա։

Տղան լսեց հոր խոսքերը, վեր կացավ գնաց։ Այդպիսով շատ մարդկանց բուժեց։

Մի օր էլ թագավորի աղջիկը հիվանդ էր, թագավորը կանչեց բոլոր բժիշկներին, ոչ մեկը ոչ մի բան չկարողացավ հասկանալ։ Կանչեցին Քրիստոսի տղային։ Տղան վերցրեց պայուսակը, գնաց, տեսավ. թագավորի աղջիկը պառկած է, բայց իր հոյրը կանգնած է ոտքերի կողմը։

Տղան ասաց.— Հիվանդի գլուխը մյուս կողմը շրջեցեք։

Երեք կորիճներ շտապ եկան, շրջեցին թագավորի աղջկա գլուխը Քրիստոսի կողմը։

Տղան տեսավ, որ այս անգամ էլ հայրը ոտքերի կողմն է կանգնել։ Ի՞նչ անի։ Քրիստոսի ականջին ասաց.— Էմ մայրը դալիս է, շո՛ւտ փախիր։

Քրիստոսը փախավ, թագավորի աղջիկն առողջացավ։

Թագավորն ասաց.— Դու լավ հասկացող բժիշկ ես, սրանից հետո ողջ կյանքդ իմ պալատում կապրես, իմ աղջիկն էլ քեզ կտամ։

11 (55). ԼՕՐՃ ԲԱԲԴՕՆ ԽԱՉԱՆԻԼԸ

Ուր մը նպուճ իր լօրճ բաբդոնը սաղմոսը քովը տրուած դուղնէջմըշընէր։

Մթնօղ վախնալու կիղացէ մը լոիք քովը, լդնօր էր պարիվ. վէ ասուց.— Կնվո՛րկ աղա, խաչանէ մէր խձձօն, ան դուրսըվուճ է։

Բարօյը ասունց նիխիկընիլ սաղմոսը առուվ խպուց, ասուց ադ մարխօն.— Տանոզ գունէ՞ս։

Մուրթը ասուց.— Հա՛։

— Դօ՛ր, լշխիմ տանօյիտ։

Տանօյը առնիլին սունդնա խպուց ղէ, սաղմոսէն լըրվան խոէր, րըլէշխուվ գարթիլը։ Դիրիվ մը սաղմէցին գարթիլին սունգրա, փագից գտաննօյը, իդնօր դըրուչը։

Ասուց.— Զըպանուս ղէ, դըքըր ածը չըղընուք։

Աս մուրթը տանօյը առնիլէն սունգրա, մամնունյատ բալան ուրնց, կնուց։

Միղալ սաբախդան հուվըվէն հիդը բարտըուր լիոը կացէն։ Շուդ, քէչ իլվիլէն սունդրա, դիսուն տիմվընէն շըրէն լէրվան նպուճ է թիթի մը։ Քէչ մը մըդգըցուն, լադ շրէն դուգը, դիսուն իրինց պատվուճ ածը, նպուճ է էր ձնանուճ ուլէն քուվը։ Օյը գըթաբըլվա մուրը քուվը։

Ինդութունը ադ մուրթը տանօյը իպուց։ Թիբէյը համան վիրունց իվար վնդից։

Հուվէվը սըվըլուց, թիբէյը վախութունը փախուվ։ Երկուքում կացէն, դօյը վիրցըցէն։ Իձձօն դիրը խալվաթլըգ իդնօր հուվըվէն։

Մէյը միգալին մանունյաթում պիժնըվիցուն Դիրը օյը առուվ կնուց։

Հուվէվը ունցուճ հայվաննէն մախիլաթ իդուվ։

Աս մասալան լավիլին սունդրա, ինդէն մէյը իհալին լօրճ բայդօն քուվը գուկիր՝ խաչանըցընիլ։

11(55). ԼՈՒՐԹ (ԿԱՊՈՒՏԱՋ) ՊԱՊԻԿԻ ԽԱՋԱԿՆՔԵԼԸ

Մի օր Լուրթ պապիկը սաղմոսն իր մոտ դրած մտածում էր։

